

Հաշվետվություն

Պատմության և մշակույթի անշարժ
հուշարձանների պահպանությանն առնչվող
օրենսդրական հենքի ուսումնասիրման,
վերլուծության և առաջարկությունների մշակման ծրագիր



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

COUNTERPART
INTERNATIONAL



Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով՝ ուրբանլաբ Երևան ՀԿ-ի միջոցով:

Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակներին՝ ուրբանլաբ Երևան ՀԿ-ին և ծրագրում ներգրավված անձանց, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:



ՈւրբանԼաբ Երևան - Քաղաքաշինության ժողովրդավարացման ինստիտուտ ՀԿ
www.urbanlab.am /// *we think*

Ծրագրի ղեկավար՝
Սարհայր Պետրոսյան

Իրավական հարցերով խորհրդատու-փորձագետ՝
Նարեկ Աշուղաթոյան, Լեգալլաբ ՓԲԸ, www.legallab.am

Քաղաքաշինական քաղաքականության հարցերով խորհրդատու-փորձագետ՝
Բորիս Քոչարյան, bmkocharian@mail.ru

Ծրագրի համակարգող՝
Աննա Ակդարյան, ուրբանլաբ Երևան ՀԿ, www.urbanlab.am

Թարգմանիչ (անգլերեն-հայերեն)՝ *Աննա Հովհաննիսյան*

Թարգմանիչ (հայերեն-անգլերեն)՝ *Հեղինար Մելքոն Մելքոնյան*

Հաշվետվության առանձին գլուխներում արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են դրանց հեղինակներին:

Հաշվետվությունում արտահայտված մտքերի ամբողջական կամ մասնակի օգտագործումը թույլատրվում է պատշաճ հղման դեպքում միայն: Այն պետք է ունենա հետևյալ բովանդակությունը. “Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման, վերլուծության և առաջարկությունների մշակման ծրագրի հաշվետվություն, ուրբանլաբ Երևան, Երևան, 2012”:

© ուրբանլաբ Երևան, 2012թ.

Բովանդակություն

1. Ներածություն	3
Հիմնախնդրի ձևակերպում և հիմնավորում	3
Ծրագրի էությունը	5
Ուսումնասիրության սահմանները	7
Հաշվետվության կառուցվածքը	7
Հեղինակային և հարակից իրավունքները	8
2. Առկա օրենսդրության ուսումնասիրություն	10
2.1. Օրենսդրական դաշտի ընդհանուր բնութագիրը	10
2.2. Միջազգային և եվրոպական մակարդակների օրենսդրական փաստաթղթեր	12
2.3. Օրենքներ	19
2.4. Ենթաօրենսդրական այլ փաստաթղթեր	32
2.5. Այլ ուսումնասիրական աշխատանքներ	44
3. Առաջարկություններ	48
3.1. Ընդհանրական բնույթի առաջարկություններ	48
3.2. Օրենքների վերաբերյալ	59
3.3. Ենթաօրենսդրական փաստաթղթերի վերաբերյալ	65
4. Ամփոփում	70
Հայերեն	70
Անգլերեն / English	77
Հղումներ	82
Հավելվածներ	86

1. Ներածություն

Հիմնախնդրի ձևակերպում և հիմնավորում

Մեր օրերում ավելի ու ավելի շատ է խոսվում մեզ շրջապատող մարդածին միջավայրում (built environment) տեղի ունեցող փոփոխությունների մասին: Դրանք հիմնականում վերաբերում են հանրային (կանաչ) տարածքներին և մշակութային ժառանգության պահպանությանը: Դրանք հատկապես սուր են արտահայտվում Երևան քաղաքի կենտրոնում, որտեղ կենտրոնացված են քաղաքի պատմական զարգացման արդյունքում ձևավորված պատմական միջուկն ու համաքաղաքային (մայրաքաղաքային) հիմնական ենթակառուցվածքները: Քաղաքաշինական գործունեությունը, որպես մարդածին միջավայրում տեղի ունեցող փոփոխությունների ընկալման ու կառավարման ոլորտ, փորձում է պատասխանել ընթացող գործընթացների վերաբերյալ առաջացող մտահոգություններին ու հարցերին՝ միաժամանակ առաջադրելով լուծումներ դրանց համար: Սակայն ակներև է, որ այդ գործընթացում շոշափելի արդյունքներ չեն արձանագրվում: Թե՛ հասարակության, թե՛ մասնագիտական հանրույթի շրջանակում շարունակվում են հնչել մտահոգություններ շրջապատող միջավայրում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ: Դրանք բարձրաձայնվում են սկսած 2000-ական թվականներից, սակայն միայն 2010 թվականին Մոսկվա կինոթատրոնի ամառային դահլիճի քանդման որոշմանն ընդդիմացողներին հաջողվեց, առաջին անգամը լինելով, հակազդել այդ գործընթացներին:

Դրան հաջորդող շրջանում ձևավորվեցին մի շարք քաղաքացիական նախաձեռնություններ (Հանրապետության հրապարակի ու Աֆրիկյանների տան պահպանության, Արամի 30 և այլն), որոնց ավելի ուշ միացան կամ դրանց հիման վրա ձևավորվեցին հասարակական կազմակերպություններ և նոր միավորներ: Ստեղծված իրավիճակում նկատելի դարձան միջազգային ու եվրոպական կազմակերպությունների առջև Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների, ազգային մակարդակով օրենսդրության, դրանից բխող փաստաթղթերի ու իրականում տեղի ունեցող գործընթացների միջև մեծաթիվ անհամապատասխանություններ: Դրանք հիմնականում վերաբերում են հանրության մասնակցությանն ու պետական վերահսկողության ապահովմանը, շահագրգիռ կողմերի միջև դերերի ու պարտականությունների ոչ հստակ բաշխմանը:

Հատկապես մշակութային ժառանգության պահպանությանը վերաբերող խնդիրները հանդիսացան **ուրբանլաբ Երևանի** հասարակական սեկտորում հայտնվելու սկզբնապատճառներից մեկը: Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում նման հարցերը դիտարկել է ոչ միայն զուտ որպես ժառանգության պահպանություն, այլև կարևորել դրանք իբրև որակյալ քաղաքային միջավայրերի ստեղծման ու զարգացման նախապայման: Բնակավայրերի կայուն զարգացման համար համապատասխան դաշտ ստեղծելու նպատակով փորձ արվեց դիտարկել քաղաքաշինության ամբողջ ոլորտում առկա իրավիճակը, և վեր հանել առկա հիմնախնդիրները: Սակայն ոլորտի լայն ընդգրկման պատճառով, ինչպես նաև նախնական դիտարկումների արդյունքներից ելնելով, պարզ դարձավ, որ հատկապես մշակութային ժառանգության պահպանությանը միտված օրենսդրական համակարգը զիջում է ոլորտի մնացած ուղղություններին: Դրա ցայտուն ապացույցն է այն հանգամանքը, որ 1998 թվականին ընդունված “Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրերի պահպանության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետև՝ Օրենք) կատարվել է միայն մեկ փոփոխություն և այն էլ միայն մեկ հոդվածում, մինչդեռ նույն թվականին ընդունված “Քաղաքաշինության մասին” օրենքը ծավալուն փոփոխություններ է կրել վեց անգամ:

Ելնելով այս իրավիճակից, ինչպես նաև ծանոթ լինելով ոլորտում առկա բազմաթիվ խնդիրներին, որոնց մի մասը նաև արդյունք են օրենսդրական, ենթաօրենսդրական ու նորմատիվային բացերի, նախաձեռնվեց **Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման, վերլուծության և առաջարկությունների մշակման ծրագիրը** (այսուհետև՝ Ծրագիր): Դրա նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների (այսուհետև՝ Հուշարձաններ) պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման և վերլուծության հիման վրա՝ մշակել ոլորտին վերաբերող օրենսդրական և ենթաօրենսդրական առաջարկություններ:

Ծրագրի կարճատև չորս ամիսների ընթացքում դիտարկվել է Հայաստանի Հանրապետությունում գործող Հուշարձանների պահպանությանն առնչվող օրենսդրական դաշտը, ինչպես նաև միջազգային առկա փաստաթղթերը՝ դրանցում հատկապես կարևորելով արդեն ստանձնած պարտավորությունները:

Այս հաշվետվության մշակման համար նախապես մշակվել է մեթոդիկա, որը ներառում է տարբեր դիսցիպլիններ ներկայացնող անձանց հետ քննարկումների արդյունքում խնդիրների ու լուծումների բազմակողմանի դիտարկումը: Հատկապես կարևորվել են կիրառական նշանակություն ունեցող առաջարկությունները, որոնք վերաբերում են օրենսդրական ու ենթաօրենսդրական փաստաթղթերին և դրանցից բխող ընթացակարգերում փոփոխություններին: Դրանք չեն հավակնում լուծել ոլորտում առկա բոլոր խնդիրները, սակայն կարող են հիմք հանդիսանալ ոլորտում բարեփոխումներ իրականացնելու, ինչպես նաև առկա խնդիրների լուծմանը միտված ավելի ընդգրկուն քննարկումներ անցկացնելու համար: Այն ներկայացվելու է մասնագիտական հանրույթին ու ոլորտին հարող շահագրգիռ բոլոր կողմերին՝ փորձելով ապահովել դրանց կիրառման համար անհրաժեշտ նախադրյալներ:

Ծրագրի էությունը

Ծրագրի առաջին փուլում իրականացվել են (10 շաբաթ տևողությամբ) **ուսումնասիրական աշխատանքներ**, որոնց շրջանակում տեղի են ունեցել հետևյալ գործողությունները.

- առցանց հարցումների են անցկացվել ոլորտի մասնագետների և քաղաքացիական ակտիվ հանրության շրջանակում (արդյունքները ներկայացված են հավելված 1-ում),
- մշտադիտարկվել են վերջին տարիների ընթացքում մամուլում ժառանգության պահպանությանը վերաբերող հրապարակումները (արդյունքները ներկայացված են հավելված 2-ում),
- ոլորտում ակտիվ քաղաքացիական նախաձեռնությունների անդամների հետ անցկացվել են մտքային գրոհ-քննարկումներ՝ վերհանելու համար առկա խնդիրները (արդյունքները ներկայացված են հավելված 5-ում),
- գույքագրվել և դասակարգվել են Հայաստանի տարածքում գործող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության և, առհասարակ, քաղաքաշինությանը վերաբերող օրենսդրական ողջ հենքը, այդ թվում օրենքներ, ենթաօրենսդրական փաստաթղթեր, կարգեր և այլն, ինչպես նաև ստանձնած և ստանձնելիք միջազգային ու

Եվրոպական պարտավորությունները (դիտարկված փաստաթղթերի ամբողջական ցանկը ներկայացված հավելված 3-ում),

- բացահայտվել են միջազգային ու եվրոպական համարժեք փորձի կիրառման հնարավորությունները:

Դրան հաջորդած **վերլուծական փուլի** (տևողությունը՝ 5 շաբաթ) ընթացքում տեղի են ունեցել թվով չորս մտքային գրոհներ, որոնց ընթացքում փուլ առ փուլ քննարկվել և վերլուծվել են նախկին ուսումնասիրության արդյունքները, որից հետո առաջադրվել են դրանց լուծմանը միտված առաջարկություններ: Դրանք հիմնականում բաժանվում են երեք խմբերի.

1. հայեցակարգային խնդիրներ, որոնք բխում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից և ստանձնած միջազգային ու եվրոպական պարտավորություններից,
2. օրենսդրական առաջարկություններ, որոնք միտված են հուշարձանների պահպանության մայր փաստաթղթի՝ Օրենքի ոգու համապատասխանեցման և կատարելագործման, ինչպես նաև մի շարք այլ օրենքների հետ համատեղ դիտարկմանը,
3. ենթաօրենսդրական առաջարկություններ, հատկապես շեշտադրելով դրանց արտացոլումը քաղաքաշինական (ծրագրային) փաստաթղթերի մշակման գործընթացներում, ինչպես նաև լիազորությունների արդյունավետ բաշխման ու կիրառման ուղղությամբ մի շարք առաջարկություններ:

Ձեկույցի արդյունքները ներկայացվելու են հանրությանը 2012 թվականի դեկտեմբեր ամսին, որի տպագիր օրինակները առաքվելու են ոլորտին առնչվող պետական մարմիններին՝ մշակույթի, քաղաքաշինության, էկոնոմիկայի (տուրիզմի զարգացման պետական լիազոր մարմին) նախարարություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, մասնավորապես՝ Երևանի քաղաքապետարանին, մասնագիտական հանրությանը (Հայաստանի ճարտարապետների միությանը, Վերականգնող ճարտարապետների հայկական ասոցիացիային, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանին և այլն): Էլեկտրոնային տարբերակը տեղադրված է լինելու առցանց, ազատ ներբեռնման հնարավորությամբ www.urbanlab.am/prd_report.pdf հղմամբ:

Ուսումնասիրության սահմանները

Ուսումնասիրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության առկա օրենսդրության և միջազգային ստանձնած պարտավորությունների շրջանակում պատմության ու մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրերի պահպանությանը միտված օրենսդրական ու դրանից բխող նորմատիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը և ծրագրում ներգրավված անձանց մասնագիտական կարծիքի հիման վրա առաջնահերթությունների հստակեցմամբ առաջարկությունների մշակումը: Այն չի հավակնում լուծել ոլորտի առջև ծառացած բոլոր խնդիրները, սակայն իր տեսակի մեջ լինելով առաջինը, ենթադրաբար, ունենալու է շոշափելի ազդեցություն ոլորտի զարգացման գործընթացներում:

Հաշվետվության կառուցվածքը

Հաշվետվության առաջին գլխում ներկայացվում է ծրագրի էությունն ու ընդհանուր նկատառումներ Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության, մասնավորապես պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, ինչպես նաև հուշարձաններ ներառող քաղաքաշինական միջավայրի պահպանության և օգտագործման առկա իրավիճակի վերաբերյալ:

Երկրորդ գլխի ենթագլուխներում ներկայացվում են առկա օրենսդրության ուսումնասիրական աշխատանքները: Դրանք են միջազգային ստանձնած պարտավորությունները (հեղինակ՝ Սարհատ Պետրոսյան), գործող օրենքները (հեղինակ՝ Նարեկ Աշուղաթոյան), ենթաօրենսդրական փաստաթղթեր (հեղինակ՝ Բորիս Քոչարյան), ինչպես նաև ուսումնասիրական աշխատանքների ընթացքում կատարված այլ գործողությունների (հարցումներ և մշտադիտարկում) արդյունքները:

Երրորդ գլխում առաջարկվում են օրենսդրության զարգացմանը միտված մի շարք առաջարկություններ, համընդհանուր քաղաքականության իրականացման ուղղությամբ, օրենսդրական և ենթաօրենսդրական մի շարք փոփոխություններ, որոնք հաշվետվության հեղինակների կարծիքով նպաստելու են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված և միջազգային ու եվրոպական իրավական ակտերով (կոնվենցիաներ, խարտիաներ

և այլ) ստանձնած պարտավորությունների իրացմանը: Հավելվածների տեսքով ներկայացված են ծրագրի ուսումնասիրական աշխատանքների ընթացքում տեղի ունեցած գործողություններին վերաբերող ամբողջական տվյալներ: Մասնավորապես.

1. Ժառանգության պահպանությունը Հայաստանում, առցանց հարցումների արդյունքները,
2. Մամուլի մշտադիտարկան արդյունքները,
3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկը,
4. Պաշտոնական հարցումներ և այլ աշխատանքային փաստաթղթեր:

Առանձին հավելվածներով ներկայացված են նաև ծրագրի շրջանակում նախատեսված թարգմանական աշխատանքների արդյունքները: Հաշվի առնելով միջազգային ու եվրոպական մակարդակներում առկա փաստաթղթերը թարգմանվել են թվով չորս փաստաթղթեր՝

5. Կայուն եվրոպական քաղաքների վերաբերյալ Լայպցիգի խարտիա,
6. ՅՈՒՆԵՍԿՈ-ի Առաջարկությունը պատմական տարածքների պաշտպանության և ժամանակակից դերի վերաբերյալ,
7. ՅՈՒՆԵՍԿՈ-ի Առաջարկությունը պատմական քաղաքային լանդշաֆտի վերաբերյալ՝ ներառյալ սահմանումների բառարան,
8. ՅՈՒՆԵՍԿՈ-ի Ճարտարապետական և քաղաքաշինական միջազգային մրցույթների վերաբերյալ ստանդարտ կանոնակարգ:

Դրանք կարող են օգտագործվել ոլորտին վերաբերող տարաբնույթ ուսումնասիրությունների ու վերլուծությունների համար:

Հեղինակային և հարակից իրավունքները

Սույն հրատարակության բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակին՝ ուրբանլաբ Երևան ՀԿ-ին:

Հաշվետվության 2.3 (էջեր 19-31) և 2.4 (էջեր 32-41) գլուխներում արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են դրանց հեղինակներին՝ համպատասխանաբար Լեգալլաբ ՓԲԸ-ին և Բորիս Քոչարյանին:

Հաշվետվությունում արտահայտված մտքերի ամբողջական կամ մասնակի օգտագործումը թույլատրվում է պատշաճ հղման դեպքում միայն: Այն պետք է ունենա հետևյալ բովանդակությունը.

“Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման, վերլուծության և առաջարկությունների մշակման ծրագրի հաշվետվություն, ուրբանլաբ Երևան, Երևան, 2012”:

2. Առկա օրենսդրության ուսումնասիրություն

2.1. Օրենսդրական դաշտի ընդհանուր բնութագիրը

Հայ ժողովրդի նյութական ժառանգության պահպանության երաշխավորը սկսած 1991 թվականից Հայաստանի Հանրապետությունն է: Մասնավորապես Անկախության Հռչակագրի [1] 7-րդ կետում սահմանված է.

“Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով...”:

Այդ պարտավորությունը նաև ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ [2], որի 11-րդ հոդվածում ասվում է.

“Պատմության եւ մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության եւ պաշտպանության ներքո:”

Հայաստանի Հանրապետությունում հուշարձանների պահպանությունը իրականացվում է 1998 թվականին ընդունված “Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրերի պահպանության մասին” [15], ինչպես նաև 2003 թվականին ընդունված, “Պետական սեփականություն համարվող եվ օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին” [16] օրենքներով:

Պետական լիազորված մարմինը Մշակույթի նախարարությունն է [25], որը համաձայն կառավարության կողմից հաստատված կանոնադրության՝ նպատակ ունի. “մշակութային ժառանգության ստեղծմանը, պահպանությանը, պաշտպանությանը, ուսումնասիրությանը, օգտագործմանը, հանրահոգակմանն ու ծառայությունների մատուցմանը նպաստել” և որն իր առջև դրված խնդիրների իրականացման համար՝

4) մշակում է Հայաստանի Հանրապետության պատմամշակութային ժառանգության հաշվառման, պահպանության, օգտագործման ու համալրման սկզբունքները, կանոնները, չափանիշները (նորմատիվներ) եւ չափորոշիչները.

5) հաստատում է հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը եւ սահմանում դրանց պահպանության ռեժիմը.

6) Հայաստանի Հանրապետության կառավարություն ու Միավորված ազգերի կրթական, գիտական եւ մշակութային կազմակերպություն (ՅՈՒՆԵՍԿՕ) է ներկայացնում առաջարկություններ Հայաստանի Հանրապետության պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններն ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքները համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության պատմության եւ մշակույթի հուշարձանների պետական ցուցակում եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկերում ընդգրկելու վերաբերյալ.

...

9) իրականացնում է պետական սեփականություն համարվող մշակութային արժեքների, թանգարանային, գրադարանային հավաքածուների կառավարումը, պետության անունից գնման նախապատվության իրավունքը.” [23]:

Լիազորված մարմինը նշված գործողությունների համար իր կազմում ունի “Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալություն” կառավարչական մարմինը, որն ստեղծվել է 2002 թվականին ՀՀ Կառավարության որոշմամբ [24], նախկին “Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության” հիմքի վրա:

Սակայն ինչպես ցույց տվեցին ուսումնասիրական աշխատանքների ընթացքում բացահայտված խնդիրները, ՀՀ Մշակույթի նախարարության՝ նշված գործառույթների իրացման ընթացքում առկա են մի շարք օրենսդրական ու կառավարչական հիմնախնդիրներ: Դրանց մասին ավելի մանրամասն կներկայացվի հաջորդ գլուխներում:

2.2. Միջազգային և եվրոպական մակարդակների օրենսդրական փաստաթղթեր Հեղինակ՝ Սարհապ Պեյրոսյան

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է մշակութային ժառանգությանը վերաբերող միջազգային և եվրոպական գրեթե բոլոր կոնվենցիաները: Մշակույթի և քաղաքաշինության նախարարությունների կողմից ստացված տեղեկանքների հիման վրա պարզվել է՝ որ 2012 թվականի հոկտեմբեր 1-ի տվյալներով Հայաստանի Հանրապետությունը ընդունել և գործողության մեջ է դրել հետևյալ կոնվենցիաները՝

Աղյուսակ 1. Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կոնվենցիաները			
Հ/Հ	Կոնվենցիայի անվանումը	Թվական	
		ընդունման	վավերացման
	ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիաներ		
1	Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիա	1954	1993
2	Մշակույթի և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիա	1972	1993
3	Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին կոնվենցիա	2003	2006
4	Մշակութային ինքնարտահայտման բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին կոնվենցիա	2005	2007
	Եվրոպայի խորհրդի կոնվենցիաներ		
6	Եվրոպական մշակութային կոնվենցիա	1954	1997
7	Հնագիտական ժառանգության պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (վերանայված)	1992	2004, ուժի մեջ 2005-ից
9	Հասարակության համար մշակութային ժառանգության նշանակության մասին Եվրոպայի խորհրդի շրջանակային կոնվենցիա	2005	2012
10	Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիա	1985	2009

Հաշվի առնելով մամուլի մշտադիտարկումները, կատարված առցանց հարցումները, ինչպես նաև ոլորտի ակտիվ մասնագետների ու հանրային ներկայացուցիչների հետ անցկացված մտքային գրոհ-քննարկումները բացահայտվել է, որ Հայաստանում հատկապես վտանգված են մշակութային ժառանգության, մասնավորապես պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ճարտարապետական և քաղաքաշինական տիպին վերաբերող այն կառույցները, որոնք գտնվում են քաղաքային կամ գյուղական (ուրբանիզացված) տարածքներում: Այդ իսկ պատճառով Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային ու եվրոպական պարտավորություններից սույն դիտարկման ժամանակ առավել ուշադրություն է դարձվել հիմնականում երկու փաստթղթերի՝ Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության [12] և Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիաներին [13]:

Առաջին փաստաթղթի ներքոհիշյալ կետերում կան զգալի հակասություններ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական և ենթաօրենսդրական փաստաթղթերի հետ:

Հոդված 10, կետ 3-ում ասվում է՝ *“Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է որդեգրել պահպանության ընդհանուր քաղաքականությունը, որը ճարտարապետական ժառանգության պահպանությունը, զարգացումը և ընդլայնումը կդարձնի մշակութային, բնապահպանական և կառուցապարման քաղաքականության հիմնական տարր”*: Ելնելով այս սահմանումից՝ քաղաքաշինությանը վերաբերող օրենսդրությունում հուշարձաններին վերաբերող բլոկը կարիք ունի շոշափելի զարգացման: Մասնավորապես՝ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքում այս նկատառումը պետք է գտնի իր արտահայտությունը և հանդիսանա ուղենիշ քաղաքաշինական գործունեության համար: Նման մեկ այլ ձևակերպում գոյությունի ունի նույն կոնվենցիայի 11-րդ հոդվածում, որտեղ մասնավորապես ասվում է. *“Յուրաքանչյուր կողմ, հարգելով ժառանգության ճարտարապետական և պարմական բնույթը, պարտավորվում է նպաստել... առիթը ներկայանալու դեպքում, հին շենքերի վերաշահագործմանը”*: Այս դրույթը ևս ոչ միայն չի իրագործվում մասնավոր ու հանրային գործունեության շրջանակում, այլև հանրային (պետական կամ տեղական) ծրագրերի շրջանակում, երբ հնարավոր է վերագործարկման կամ վերակառուցման շրջանակում վերակենդանացնել շինությունը:

Նույն կոնվենցիայի հոդված 5-ում ասվում է՝ *“Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է արգելել պահպանվող որևէ հուշարձանի ամբողջական կամ մասնակի տեղափոխումը, բացի այն դեպքի, երբ այդպիսի հուշարձանի նյութական պահպանությունը հրամայաբար պահանջում է այն*

տեղափոխել: Այս դեպքում, իրավասու մարմինը անվտանգության անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկի՝ հարմար վայրում հուշարձանի ապամոնտաժման, տեղափոխման և վերականգնման համար”: Այս հոդվածը ոչ միայն հակասության մեջ է նախկինում Երևանում ու Հայաստանում տեղի ունեցած հուշարձանների տեղափոխման արատավոր երևույթի հետ, այլև հակասում է Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին 1998 թվականին ընդունված (2003 թվականին փոփոխված) օրենքի հետ: Մասնավորապես՝ օրենքի հոդված 21-ում ասվում է. “Հանրապետական եւ տեղական նշանակության հուշարձանների տեղափոխումը, հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխումը կարող են կատարվել միայն բացառիկ դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվությամբ...”: Այս սահմանումը էականորեն հակասում է Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության հետ, այլև ՅՈՒՆԵՍԿՈ-ի առաջարկությանը:

Կոնվենցիայի հոդված 9-ում խոսվում է պատժամիջոցների մասին, մասնավորապես. “...Այդ միջոցները, անհրաժեշտության դեպքում, կարող են ենթադրել, որ օրինախախտին պարտադրվի քանդել ապօրինաբար կառուցված նոր շինությունը, որը չի համապատասխանում գործող պահանջներին կամ վերականգնել պահպանվող արժեքի նախկին վիճակը”:

Այս դրույթն ազգային օրենսդրության մակարդակով էականորեն մեղմացվել է և ունի հետևյալ ձևակերպումը. “Հուշարձաններին կամ դրանց պահպանական գոտիներին վնաս պատճառած իրավաբանական եւ ֆիզիկական անձինք պարտավոր են վերականգնել դրանց նախկին վիճակը, իսկ վերականգնելու անհնարինության դեպքում հատուցել պատճառած վնասները (ընդգծումը հաշվետվության հեղինակների)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով” [15, հոդված 45]: Նման դեպքերի համար վարչական իրավախախտումների մասին օրենսգրքով առավելագույն տուգանք է նախատեսված նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի չափով (2012 թվականի տվյալներով 200’000.0 ՀՀԴ): Նույն օրենսգրքով նախատեսվում է օգտագործողի (ոչ սեփականատիրոջ) իրավունքների դադարեցում:

Հոդված 4-ի “դ” կետում նշվում է. “Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է խուսափել պահպանվող արժեքների աղավաղելուց, խարխլելուց, կամ քանդելուց: Այս հեռանկարով, յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է, եթե դեռևս արված չէ, իր օրենսդրության մեջ ներառել հետևյալ նախատեսող դրույթներ. ... դ) պահպանվող արժեքի հարկադիր օտարման

հնարավորություն”: Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին օրենքում նման պատժամիջոցներ կիրառվում են օգտագործողի նկատմամբ: Մասնավորապես օրենքի 38-րդ հոդվածում ասվում է. *“Հուշարձանն օգտագործողները, եթե իրենց կանխամտածված կամ ոչ կանխամտածված գործողություններով վնասել են հուշարձանի պահպանությանը, կորցնում են օգտագործման իրավունքը*”: Մեկ այլ ենթաօրենսդրական ակտ անդրադառնում է սեփականատիրոջ իրավունքների դադարեցմանը: Մասնավորապես Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգի 101 և 104 կետերում նախատեսվում է սեփականության իրավունքից զրկում, համապատասխանաբար *“Տարերային աղետների և այլ արտակարգ իրավիճակներում հուշարձանը Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու որոշմամբ (ըստ իրավասության) կարող է վերցվել սեփականատիրոջից՝ ի շահ Հայաստանի Հանրապետության՝ դրա արժեքը վճարելու պայմանով (ռեկվիզիցիա)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ընթացակարգով*” և *“...Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված և պահպանական պարտավորագրով նախատեսված պարտավորությունների պարբերաբար խախտման դեպքում*”:

Հաջորդ նկատառումը, նույն կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների շրջանակում վերաբերում է ֆինանսավորմանը: Հոդված 6-ում ասվում է *“Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է՝ ... 2. Անհրաժեշտության դեպքում ձեռնարկել հարկային բնույթի միջոցներ՝ այդ ժառանգության պահպանությանն աջակցելու նպատակով*,”: Չնայած, որ անգլերեն բնագիր տեքստում *“հարկային բնույթի միջոցները”* գրված է *“fiscal measures”*, որը հավանաբար ավելի ճիշտ է թարգմանել *“ֆինանսական խթանման բնույթի միջոցներ”*, սակայն ամեն դեպքում ոչ միայն չկա որևէ իրավական նորմ, դրույթ, այլև որևէ նման նախադեպ, որը միտված լիներ հուշարձանների պահպանության և օգտագործման այդ եղանակի կիրառմանը:

Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի 5-րդ *“Ընդհանուր միջոցառումներ”* հոդվածի *“ա”* կետում ասվում է՝ *“Յուրաքանչյուր Կողմ նախաձեռնում է ... օրենքով ամրագրել լանդշաֆտները, որպես հասարակական միջավայրի հինարար բաղադրամաս, մշակութային և բնական ժառանգության բազմազանության արտահայտություն և համանմանության հիմք*,”: Այս դրույթը

կարևոր է այնքանով, որ հուշարձանները և պատմական միջավայրերը հենց այդ նույն կոնվենցիայի շրջանակում պետք է դիտարկվեն որպես արժեքավոր լանդշաֆտներ: Սակայն այդ մասին նշումները իսպառ բացակայում են. այսօր Հայաստանում մեզ հայտնի չէ որևէ պահպանվող լանդշաֆտ, որը պահպանվում է որպես արժեքավոր լանդշաֆտ: Հիմնականում պահպանվում են բնության սակավաթիվ հուշարձանները, արգելոցները և պարկերը:

Հուշարձանների պահպանության շրջանակում իրականացվող գործընթացներում, որպես մարդածին միջավայրում իրականացվող փոփոխություն, առանձնակի կերպով կարևորվում է հանրության մասնակցությունը տարբեր փուլերում որոշումների ընդունման գործընթացներին: Չնայած նրան, որ այդ կապակցությամբ գոյություն ունի Օրհուսի կոնվենցիան, որին միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը սակայն առանձին օրենսդրության շրջանակում այդ փաստաթղթի սկզբունքների մատնանշումը կարող է շոշափելի դերակատարություն ունենալ գործընթացների բարեփոխման համար: Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի “ա” կետում ասվում է. “Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է իրազեկել բնակչությանը, մասնավոր կազմակերպություններին և իշխանության մարմիններին լանդշաֆտի արժեքի, նշանակության և փոփոխությունների (ընդգծումը Հաշվետվության հեղինակների) մասին”:

Հաշվետվության առանձին գլխով ներկայացվելու են ՀՀ տարածքում հուշարձանների պահպանության հիմնական իրավական փաստաթղթի՝ Օրենքի վերաբերյալ դիտողությունները, սակայն առանձնացնենք մի կարևոր նկատառում.

Արդեն իսկ Օրենքի վերնագրում հուշարձանների հետ միասին նշված է նաև *պատմական միջավայրի պահպանություն*, իսկ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում շարադրված է.

“Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի օբյեկտներն են”

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձաններն իրենց պահպանական գոտիներով, դրանց շրջապատող պատմական միջավայրը՝ կառուցապատումը, բնական կամ արհեստական լանդշաֆտը:”

Սակայն նույն օրենքում և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերում, ինչպես նաև քաղաքաշինության ոլորտը կարգավորող իրավական ակտերում այս դրույթների իրականացման համար չկան բավարար գործիքներ: Մինևնույն ժամանակ մեկ այլ հիմնական փաստաթղթում Հայաստանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում գրեթե բացակայում են պատմական միջավայրերի կարևորագույն տարրեր հանդիսացող

քաղաքաշինական միավորները, օրինակ՝ բակեր, փողոցներ, հրապարակներ, կառուցապատման դրվագներ և այլն: Մինչդեռ ՅՈՒՆԵՍԿՈ-ի կողմից 1976 թվականի նոյեմբերի 26-ին Նայրոբիում [8] և 2011 թվականի մայիսի 27-ին Փարիզում ընդունված Քաղաքների պատմական լանդշաֆտի առաջարկություններում [7] (տես համապատասխանաբար հավելվածներ 6-ը և 7-ը ոչ պաշտոնական թարգմանության համար) միանգամայն այլ սկզբունքներ են հրամցվում, այսինքն՝ կարևոր և առաջնային է ոչ թե առանձին հուշարձանի այլ քաղաքաշինական լանդշաֆտի՝ կառուցապատված միջավայրի պահպանությունը, նույնիսկ ոչ արժեքավոր շինությունների հետ միասին: Իհարկե այդ փաստաթղթերը պարտադիր կատարման ենթակա չեն, սակայն լավագույն ուղենիշ կարող են հանդիսանալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության բարեփոխման համար:

Մասնավորապես մի քանի կետեր չեն արտացոլվել Ազգային օրենսդրության շրջանակում: Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում շարադրված է.

“Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի օբյեկտներն են՝

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձաններն իրենց պահպանական գոտիներով, դրանց շրջապատող պատմական միջավայրը՝ կառուցապատումը, բնական կամ արհեստական լանդշաֆտը:”

Սակայն նույն օրենքի և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերում, ինչպես նաև քաղաքաշինության ոլորտը կարգավորող իրավական ակտերում այս դրույթների իրականացման համար չկան բավարար գործիքներ:

Որոշումների և այլ անհրաժեշտ փաստաթղթերի մշակման գործընթացներում կարևորվում են բազմադիսցիպլին մոտեցումները, մասնավորապես՝ վերականգնող ճարտարապետների, արվեստաբանների, պատմաբանների, ճարտարապետների, քաղաքաշինարարների հետ միասին անհրաժեշտ է աշխատանքներում ներառել սոցիոլոգներ, տնտեսագետներ, բնապահպաններ, լանդշաֆտային ճարտարապետներ, հանրային առողջության և սոցիալական ապահովության ոլորտները ներկայացնող մասնագետներ: Ազգային օրենսդրության շրջանակում այլ ոլորտներից միայն զբոսաշրջությունն է տեղ գտել, այն էլ շատ ընդհանուր ենթատեքստում [տես 15, հոդված 17, կետ “բ”]:

Միջազգային ու եվրոպական փաստաթղթերում խոսվում է եռաստիճան հանրային կառավարման մասին՝ ազգային, տարածքային և տեղական: Հայաստանի Հանրապետությունում կառավարման կառուցվածքը երկաստիճան է՝ Ազգային (կամ պետական) կառավարում և տեղական ինքնակառավարում: Տարածքային կառավարումն ըստ էության ազգային կամ պետական կառավարման բաղկացուցիչ մասն է: Ըստ այդմ հատկապես կարևոր է Ազգային մակարդակով կարգավորիչ օրենսդրության ամրագրումը, իսկ տեղական մակարդակով՝ որոշումների ընդունումը: Օրինակ՝ պատմական միջավայրերում ցուցանակների ընդունելի տեղադրումը հնարավոր է ակնկալել տեղական մակարդակում մասնագիտական գրագետ մոտեցման դեպքում, սակայն դրանք ցանկալի է ունենան իրավական հիմքեր, կա՛մ ազգային օրենսդրության, կա՛մ տեղական մակարդակով նորմատիվային փաստաթղթերի տեսքով [տես 15, հոդված 28]:

2.3. Օրենքներ

Հեղինակ՝ Նարեկ Աշուղաթոյան, Լեզալլաբ ՓԲԸ, իրավախորհրդատվական գրասենյակ

Աշխատության այս հատվածի հիմնական խնդիրն է վերլուծել Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենքը՝ ՀՕ-261, ընդունված 11 նոյեմբերի, 1998թ. (այսուհետ՝ Օրենք) [15] զուգահեռաբար հաշվի առնելով քաղաքաշինության և մշակույթի ոլորտին առնչվող միջազգային և ներպետական մի շարք իրավական ակտեր, ինչպես նաև վերջին շրջանում այս ոլորտներում ծագած իրական խնդիրներ:

Վերը նշված օրենքի ուսումնասիրման ժամանակ փորձել ենք յուրաքանչյուր հոդված և դրույթ համեմատել Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային իրավական մի շարք փաստաղթերի հետ: Զուգահեռաբար առանձնացվել են այն հոդվածները, որոնք իրենց մեջ պարունակում ենք լեզվական անհստակություններ: Պրակտիկ խնդիրների (case study) դիտարկման արդյունքում առանձին ուսումնասիրվել են այն հոդվածները, որոնք տեսականորեն կազմված են գրագետ, սակայն պրակտիկայում պատճառ են բազմաթիվ խնդիրների: Այս ամենի արդյունքում առանձնացված հոդվածների վերաբերյալ ներկայացրել ենք հստակ առաջարկություններ, ինչպես նաև որոշ հոդվածների շուրջ՝ բարձրացրել հարցադրումներ, որոնց պատասխանի որոնումը կարող է ապագայի նոր և առանձին վերլուծությունների առիթ դառնալ:

Սույն ուսումնասիրությունը կարող է օգտագործվել որպես աջակցություն՝ ոլորտի քաղաքականության հարցերի ճշտման իրավական և վարչական բարեփոխումների իրականացման համար: Աշխատությունում բարձրացված հարցադրումները և որոշ առաջարկություններ կարող են ծառայել որպես ելակետ՝ մշակութային անշարժ ժառանգության պաշտպանության նոր հայեցակարգերի մշակման կամ պարզապես, դրանց վերաբերյալ քննարկումներ անցկացնելու համար:

Հոդված 1. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները.

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ (այսուհետ՝ հուշարձաններ) են պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ

պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձանները գտնվում են պետության պահպանության ներքո:”

Հոդված 1-ում թվարկվում են այն բոլոր կառույցների տիպերը, թե ինչը կարող է կոչվել պատմության և մշակույթի անշարժ հուշարձան: Թեև հոդվածում նշված է նաև հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերի ու բեկորների մասին, այդուհանդերձ, կարծում ենք, որ այս հոդվածում պակասում է “ինտերիեր” տիպը, որը որոշ հուշարձանների դեպքում կարող է առանձին կամ հուշարձանի հետ որպես մեկ միավոր ներառվել ցանկի մեջ: Ի դեպ, ինտերիերի գրանցման դեպքում հարկավոր է հաշվի առնել այն բոլոր պատմական, գեղարվեստական լուծումները և նմուշները, որոնք գրանցման պահի դրությամբ պահպանված են: Ավելին՝, թե՛ այս կառույցների տեսակների և թե՛, առհասարակ, ճարտարապետական ժառանգության սահմանման համար հարկ ենք համարում հղել Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայի (Գրանադա, 1985 թվական) հոդված 1-ին, որտեղ, կարծում ենք, շատ ավելի ամբողջական ձևակերպված է անշարժ հուշարձանների սահմանումը.

“Սույն Կոնվենցիայի նպատակների համար որպես «ճարտարապետական ժառանգություն» են համարվում հետևյալ անշարժ արժեքները.

- 1. հուշարձանները՝ պատմական, հնագիտական, գեղարվեստական, գիտական, սոցիալական կամ տեխնիկական տեսանկյունից մասնավորապես ուշագրավ իրականացումները, ներառյալ դրանց անքակտելի մաս կազմող տեղադրումները և հարդարանքի տարրերը,*
- 2. ճարտարապետական համալիրները՝ քաղաքային կամ գյուղական կառույցների համաձին խմբեր, որոնք պատմական, հնագիտական, գեղարվեստական, գիտական, սոցիալական և տեխնիկական տեսանկյունից հանդիսանում են մասնավորապես ուշագրավ, և որոնց կապակցվածությունը բավարար է տեղագրական (տոպոգրաֆիկ) սահմանազատման առարկա հանդիսանալու համար,*

3. տեսարժան վայրերը՝ մարդու և բնության կողմից ստեղծված համակցված աշխատանքներ, որոնք կառուցված են մասնակիորեն, պատմական, հնագիտական, գեղարվեստական, գիտական, սոցիալական կամ տեխնիկական տեսանկյունից հանդիսանում են ուշագրավ և կազմում են բավարար համարվող բնութագրական ու միատարր տարածք՝ տեղագրական (տոպոգրաֆիկ) սահմանագալսման առարկա հանդիսանալու համար:”

Իբրև հավելում՝ նշենք, որ Օրենքի հոդված 1-ում առհասարակ չի արձարծվում “սոցիալական և տեխնիկական” եզրույթները, որն իր հստակ տեղն ունի վերը նշված կոնվենցիայում:

“Հոդված 6. Հուշարձանների դասակարգումը.

Հուշարձանները դասակարգվում են նաև ըստ բնույթի՝

գ) քաղաքաշինական և ճարտարապետական՝ պատմական բնակավայրերի, թաղամասերի, փողոցների, այգիների կառուցապատման հատվածներ, բնակելի, պալատական, պաշտամունքային, հասարակական, արտադրական և ճարտարագիտական կառույցներ, ժողովրդական տներ, ճարտարապետական կոթողներ...”:

Այս հոդվածում հստակ ընդգծված է “հատվածներ” եզրույթը և առանձին օբյեկտները, սակայն հոդվածն ավելի ամբողջական դարձնելու համար առաջարկում ենք այն վերաձևակերպել հետևյալ կերպ. “գ) քաղաքաշինական և ճարտարապետական՝ պատմական բնակավայրերի, թաղամասերի, փողոցների, այգիների կառուցապատում(ներ) և/կամ կառուցապատման հատվածներ...”:

Հոդված 8. Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը.

Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

դ) հաստատում է անշարժ հուշարձանների պետական ցուցակները, դրանց հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը.

Ելնելով տեղծված իրավիճակից՝ կարծում ենք, որ սույն Օրենքի նպատակներն արդյունավետ իրագործելու համար Կառավարությունը այլևս չպետք է լիազորություն ունենա փոփոխելու վերը նշված ցուցակը: Այդ մասին ավելի մանրամասն կխոսվի առաջարկությունների գլխում:

Հոդված 9. Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում լիազորված մարմնի իրավասությունը.

Լիազորված մարմինը՝

ե) գրանցում և վերահսկում է հուշարձանի նկատմամբ սեփականության իրավունքի և օգտագործման ձևի փոփոխումները.

ը) վարում է հուշարձանների պետական հաշվառումը (կադաստրը).

Հարցադրում: Առ այսօր լիազորված մարմինն ինչպե՞ս է գործնականում կազմակերպել օրենքով սահմանված այդ լիազորությունը: Այս հարցադրման համար հիմք են հանդիսացել սույն աշխատության մեջ կադաստրի վերաբերյալ օրենսդրական և ենթաօրենսդրական վերլուծությունները, որոնք ցույց են տալիս, որ հուշարձանների կադաստրի վերաբերյալ դեռևս առկա են մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական անկատարություններ:

Ժա) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով համաձայնություն կամ մասնագիտական եզրակացություն է տալիս հուշարձաններ ունեցող բնակավայրերի, դրանց հատվածների հատկագծման, կառուցապատման, ինչպես նաև հուշարձան համարվող առանձին շինությունների և համալիրների ամրակայման, վերականգնման, փոփոխման և բարեկարգման նախագծերի վերաբերյալ, դրանց իրականացման ընթացքում վերահսկում է հուշարձանների անվթարության ապահովումը.

“Ժա” հոդվածում օգտագործված է “վերահսկել” եզրը: Կարծում ենք, որ լիազորված մարմինն նման լիազորություններով օժտելով՝ վերջինիս տրվում է տեսչական գործառույթ իրականացնելու հնարավորություն, սակայն իրականում լիազորված մարմնի կազմում տեսչություն չկա (այդ մասին ավելի մանրամասն կխոսվի առաջարկությունների գլխում): Առաջարկում ենք կա՛մ գործակալությունը դարձնել տեսչություն կա՛մ Օրենքով սահմանված այս իրավունքը/պարտականությունը փոփոխել:

ժդ) նպաստում է ոչ պետական սեփականություն համարվող հուշարձանների պահպանական միջոցառումների իրականացմանը.

Հարցադրում: Իրավական տեսանկյունից ի՞նչ է նշանակում վերը նշված “նպաստել” եզրույթը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայի հոդված 6-ը, որում հստակ սահմանում է նպաստման հիմնական ուղենիշները:

“Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է՝

- 1. հանրային իշխանությունների կողմից ազգային, տարածաշրջանային և տեղական իրավասությունների և առկա բյուջետային միջոցների սահմաններում, տրամադրել ֆինանսական աջակցություն՝ իր տարածքում գտնվող ճարտարապետական ժառանգության պահպանման և վերականգնման աշխատանքներ իրականացնելու նպատակով.*
- 2. անհրաժեշտության դեպքում ձեռնարկել հարկային բնույթի միջոցներ՝ այդ ժառանգության պահպանությանն աջակցելու նպատակով.*
- 3. խրախուսել ճարտարապետական ժառանգության պահպանմանն ու վերականգնմանն ուղղված մասնավոր նախաձեռնությունները:”*

Առաջարկում ենք հիմք ընդունել կոնվենցիայից մեջբերվածը և Օրենքի այդ հոդվածը լրացնել՝ հստակեցնելով, որ պետությունը պարտավոր է անհրաժեշտության դեպքում ժառանգության պահպանությանն աջակցելու նպատակով ձեռնարկել հարկային բնույթի միջոցներ: Ի դեպ, կոնվենցիայում չի առանձնացվում պետական սեփականություն և մասնավոր սեփականություն համարվող հուշարձանները:

Հոդված 11. Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը.

թ) հուշարձանների պահպանական գործիներում հողի, համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքերի և շինությունների սեփականատերերի և օգտագործողների հետ կնքում են հուշարձանների պահպանության պայմանագիր (պարտավորագիր), որի մեկ օրինակը ներկայացնում են լիազորված մարմին:

Հարցադրում: Արդյոք կա՞ Կառավարության կողմից մշակված պայմանագրի որևէ տիպային տարբերակ:

Առաջարկում ենք, որ Կառավարությունը մշակի հուշարձանի պահպանության համար նախատեսված պայմանագրի ձև, որը կկիրառվի սեփականատեր և լիազոր մարմին հարաբերությունները հստակեցնելու նպատակով:

Հոդված 15. Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը.

Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը ներառում է՝

- ա) հուշարձանների հայտնաբերումը և պեղական հաշվառումը.*
- բ) հուշարձանների պահպանության գործիքների սահմանումը.*
- գ) պատմամշակութային արգելիցների ստեղծումը.*
- դ) պատմական բնակավայրերի, դրանց առանձին հատվածների պատմամշակութային հիմնավորման նախագծերի կազմումը.*
- ե) հուշարձանների և դրանց փարածքի պահպանության ապահովումն ու վերահսկումը.*
- զ) շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքների իրականացման ընթացքում հուշարձանների ու դրանց պատմական միջավայրի անվթարության ապահովումը.*
- է) հուշարձանների պեղումների, ամրակայման, վերականգնման, նորոգման աշխատանքների և օգտագործման կարգերի սահմանումը.*
- ը) հուշարձանների պահպանության քարոզչությունը:*

Կարծում ենք, որ այս հոդվածի “Զ” կետում կարելի է ակնարկել նաև արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվող գործողությունները, որովհետև արտակարգ իրավիճակներում հայտնված (օրինակ՝ հրդեհ) որոշակի բնույթի հուշարձաններ կարող են վնասվել սխալ կազմակերպված գործողությունների արդյունքում: Խնդրի լուծման վերջնական տարբերակ առաջարկում ենք Կառավարության առանձին (կամ լրացում արդեն գոյություն ունեցող կարգ) կարգի մշակում, որտեղ հստակ կսահմանվեն արտակարգ իրավիճակներում հայտնված հուշարձանների նկատմամբ կիրառվելիք գործողությունների սահմանները:

Հոդված 16. Հուշարձանների տարածքը, պահպանման գոտիները, դրանց կարգավիճակը և օգտագործման ռեժիմը.

Հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանության ապահովման, պատմագեղարվեստական արժեքների բացահայտման, նպատակային օգտագործման և բարենպաստ տեսողական ընկալման նպատակով սահմանվում է հուշարձանի պահպանական գոտիների համակարգ և օգտագործման ռեժիմ:

Այս կապակցությամբ տեղին ենք համարում առանձին անրադառնալ վարչական իրավախախտումներին: Այսպիսով՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի [19] 95-րդ հոդվածը սահմանում է.

“Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության կամ օգտագործման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից ութսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրհիսնապատիկից երկուհարյուրապատիկի չափով:”

Վերջին տարիներին հատկապես Երևան քաղաքի հուշարձաններին առնչվող խնդիրների դիտարկումը փաստում է, որ խախտումների տեսակները բազմաբնույթ են: Ուստի՝ առաջանում է պահանջ, որպեսզի Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենքում ևս արտահայտվեն այդ խախտումների առավել տարածված տեսակները: Ավելին՝ որպեսզի օրենքը դառնա գործնական կանխարգելիչ գործիք, առաջարկում ենք չափի ավելացումով խստացնել սահմանված “հիսնապատիկից ութսունապատիկ/հարյուրհիսնապատիկից երկու հարյուրապատիկ” չափը:

Հոդված 19. Հուշարձաններ ունեցող բնակավայրերի հատակագծման, կառուցապատման և վերակառուցման նախագծերի համաձայնեցումը

Հուշարձանների պահպանական գոտիները, բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերը ելակետային հիմք են տարածաշրջանների, քաղաքների և մյուս բնակավայրերի մանրամասն հատակագծման և կառուցապատման նախագծերի համար: Նշված գոտիների տարածքներում հողային, շինարարական և այլ տեսակի աշխատանքների, ինչպես

նաև տնտեսական գործունեության իրականացումը կատարվում է լիազորված մարմնի թույլտվությամբ:

Այս հոդվածի կապակցությամբ առաջարկում ենք “կառուցապատման նախագծեր” ձևակերպումից առաջ ավելացնել նաև “գլխավոր հատակագծեր” եզրույթը:

Հոդված 20. Նորահայտ հուշարձանների պահպանության և անվթարության ապահովումը.

Հուշարձանի հայտնաբերման փաստը թաքցնող, այն հաշվառելու և ուսումնասիրելու համար արգելքներ ստեղծող, ինչպես նաև գործոնները ոչնչացնող կամ յուրացնող անձը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

“Պատասխանատվության” պատշաճ և ամբողջական կազմակերպման համար առաջարկում ենք Քրեական Օրենսգրքի 264-րդ հոդվածի համապատասխան խմբագրում և լրացում:

Հոդված 21. Հուշարձանների քանդման արգելումը: Հուշարձանների տեղափոխման և փոփոխման կարգը.

Հուշարձանների քանդումն արգելվում է:

Մի շարք դեպքերում, երբ դիտավորությամբ քանդում են հուշարձանի մի հատվածը, կարողանում են խուսափել “հուշարձանի քանդումից” բխող պատասխանատվությունից, քանի որ տվյալ հուշարձանի մյուս հատվածը շարունակում է մնալ կանգուն: Այս կապակցությամբ առաջարկում ենք վերը նշված հոդվածում ավելացնել “ամբողջական” և/կամ “մասնակի” քանդում եզրույթները:

Հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների տեղափոխումը, հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխումը կարող են կատարվել միայն բացառիկ դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության թույլտվությամբ, իսկ տեղական նշանակության հուշարձանների փոփոխումը՝ պետական կառավարման տարածքային մարմինների թույլտվությամբ:

Առաջարկում ենք, առհասարակ, արգելել հուշարձանների տեղափոխությունը: “Պետական կարիքների զոհեր” հասարակական կազմակերպության 2012 թվականին պատրաստած “Տեղեկություններ Երևան քաղաքի պատմական հուշարձանների պահպանության մասին”

զեկույցից երևում է, որ տեղափոխության անվան տակ բազմաթիվ հուշարձաններ փաստացի քանդվում են [38]: Այս կապակցությամբ Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայի հոդված 5-ը հստակ սահմանում է.

“Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է արգելել պահպանվող որևէ հուշարձանի ամբողջական կամ մասնակի տեղափոխումը, բացի այն դեպքի, երբ այդպիսի հուշարձանի նյութական պահպանությունը հրամայաբար պահանջում է այն տեղափոխել: Այս դեպքում, իրավասու մարմինը անվտանգության անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկի՝ հարմար վայրում հուշարձանի ապամոնտաժման, տեղափոխման և վերականգնման համար:”

Կոնվենցիայի վերը նշված հոդվածից հստակ երևում է, որ տեղափոխման համար ելակետային է համարվում հուշարձանի նյութական պահպանությունը:

Հոդված 22. Հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը.

Հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական, գյուղատնտեսական և այլ կարգի աշխատանքների համար հողի հատկացումները, կառուցապատման, ինժեներատրանսպորտային հաղորդակցության ուղիների նախագծերը սահմանված կարգով համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ:

Եթե նշված աշխատանքները կարող են վտանգել այդ տարածքներում գտնվող հուշարձանների պահպանությունն ու անվթարությունը, նախապես, աշխատանքների պատվիրատուի միջոցներով իրագործվում են հուշարձանների պահպանությունն ու անվթարությունն ապահովող միջոցառումներ՝ հետախուզություն, պեղումներ, վերականգնման աշխատանքներ, բացառիկ դեպքերում՝ տեղափոխում և լիազորված մարմնի կողմից առաջարկվող այլ աշխատանքներ:

Հարցադրում: Իրավական տեսանկյունից ի՞նչ է նշանակում վերը նշված “բացառիկ դեպքերում” եզրույթը:

Հոդված 22. Հասարակայնության աջակցությունը հուշարձանների պահպանության և օգտագործման աշխատանքներին.

Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձինք իրենց անմիջական մասնակցությամբ, նախաձեռնությամբ, հովանավորությամբ, նվիրատվությամբ, ֆինանսական և նյութատեխնիկական օգնությամբ կարող են աջակցել հուշարձանների հայտնաբերման, պեղական հաշվառման, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման աշխատանքներին, կարող են ներկայացնել և քննարկման դնել բնագավառի վերաբերյալ մասնակի կամ համալիր առաջարկներ, ծրագրեր:

Առաջարկում ենք “նվիրատվության” հետ կիրառել նաև “նվիրաբերություն” եզրույթը, որի վերաբերյալ մանրամասները սահմանվում են Քաղաքացիական Օրենսգրքի 605-րդ հոդվածով:

Հոդված 30. Հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման նպատակները.

Նորոգում է համարվում նաև հուշարձանների հարմարեցումը (ադապտացիան), որի նպատակն է առավել բարենպաստ պայմաններ ստեղծել դրանց ժամանակակից օգտագործման համար:

Կարծում ենք, որ այս հոդվածն ունի վերաձևակերպման կարիք, քանզի նորոգումը կարող է համարվել հարմարեցման բաղադրիչ, սակայն հարմարեցումը, ըստ էության, նորոգում չէ, ուստի առաջարկում ենք այդ երկու եզրույթներն առանձնացնել և ձևակերպել առանձին:

Հոդված 32. Հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներ իրականացնողները.

Հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներն իրականացնում են մասնագիտացված կազմակերպությունները և այն մասնագետները, որոնք ունեն համապատասխան լիցենզիա և տվյալ հուշարձանում աշխատանքներ կատարելու համար սահմանված կարգով տրված թույլտվություն:

Հայաստանի Հանրապետության լիցենզավորման մասին օրենքում [20], որևէ նման լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ չկա: Միայն հոդված 5-ում ակնարկվում է հետևյալը՝

“Գործունեության առանձին տեսակներով զբաղվելու լիցենզավորման նպատակներն են՝

4. անձանց կյանքին, առողջությանը, գույքին, պետության և հասարակության շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վրանգի սպառնալիքով հղի գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողության իրականացումը.”

Առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության լիցենզավորման մասին օրենքում կատարել համապատասխան լրացում հակառակ դեպքում ստացվում է, որ հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներ իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, ներգրավված լինելով նման աշխատանքներում, ուղղակիորեն զբաղվում են ապօրինի գործունեությամբ:

Հոդված 33. Հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների դադարեցումը.

Հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցվում են, եթե դրանք տարվում են հաստատված նախագծի, մեթոդաբանական կամ տեխնոլոգիական սկզբունքների խախտումներով, կամ եթե դրանց շարունակումը կարող է վրանգել հուշարձանի անվթարությունը: Աշխատանքները կարող են վերսկսվել բացահայտված խախտումները կատարողի հաշվին վերացվելուց հետո:

Աշխատանքները դադարեցնելու իրավունք ունեն լիազորված մարմինը և պետական կառավարման տարածքային մարմինը՝ տեղակ պահելով լիազորված մարմինին:

Այս հոդվածում ևս արժարժվում է տեսչական գործառույթ բնութագրող ձևակերպում (աշխատանքները դադարեցնելու իրավունք): Կրկին առաջարկում ենք կա՛մ գործակալությունը դարձնել տեսչություն կա՛մ օրենքով սահմանված այս իրավունքը/պարտականությունը փոփոխել:

Հոդված 36. Հուշարձանի սեփականատիրոջ պարտականությունները.

Հուշարձանի սեփականատերը պարտավոր է՝

բ) սահմանված կարգով տալ հուշարձանի պահպանական պարտավորագիր լիազորված մարմին՝ հանրապետական նշանակության հուշարձանի դեպքում, կամ պետական կառավարման տարածքային մարմին՝ տեղական նշանակության հուշարձանի դեպքում.

Առաջարկում ենք “պարտավորագիր” եզրույթը բոլոր հոդվածներում փոխարինել “պայմանագիր” եզրույթի:

զ) լիազորված մարմինն նախապես տեղեկացնել հուշարձանի նկատմամբ սեփականության իրավունքի, դրա պահպանման և օգտագործման պայմանների փոփոխման մասին:

Առաջարկում ենք այս կետի կիրառման գործում ներգրավել Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին:

Հոդված 38. Հուշարձանների օգտագործման հիմնական նպատակները.

Բացառապես գիտական, կրթական, մշակութային և ճանաչողական նպատակներով են օգտագործվում հին և միջնադարյան քաղաքատեղիները, բնակատեղիները, բերդյանները, ամրոցները, դամբարանադաշտերը, գերեզմանոցները, չգործող կամուրջները, ջրամբարները, այն եկեղեցիները, վանական համալիրները և այլ կառույցները, որոնք ենթակա չեն ամբողջական վերականգնման և օգտագործման՝ իրենց սկզբնական գործառնական նշանակությամբ, ինչպես նաև դրանց հետ առնչվող մոնումենտալ արվեստի ստեղծագործությունները:

Առաջարկում ենք գիտական, կրթական, մշակութային և ճանաչողական նպատակների կողքին ավելացնել նաև ծիսական նպատակը: Փաստորեն՝ սույն հոդվածի ներկա սահմանումն արգելում է ամբողջական չվերականգնված վանական համալիրներում քրիստոնեական ծեսերի կազմակերպումը (որը, սակայն, պրակտիկայում բավականին ընդունված իրողություն է):

Հուշարձանն օգտագործողները, եթե իրենց կանխամտածված կամ ոչ կանխամտածված գործողություններով վնասել են հուշարձանի պահպանությանը, կորցնում են օգտագործման իրավունքը:

Վերը նշված հոդվածը կարիք ունի վերաձևակերպման, քանզի օգտագործողը չի կարող վնասել հուշարձանի պահպանությանը: Առաջարկում ենք այն շարադրել հետևյալ խմբագրությամբ.

“Հուշարձանն օգտագործողները, եթե իրենց կանխամտածված կամ ոչ կանխամտածված գործողություններով վնասել են հուշարձանի պահպանությանն ուղղված գործընթացին/ներին, կորցնում են օգտագործման իրավունքը:”

Հոդված 41. Հուշարձանների օգտագործումը գովազդային և զբոսաշրջիկության նպատակներով.

Հուշարձանները զբոսաշրջիկության նպատակով օգտագործելու դեպքում զբոսաշրջային կազմակերպությունները համապատասխան պայմանագրեր են կնքում սեփականատերերի հետ:

Առաջարկում ենք վերը շարադրված “համապատասխան պայմանագրեր են կնքում” ձևակերպումը փոխարինել “համաձայնեցնում են” ձևակերպմամբ: Հակառակ դեպքում ստացվում է, որ պետական սեփականություն համարվող հուշարձաններ կամ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն պատկանող հուշարձաններ այցելելու համար (որոնք մեծամասամբ եկեղեցիներ և վանքեր են) զբոսաշրջային կազմակերպությունները պետք է կնքեն պայմանագրեր:

2.4. Ենթաօրենսդրական այլ փաստաթղթեր

Հեղինակ՝ *Բորիս Քոչարյան*

Քսանմեկերորդ դարում “Պատմամշակութային ժառանգություն” հասկացողության մեկնաբանությունը զգալի փոփոխություն է կրել զարգացած երկրներում: Միջազգային իրավասու կազմակերպությունները (ամենից առաջ՝ ՅՈՒՆԵՍԿՈՆ) արձանագրել են նոր մոտեցումներ: Եթե նախկինում պատմամշակութային ժառանգության պահպանումը գլխավորապես հասկացվում և կիրառվում էր որպես նյութական ժառանգության առանձին նշանավոր հուշարձանների պահպանություն, ապա այժմ այն ընդգրկում է.

- քաղաքային լանդշաֆտի պահպանությունը, որը հուշարձանի/ների/ հետ միասին ընդգրկում է նաև նրա շրջակա տարածքը, “սովորական” հուշարձան չհանդիսացող շենքերով, պատմականորեն ձևավորված քաղաքաշինական ու բնական միջավայրով,
- հնություն համարվող հուշարձանների հետ միասին նաև 20-րդ դարի կառույցների պահպանությունը,
- նյութականի հետ միասին նաև ոչ նյութական ժառանգության պահպանությունը,
- պատմամշակութային ժառանգության ակտիվ ներգրավումը բնակավայրի սոցիալ-տնտեսական ծրագրերի և առօրյա կյանքի մեջ, դարձնելով քաղաքային միջավայրի անբաժանելի մասը,
- հասարակության և ամենից առաջ տեղի բնակչության ակտիվ մասնակցությունը որոշումների ընդունմանը:

Հուշարձանը քաղաքային միջավայրի մեջ ակտիվ ներգրավելը /վիտալիզացիա/, իրականացվում է չորս հիմնական եղանակներով.

- մասնավորեցում՝ նոր սեփականատիրոջը փոխանցելով բոլոր պարտավորությունները,
- հուշարձանի՝ որպես անշարժ գույքի, վերակառուցում (development),
- մշակութային զբոսաշրջության զարգացում, ստեղծելով պատմամշակութային օբյեկտների “բրենդներ”,
- պատմամշակութային միջավայրի յուրահատուկ արժեքավոր մթնոլորտի “վաճառք” (կոչվում է նաև “տեղի բրենդ”), անշարժ գույքի գների աճի շահագրգռությամբ:

Նշված ձևերից ոչ մեկն անթերի չէ: Շատ դեպքերում կիրառվում են համալիր մոտեցումներ: Ավելի հաճախ կիրառվում է մասնավորեցման եղանակը, երբ նոր սեփականատերն ստանձնում է հուշարձանի պահպանման, օգտագործման հոգսը: Նա նաև պարտավորվում է ապահովել հուշարձանի մատչելիությունը հանրությանը:

Եվրամիության երկրների օրենսդրությունը բավական խիստ սանկցիաներ է նախատեսում ստանձնած պարտավորությունները խախտող սեփականատերերի նկատմամբ, ընդհուպ մինչև առանց փոխհատուցման կոնֆիսկացիա:

Եվրամիության երկրներում հուշարձանների մասնավորեցման գլխավոր պատճառը, ոչ թե լրացուցիչ բյուջետային մուտքերն են, այլ պետությանը հուշարձանների պահպանման. նորոգման, վերանորոգման ծախսերից ազատելը: Ընդ որում, բացի սեփականատիրոջը պահպանական պարտավորություններով ծանրաբեռնելը, կիրառվում են նաև տնտեսական խրախուսման ձևեր՝ սուբսիդիաներ և այլ տեսակի արտոնություններ: Առաջինը կիրառվում է որպես հատուցում պարտավորությունների մի մասի կատարման դիմաց (որոշ տեսակի նորոգումների, կամ հուշարձանն այցելությունների համար հասանելի դարձնելու), իսկ հարկային արտոնությունները և արտոնյալ վարկերի տրամադրման ձևերը կիրառվում են որպես խրախուսման միջոց հուշարձանը ձեռք բերողների համար: Օգտագործողների համար կիրառվում են վարձավճարների զեղչեր:

Վերակառուցման եղանակն ամենառիսկայինն է: Որպես կանոն հուշարձանի բնույթը և նախնական վիճակը չեն պահպանվում: Այսինքն՝ վտանգվում կամ կորսվում է հավաստիությունը, որը հուշարձանների մեծ մասի համար ցանկալի չէ, իսկ որոշ մասի համար՝ ուղղակի անթույլատրելի է: Այնուամենայնիվ, սա քաղաքային կառուցապատման առանձնահատուկ արժեք չներկայացնող, բայց պահպանման ենթակա հատվածների (բնակելի, արտադրական շենքեր և այլ) վերակենդանացնելու և նոր կյանք հաղորդելու լավագույն եղանակը կարող է լինել:

Ավելի տարողունակ և հեռանկարային խնդիր է պատմամշակութային հուշարձանների ընդգրկումը տուրիզմի զարգացման ծրագրերում, սակայն զգալի արդյունքների հասնելու համար այն պետք է լինի պետության տնտեսական քաղաքականության առաջնահերթություններից մեկը, միևնույն ժամանակ պետք է ներգրավվեն տեղական իշխանություններն ու հասարակական տարբեր խմբերը:

Վերը շարադրված խնդիրների լուծման համար Հայաստանի Հանրապետությունում կարծես թե ստեղծվել են բավարար օրենսդրական հիմքեր՝ վավերացվել են մի շարք միջազգային

կոնվենցիաներ և այլ միջազգային իրավական ակտեր, ընդունվել են օրենքներ և մի շարք ենթաօրենսդրական ակտեր: Ժամանակակից պատկերացումներին համահունչ է նաև Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ Օրենք) [15] հոդված 4-ի սահմանումը՝ *”Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի օբյեկտներն են՝ “Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձաններն իրենց պահպանական գույքներով, դրանց շրջապատող պատմական միջավայրը՝ կառուցապատումը, բնական կամ արհեստական լանդշաֆտը”:*

Ստորև ներկայացվող վերլուծությամբ փորձել ենք պարզել, թե որքանով են պահպանվել միջազգային ստանձնած պարտավորությունների և Օրենքի հիմնարար դրույթները այս բնագավառի պրակտիկ գործընթացները կարգավորող հիմնական իրավական ակտում՝ ՀՀ կառավարության 20 ապրիլի 2002 թվականի N438 որոշմամբ ընդունված Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգի (այսուհետև՝ Կարգ) [22] մեջ: Զուգահեռաբար ուսումնասիրվել է նաև քաղաքաշինական գործընթացները կարգավորող օրենսդրության հետ փոխազդեցությունները:

1. “II. Հուշարձանների պետական հաշվառումը և կադաստրի վարումը”-ի 4, 6, 7, 8 և 9, ինչպես նաև 17 կետերում օգտագործվել են տերմիններ՝ *”պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակի (այսուհետև՝ հուշարձանների պետական ցուցակ)”*, *”հաշվառման փաստաթղթերի (վկայագիր, վավերագրեր և ցուցակ)”*, *”օբյեկտի վկայագիրը”*, *”հուշարձանների պետական ցուցակ”*, *”հուշարձանների պետական հաշվառման փաստաթղթեր”*, որոնք հստակ և միարժեք սահմանում չունեն, որը հակասում է “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 42-րդ հոդվածի 1-ին մասին: Օրենքի հոդված 12-ի 4-րդ մասում նշված *”պետական հաշվառման փաստաթղթեր”* տերմինը նույնպես իմաստային սահմանում չունի: Օրենքում *”վկայագիր”* և *”վավերագրեր”* տերմինները բացակայում են, իսկ սույն կարգում դրանք բերվում են հաշվառման փաստաթղթերին կից փակագծում, որը նշանակում է, թե դրանց նշանակությունը հանրահայտ է, սակայն դա այդպես չէ՝ դրանք բազմիմաստ բառեր են և միանշանակ չեն ընկալվում: Սույն կարգին կից՝ վկայագրի և հուշարձանների պետական

ցուցակի ձևերը վերը շարադրված հարցադրումների սպառիչ պատասխանը չեն տալիս: Եվ հարցերն էլ այսքանով չեն ավարտվում, այսպես՝

- ինչպիսի կազմ ունեն *“պեղական հաշվառման փաստաթղթերը”*. թվարկումը պետք է լինի ամբողջական և սպառիչ, տարբերակումների հավանականությունը պետք է հասցվի նվազագույնի,
- ինչպիսի տեղեկություններ են պարունակում այդ փաստաթղթերից յուրաքանչյուրը, մասնավորապես հուշարձանի (ոչ թե օբյեկտի) վկայագիրը, որը մեր պատկերացմամբ հուշարձանի անձնագիրն է, այսինքն գլխավոր իրավական փաստաթուղթը, և պահպանման պայմանագրի հետ միասին պետք է գրանցվի անշարժ գույքի միասնական կադաստրում,
- սույն կարգի 7-րդ կետում նշված է, որ վկայագիրը համալրվում է *“գրաֆիկական ու լուսանկարչական վավերագրերով”*, ինչ են դրանք իրենցից ներկայացնում, արդյոք 6-րդ կետում նկարագրված նյութերն են, որոնք *“...տեղում, ըստ անհրաժեշտության, գրառվում են նկարագրական, տեղագրական, բնութագրական տվյալները, սխեմատիկ կերպով չափագրվում է օբյեկտը (համալիրները՝ 1:200 կամ 1:500, առանձին կառույցները՝ 1:50 կամ 1:100 մասշտաբներով), լուսանկարվում և 1:25000 մասշտաբի տեղագրական հիմքի վրա նշվում է օբյեկտի տեղը:”*

2. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. *“հուշարձանների պեղական ցուցակները հիմնական փաստաթուղթ և իրավական հիմք են օբյեկտին հուշարձանի կարգավիճակ տալու և պեղության կողմից պահպանության վերցնելու համար”*: Ցուցակների՝ սույն կարգին կից ձևը, որն այժմ կիրառվում է, նույնպես զերծ չէ թերություններից.

- հուշարձանները դասակարգված են միայն ըստ արժեքավորման չափանիշների, իսկ ըստ բնույթի (որը նախատեսված է Օրենքի հոդված 6-ի, 6-րդ մասով) դասակարգված չեն: Եթե այն կիրառական չէ, ապա ինչ իմաստ ունի օրենքում ունենալ նման սահմանումներ,
- աղյուսակի 9-րդ՝ ծանոթագրություն սյունակում բերվում են շատ տարատեսակ տեղեկություններ: Մի դեպքում դա գտնվելու վայրն է ճշտում (*“համանուն բլրի վրա”*), մեկ այլ դեպքում՝ հուշարձանի ներկա վիճակը, որը մեզ հայտնի որոշ դեպքերում հավաստի չէ, կամ նրա պատմության բնորոշ դրվագ (*“եղել է մեծահարուստ Թաիրովի ամառանոցը...”*), կամ հեղինակի, պատվիրատուի կամ կառուցողի անունը, առնչությունը հանրահայտ անձի հետ,

որոշ դեպքերում հուշարձանի նյութը (“երկյանք, նարնջագույն տուֆից...”) և այլն: Չենք կարծում, թե այս գրառումները փորձագիտական հանձնաժողովի որոշմամբ են կատարվել: Վստահ ենք, որ սա չկարգավորվածության արդյունք է և իրավական փաստաթղթում ներառվող տվյալների քանակական ու որակական չափորոշիչները պետք է սահմանվեն նորմատիվ ակտով:

3. Կետ 12-ում “*էական վերակառուցումների*” արտահայտությունից պետք է հանել առնվազն “*էական*” բառը:

4. Կետ 13-ում պետական ցուցակի “...նախագիծը ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա քննարկվում է լիազորված մարմնին կից գործող փորձագիտական հանձնաժողովում և սահմանված կարգով ներկայացվում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը:”

Այդպիսի մարմին նախատեսված չէ Օրենքով, լիազորված մարմնի կանոնադրությամբ կամ այլ իրավական ակտով: Օրենքի հոդված 26-ում սահմանված են միայն միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի ստեղծման դրույթները (կազմը և կանոնադրությունը հաստատում է ՀՀ Կառավարությունը): Եթե պեղումների թույլտվության համար անհրաժեշտ է ունենալ այս կարգավիճակի հանձնաժողով, միթե՞ հազարավոր հուշարձանների հիմնական իրավական փաստաթուղթն ըստ էության ստեղծող հանձնաժողովը չպետք է ունենա նույն կարգավիճակը:

5. Կետ 16-ում շարադրված դրույթը՝ հուշարձանը պետական ցուցակից հանելու մասին, հակասում է Հայաստանի Հանրապետության միջազգային կոնվենցիաներով ստանձնած պարտավորություններին: Այն սահմանում է ոչ թե ցուցակից հանելու կարգ, այլ չափանիշներ, այսպիսով հակասելով Օրենքի հոդված 14-ին: Կարծում ենք, որ հուշարձանները պետական ցուցակի մեջ ընդգրկելու և հանելու չափանիշները պետք է սահմանվեն Օրենքով: Արժե քննարկել նաև ցուցակից հանելն ընդհանրապես բացառելու տարբերակը:

6. Կետ 19-ը սահմանում է, որ՝ “Հուշարձանների *հետազոտման, հաշվառման, վավերագրման վերաբերյալ նյութերը և փաստաթղթերն անժամկետ պահվում են լիազորված մարմնի արխիվում*:

Դրանց հիման վրա լիազորված մարմինն ստեղծում է Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրներում գտնվող հայկական հուշարձանների գիտատեղեկատվության, կազմում և հրապարակում է Հայկական հուշարձանների համահավաք (դիվան) բազմահատորյակը, կազմում և վարում է Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների կադաստրը (այսուհետև՝ հուշարձանների կադաստր)՝:

Նկատենք, որ այն բաղկացած է երկու մասից.

- Առաջին մասը վերաբերում է հուշարձանների վերաբերյալ հավաքված փաստաթղթերի պահպանմանը և պետք է նշել, որ լիազորված մարմնի կանոնադրությամբ “արխիվ” կառուցվածքային միավոր նախատեսված չէ: Չենք կարծում թե դրանք պահվում են նախարարության աշխատակազմի գործառնական արխիվում: Լիազորված մարմնի կազմում գործում են այս ոլորտի մասնագիտացված կազմակերպությունները՝ գործակալությունը որպես աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում և ենթակա հիմնարկները, այդ թվում՝ գիտական: Նրանց կողմից հետազոտված հուշարձանների վերաբերյալ նյութերն ամենայն հավանականությամբ պահպանվում են իրենց արխիվներում, որոնց վարման կարգը կարող է սահմանվել իրենց կանոնադրություններում: Իսկ ամբողջական հավաքագրումը և անժամկետ պահպանությունը կարող է և պետք է իրականացվի միայն հուշարձանների կադաստրում:
- Երկրորդ մասի համար նշենք, որ “շտեմարան” և “համահավաք” տերմինները գիտական և գիտահանրամատչելի բնույթի են, նրանց հետ կապված գործառնություններն այս դասի իրավական ակտով կարգավորելու անհրաժեշտություն չկա, այդ կարգավորումը կարող է իրականացվել գերատեսչական ակտով: Ցանկալի կլինեն, որպեսզի լիազոր մարմինը մշակեր և հրապարակեր պատմամշակութային ժառանգության հանրահոշակման, գովազդի, տարածման հայեցակարգ և ռազմավարություն

7. Կետ 21- 27. Հուշարձանների կադաստրը Հայաստանի Հանրապետության բազմաբնույթ կադաստրային համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկն է: Ցավոք սույն կարգում և, առավել ևս Օրենքում, որտեղ միայն հոդված 9-ի “ը” կետում (և այն էլ փակագծում) է հանդիպում “կադաստր” բառը, անհրաժեշտ հստակությամբ ու պահանջկոտությամբ չի կանոնակարգված այդ կենսականորեն անհրաժեշտ ծառայության կազմակերպման ու վարման դրույթները,

կանոններն ու աշխատակարգը: Կարծում ենք Կարգի 21-րդ կետը կարելի է վերաշարադրել Օրենքում, այնտեղ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի նմանությամբ նախատեսելով առանձին հոդված, այնուհետև Կարգում վերախմբագրել 22-27-րդ կետերը՝ տեղադրելով դրանք առանձին բաժնում:

8. “Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովումը” բաժնի կետ 28-29-ում օգտագործվել է բացատրություն չունեցող “*հուշարձանի անխաթարություն*” տերմինը, ի դեպ՝ Օրենքի տեքստում էլ օգտագործվել է “*անվթարություն*” տերմինը:

9. Կետ 30-ում “հուշարձանների պահպանության և օգտագործման միջոցառումների հանրապետական ու մարզային ծրագրեր” կազմելու մասին հրաշալի շարադրված տեքստ է: Ցավոք հռչակված դրույթների գործնական կիրառության օրինակներ մեզ հայտնի չեն: Մինչդեռ հուշարձանների պահպանման և օգտագործման բնագավառը սերտ առնչություն ունի քաղաքաշինական գործընթացների հետ և առանց ծրագրային մոտեցումների ու հիմնավոր ծրագրային փաստաթղթերի հնարավոր չէ ակնկալել ոչ հեռանկարային, ոչ էլ նույնիսկ ընթացիկ հաջողություններ:

10. Կետ 33-ը հակասում է Օրենքի հոդված 22-ին, այսինքն սահմանում է Օրենքով սահմանված իրավունքի նոր սահմանափակում, ուստի Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի հոդված 9-ի 4.1 մասի համաձայն՝ իրավական ուժ չունի, այսինքն գործել չի կարող:

11. Կետ 34-39-ում հուշարձանների պահպանական գոտիների և պատմամշակութային հիմնավորման նախագծերի հետ կապված մի շարք իրարամերժ հարցեր են առաջանում: Փորձենք անդրադառնել դրանց հնարավորինս մանրամասն:

Օրենքը սահմանում է, որ դրանք “ելակետրային հիմք են *փարածաշրջանների, քաղաքների և մյուս բնակավայրերի մանրամասն հատակագծման և կառուցապատման նախագծերի համար*” (հոդված 16):

Սույն կարգի 38-րդ կետով դրանք՝ “*համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ծրագրային փաստաթղթեր են բնակավայրի գլխավոր հատակագծի,*

մանրամասն հատկազգծման և գոյնորման նախագծերի կազմման համար։” Թվում է, թե պարզապես Կարգի դրույթը հակասում է Օրենքին և պետք է վերացվի, սակայն իրավական շփոթը սրանով չի ավարտվում. Քաղաքաշինության մասին օրենքի [17] 17-րդ հոդվածի 4-րդ մասի “ե” կետի համաձայն՝ “բնակավայրերի պատմամշակութային հիմնավորումների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության գոյիների, բնության հատուկ պահպանվող տարածքների նախագծերը. քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման) փաստաթղթեր են”։

Սա մեզ հիմք է տալիս պահանջել, որպեսզի կառավարության որոշմամբ հաստատվի դրանց մշակման, համաձայնեցման և հաստատման առանձին կարգ։ Սա, իհարկե, անհրաժեշտ է բոլոր դեպքերում։ Սակայն շարունակենք. նույն օրենքի, նույն հոդվածի 6-րդ մասով սահմանվում է՝ “Սույն հոդվածի չորրորդ մասի “ե” կետով սահմանված փաստաթղթերը մշակվում են “Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին” և “Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան”։ Իսկ Հայաստանի Հանրապետության Կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. N1920-Ն որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքային համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման [27] ընթացքում նախագծման առաջադրանքում նշվում են՝”ժ. ՀՀ Մշակույթի նախարարության ներկայացմամբ՝ տեղեկատվություն պատմության և մշակույթի հուշարձանների (այդ թվում՝ նաև նորահայտ) պահպանական գոյիների մակերեսները,” (հավելված 2, 1-ին մաս), ապա՝ ելակետային տվյալների ցանկում պարտադիր ներկայացվում է.

“4) տվյալներ բնության, պատմության և մշակույթի հուշարձանների և դրանց պահպանական գոյիների նախագծերի ու զբաղեցրած տարածքների վերաբերյալ.” (հավելված 3), և ի վերջո՝ գլխավոր հատակագծի նախագծային փաստաթղթերի կազմում նախ՝ հենակետային հատակագծում ցույց են տրվում “գ. բնության, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գոյիների սահմանները,” (հավելված 4, 1-ին մաս, 1-ին կետ), ապա՝ համայնքի տարածքային զարգացման հատակագծում (հիմնական գծագիր) ներառվում են “1-ին ենթակետի “ա”-“ը”, 5-րդ ենթակետի “ա”, “գ” և “ե”» պարբերություններում նշված համապատասխան դրույթների զարգացման և կատարելագործման վերաբերյալ նախագծային առաջարկությունները”։ Նույն կերպ, Հայաստանի Հանրապետության Կառավարության 14

մայիսի 2001 թվականի N 408 որոշման [29] համաձայն գոտևորման նախագծերի կազմում մշակվում են “գ) պատմամշակութային հուշարձանների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության գոտիները,” (հավելված, 3-րդ մաս): Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնել, որ հուշարձանների պահպանական գոտիների և պատմամշակութային հիմնավորման նախագծերը և՛ ծրագրային փաստաթղթեր են (ըստ տեսակի), և՛ ելակետային հիմք են (ըստ բնույթի): Ակնհայտ է նաև, որ դրանց մշակումը պետք է նախորդի գլխավոր հատակագծերի ու գոտևորման նախագծերի մշակմանը: Ի դեպ, այս տեսակետն են պաշտպանում 2005-ին հրատարակված “Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը” ուսումնական ձեռնարկի հեղինակները [43]: Նրանք նաև գտնում են, որ դրանք պետք է ներառվեն բոլոր փուլերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կազմում:

Յուրատեսակ շփոթ է առաջացնում նաև հուշարձանների “պահպանական գոտիներ” և “պահպանության գոտի” հասկացությունները տարբեր իմաստային համադրություններում օգտագործելը: Օրենքի 16-րդ հոդվածը կարծես թե հստակ սահմանում է, որ հուշարձանների պահպանական գոտիները համակարգ է, մասերից մեկն հուշարձանի պահպանության գոտին է, մյուս մասերն են՝ կառուցապատման կարգավորման և լանդշաֆտի կարգավորման գոտիները: Այս տրամաբանության համաձայն պետք է խմբագրել Օրենքում, Կարգում և այլ իրավական ակտերում այս տերմինների կիրառմամբ շարադրված բոլոր դրույթները: Վերը հիշատակված ուսումնական ձեռնարկում պահպանական համակարգը բաղկացած է ոչ թե երեք, այլ չորս գոտիներից՝ պահպանության, կառուցապատման կարգավորման, ինագիտական և համայնապատկերի պահպանման: Կարծում ենք, օրենքով կարգավորված և սահմանված հասկացությունների կամայական մեկնաբանումը ճիշտ մոտեցում չէ և հեղինակներին կառաջարկեինք վերանայել:

Լրացուցիչ քննարկման և լրամշակման անհրաժեշտություն ունի նաև Օրենքի հոդված 16-ի 5-րդ մասը՝ հողերի կատեգորիայի սահմանման մասով, քանի որ որոշակի հակասություններ կարող են առաջանալ քաղաքաշինական գոտևորման և հուշարձանների պահպանման սկզբունքների միջև: Նշված տեքստում նաև տերմինաբանական սխալ կա, քանի որ պատմամշակութային հողերը, ըստ Հողային օրենսգրքի՝ կատեգորիա (կամ նպատակային նշանակություն) չէ, այլ գործառնական նշանակություն (հոդված 19):

12. Կետ 41-ը պետք է խմբագրել հաշվի առնելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով սահմանված ծրագրային փաստաթղթերի ճիշտ թվարկումը: Առաջին պարբերությունը կարող է շարադրվել հետևյալ կերպ.

“Քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման) փաստաթղթերը՝ տարածքային հատակագծման նախագծերը, պատմական բնակավայրերի գլխավոր հատակագծերը և քաղաքաշինական գոտիավորման նախագծերը համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ:”

Միաժամանակ անհրաժեշտ է հետևողական լինել և քաղաքաշինական փաստաթղթերի մշակումը կանոնակարգող բոլոր իրավական ակտերում ամրագրել այս դրույթը:

13. Կետ 43-45-ում շարադրված գործընթացներն ու իրավասություններն առնչվում են վերահսկողական լիազորությունների իրականացման հետ և “Իրավական ակտերի մասին” օրենքի հոդված 9-ի 4-րդ մասի 1-3 կետերի համաձայն կարող են կարգավորվել միայն օրենքով: Ընդ որում ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտավորությունների սահմանման հետ միաժամանակ անհրաժեշտ է համապատասխան իրավական ակտերում պետք է սահմանել նորմեր այդ պարտավորությունների չկատարման կամ պատշաճ չկատարման դեպքում պատասխանատվության կանչելու համար:

14. Կետ 76-ում (V. Հուշարձանների ամրակայումը, նորոգումը և վերականգնումը) *“...գիտամեթոդական խորհրդի դրական եզրակացության հիման վրա”*: Նույն կետում՝ *“Գիտամեթոդական խորհուրդը խորհրդակցական մարմին է, որը գործում է լիազորված մարմնի կազմում և բաղկացած է հուշարձանների հետազոտման, պահպանության, վերականգնման ու օգտագործման բնագավառների առավել փորձառու մասնագետներից”*:

Դարձյալ շեշտված է մի մարմին, որի ձևավորման ու գործունեության կարգի մասին որևէ տեղեկություն չկա: Ինչո՞վ է այն տարբերվում փորձագիտական հանձնաժողովից, արդյոք նրա կազմում նույն անձինք են ներգրավվում, թե դա սկզբունքորեն ընդունելի չէ:

Փաստորեն, այս ոլորտում լիազորված մարմնին կից գործում են երեք կոլեգիալ մարմիններ, որոնցից մեկը սահմանված է Օրենքով և կարգավորվում է կառավարության որոշմամբ, իսկ մյուս երկուսի վերաբերյալ նույնիսկ գերատեսչական ակտեր չկան: Եթե ընդունենք, որ դրանց

ստեղծումը նախարարի կանոնադրական իրավասությունների շրջանակում է (*“ստեղծում է խորհրդակցական մարմիններ”*), ապա ի՞նչ անհրաժեշտություն կա դրանց որոշ իրավասություններ նկարագրել կառավարության որոշմամբ հաստատվող սույն Կարգում: Իսկ գուցե ավելի նպատակահարմար կլինի դրանց բոլորի փոխարեն ձևավորել մեկ հանձնաժողով՝ հստակ կանոնակարգով ու իրավասություններով:

15. Կետ 77-ում հանդիպում է *“...գիտավերականգնման հատուկ նորմերին համապատասխան, որոնք հաստատվում են լիազորված մարմնի կողմից”*: Նման նորմերի վերաբերյալ տեղեկություն չունենք:

16. Կետ 82-ում հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի ֆինանսավորման հարցերը կարգավորվում են Օրենքի Գլուխ IX-ում, իսկ Կարգի այս կետի երկար ու ոչ որոշակի շարադրանքը որևէ գործնական կիրառություն չի կարող ունենալ:

17. Կետ 83-ը կրկնություն է սույն Կարգի 30-րդ կետի և նոր նորմ չի պարունակում

18. Կետ 86-ում *“գիտանախագծային փաստաթղթերի”* մշակման վերաբերյալ անհրաժեշտ է ընդունել առանձին կարգ, ինչպես նաև հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման նորմերի գիտամեթոդական տեղեկատու: Այս երկու փաստաթղթերը պարտադիր պետք է հրապարակել, քանի որ աշխատանքներն իրականացվելու են լիցենզավորված անձանց միջոցով և համապատասխան նորմատիվային բազայի բացակայությունը կարող է կոռուպցիոն ռիսկեր առաջացնել:

19. Կետ 91-ը կրկնում է Օրենքի հոդված 32-ն ամբողջությամբ, որն ինքնին անթույլատրելի է: Միևնույն ժամանակ կատարվել են տեքստի փոփոխություններ, որոնք աղավաղել են Օրենքի դրույթը: Կետն ամբողջությամբ պետք է հանել:

20. VI. Սեփականությունը հուշարձանների նկատմամբ բաժնի բոլոր կետերով շարադրված նորմերը սույն Կարգով կարգավորվելու առարկա չեն կարող լինել: Դրանք կարող են կարգավորվել միայն օրենքով:

21 VII. Հուշարձանների և դրանց պահպանական գոտիների օգտագործումը բաժնում հուշարձանների դասակարգման 108-րդ կետով շարադրված տարբերակն անընդունելի է: Մեր կարծիքով օգտագործումը հուշարձանի բնույթ չէ, դա նրան չի կարող բնութագրել: Այն ընդամենը ռեժիմ է, որը պետք է ամրագրվի համապատասխան փաստաթղթով: Այդ փաստաթուղթն ըստ մեզ պահպանական պայմանագիրն է, որը հիմնական իրավական փաստաթուղթ է և հուշարձանի վկայագրի հետ միասին պարտադիր պետք է գրանցվի անշարժ գույքի միասնական կադաստրում:

Բաժինն ամբողջությամբ պետք է խմբագրել, որպեսզի հնարավոր լինի առավել լայն ընդգրկումով լուսաբանել ու հնարավորինս կարգավորել այն բոլոր գործընթացները, որոնք հնարավոր են ոչ միայն հուշարձանի պարզապես տնօրինման կամ օգտագործման առումով, այլ նաև դրանց հարմարեցման, քաղաքաշինական ու սոցիալական միջավայրերում ներգրավման, ինտեգրման առումով, նաև հասկանալով ու տեղայնացնելով այնպիսի նորահայտ հասկացողություններ, ինչպես հուշարձանների “ռեզեներացիան”, “վիտալիզացիան կամ ռեվիտալիզացիան” և այլն:

2.5. Այլ ուսումնասիրական աշխատանքներ

Ծրագրի շրջանակում ոլորտում առկա փորձագիտական ուսումնասիրական աշխատանքներին զուգահեռ նախատեսված էր խնդիրների վերհանման այլ գործողություններ: Դրանք էին քննարկումները ոլորտի ակտիվ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, ինչպես նաև մասնագիտական շրջանակներում առցանց հարցումների անցկացում և մամուլի մշտադիտարկում:

Առցանց հարցումներ

Հարցման թերթիկը տարածվել է առցանց և հասանելի էր բոլորի մասնակցել ցանկացողներին, ARMACAD գիտական ցանցով, Հայաստանի ճարտարապետների միության առցանց տեղեկատվական ցանցի բաժանորդներին, ինչպես նաև, ուղարկվել է նամակի տեսքով կոնկրետ հասցեատերերի:

Հարցումը նպատակ էր հետապնդում, ընդհանրական հարցերի միջոցով, բացահայտել ոլորտում առկա հիմնախնդիրները, ավելի խորքային և ուղղակի կերպով վերհանել ոլորտի օրենսդրական և ենթօրենսդրական ու դրանցից բխող գործընթացներում առկա թերացումները: Իրավիճակի ամբողջական բացահայտմանն էին նպաստում, նաև զուգահեռ անցկացվող մի շարք այլ միջոցառումներ, մասնավորապես մամուլի մշտադիտարկումն ու փորձագետների հետ մտքային գրոհ-քննարկումները:

Որպես հարցման թիրախային խումբ ընտրված էին քաղաքաշինության, մասնավորապես մշակութային ժառանգության պահպանությամբ զբաղվող ակտիվ մասնագետները, պետական համակարգում համապատասխան աշխատանքային փորձ ունեցողները, հասարակական սեկտորի ներկայացուցիչներ և այլն:

Մասնակցության հրավեր ուղարկվել է շուրջ 100 հոգու, որոնցից հարցմանը մասնակցել են 38 հոգի, որից միայն 32-ն են պատասխանել բոլոր հարցերին:

Անցկացված հարցման արդյունքների ամփոփումը թույլ տվեց վերանայել նախապես առաջադրված գործողությունների հերթականությունը և ուրվագծել ծրագրում քննարկման առաջադրվող խնդիրների ընդհանուր սահմանները: Համաձայն հարցումների արդյունքների, ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների ու պատմական միջավայրերի պահպանության

հիմնախնդիրներից ամենաառաջնայինը գործող օրենսդրական դաշտի անկատարությունն է և կոռուպցիոն դրսևորումները: Իբրև լուծում, առաջադրված տարբերակներից, ընտրվել է օրենսդրական ու ենթաօրենսդրական առաջարկությունների մշակումն ու պետական ու տեղական մակարդակներում լիազորությունների վերաբաշխումը:

Չնայած, անընդհատ ուշադրության կենտրոնում գտնվող հուշարձանների պահպանության գոտիների ու դրանց համապատասխան սահմանափակումների ձևավորման գործընթացներին, հարցվածների մոտ կեսը իրենց մասնագիտական գործունեության ընթացքում հուշարձանների պահպանության գոտիների հետ երբևէ չէին առնչվել ու միայն կեսն էր ծանոթ ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերի հետ:

Ժառանգության պահպանության հետ կապված պատասխանատվությունը, ու մասնավորապես հուշարձանի կարգավիճակ տրամադրելու լիազորությունները, համաձայն արդյունքների, անհրաժեշտ է պահպանել ՀՀ կառավարության ու մշակույթի նախարարության իրավասությունների շրջանակներում:

Ժառանգության պահպանության ոլորտում, առավել վտանգված են համարվում քաղաքաշինական ու ճարտարապետության հուշարձանները:

Հուշարձանի կարգավիճակի տրամադրման համար սահմանված չափորոշիչները, որոնք այժմ հստակ սահմանված չեն, առավել կարևորվել են քաղաքաշինական համալիրի մաս կազմելը, ճարտարապետական (գեղարվեստական) լուծումները, պատմական նշանակությունը, գոյություն ունեցող միջավայրում ունեցած դերը: Կառուցման թվականի, իբրև նոր չափորոշիչի սահմանամանը, հարցվածների կեսն է հավանություն տալիս և որպես օպտիմալ ժամկետ նշում են 30-100 տարի վաղեմության շինությունները: Սակայն նշվում է, որ տարեթիվը հուշարձանի կարգավիճակ տրամադրելու համար բավարար պայման չէ:

Լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքները

Անցկացված մշտադիտարկումը նպատակ էր հետապնդում վեր հանել վերջին շրջանում (սկսած 2010 թվականից) քաղաքաշինական ու ճարտարապետական ժառանգության պահպանության ու օգտագործման գործում վիճահարույց և օրենքի որոշակի շրջանակներից դուրս իրականացված գործողությունները, դեպքերը, լրատվամիջոցներում առավել հաճախ արձարժված օրինակները, ինչպես նաև հասարակության տեղեկացվածության ու

մտահոգվածության աստիճանը: Քննարկված մասնավոր դեպքերը, առավելապես վերջին տասնամյակում Երևան քաղաքի պատմամշակութային ժառանգության պահպանման օրինակներ են:

Իրականացված մշտադիտարկումը թույլ տվեց մասնագիտական քննարկումներին զուգահեռ, հուշարձանների պահպանության մասնավոր դեպքերն ընդհանրացնելով բացահայտել մտահոգություններն ու հստակ պատկերացում կազմել առկա խնդիրների բնույթի մասին:

Հավաքագրվել են հրապարակումներ լրատվամիջոցներում առավել լայն արձագանք գտած դեպքերի, օրինակ Սևան հյուրանոցի, Մոսկվա կինոթատրոնի ամառային դահլիճի, Արամի 30-ի ու Ծածկած շուկայի ամբողջական կամ մասնակի քանդումների մասին:

Հիշատակված դեպքերից Մոսկվա կինոթատրոնի ամառային դահլիճի օրինակը առավել լավ է հետահայաց կերպով արտահայտում գործողությունների ընթացքն ու հասարակության մեջ տիրող մտավախությունները և դրանից բխող վճռականությունը: Դրանով հնարավոր է լինում, հետևելով գործողությունների հերթականությանը, պատկերացում կազմել տիրող անբավարար ու թյուր տեղեկատվության հետևանքով ստեղծված հակասական իրավիճակի մասին ու բացահայտել հասարակական կարծիք ձևավորող մեխանիզմները: Ընթացակարգային դրույթների լիարժեք մշակված ու կիրառելի չլինելու պայմաններում, ինչպես նաև լիազորությունների ու պարտականությունների թերի բաշխվածության պայմանները բարդացնում են առաջադրված խնդիրների արագ կարգավորումը և խոչընդոտում հասարակության պահանջներին հետամուտ լինելուն:

Այնուհանդերձ, ամառային դահլիճի օրինակը հաջողության հասած ու հասարակության ամենալայն ներգրավմամբ (շուրջ 24 հազար ստորագրություն ի պաշտպանություն դրա պահպանման) առաջինն էր, և այն նպաստեց սեփական կարողությունների նկատմամբ թերահավատության վերացմանը ու կողմերի հետ “երկխոսություն վարելու” նոր որակ մտցրեց:

Դրան հաջորդած նմանատիպ դեպքերի համար կազմավորեցին մի շարք հասարակական նախաձեռնություններ, որոնք հետևողական ու շարունակական գործողություններով ստեղծեցին ցանց, որը հստակ դիրքորոշմամբ է միշտ հանդես գալիս քաղաքաշինական լայնամասշտաբ գործողությունների ու չծրագրված միջամտությունների վերաբերյալ:

Դիտարկելով այլ խնդրահարույց օրինակներ կարելի է ընդհանրացնելով ասել, որ Հայաստանի տարածքում ճարտարապետական ժառանգության պահպանության ու օգտագործման հետ կապված խնդիրները ներառում, բայց չեն սահմանափակվում ներքոնշյալ խնդիրների պատճառով ըստ առաջնահերթության ու հրատապ լուծման.

- Պատժիչ թույլ մեխանիզմների առկայություն,
- Կառավարման մարմինների միջև պարտականությունների ոչ հստակ բաշխում,
- Օրենսդրական համակարգի անկատարություն,
- Անբավարար մարդկային ու մասնագիտական ռեսուրսներ
- Քաղաքական կամքի բացակայություն կոռուպցիոն ռիսկերի բարձր մակարդակով,
- Հանրության ու մասնագիտական հանրույթի մասնակցության լծակների բացակայությունը,
- Ժառանգության իրական արժեքի վերաբերյալ ոչ ամբողջական պատկերացումներ:

Հաշվետվության առաջարկությունների մասում փորձ է արվել անդրադառնալ վերոնշյալ այն խնդիրներին, որոնք ակնկալվում են մասնագիտական հանրույթից և վերաբերում են օրենսդրական դաշտին:

3. Առաջարկություններ

3.1. Ընդհանրական բնույթի առաջարկություններ

Մշակութային ժառանգության արդի ընկալումները էականորեն տարբերվում են նախկինում ընդունված պատկերացումներից: Այսօր մշակութային ժառանգության պահպանումը ոչ միայն դիտարկվում է ոչ նյութական ժառանգության պահպանության հետ համատեղ, այլև այն հիմք է հանդիսանում է վերջին տասնամյակում համաշխարհային մակարդակով խրախուսվող կայուն զարգացման համար: Այն միտված է ապահովել զարգացում, հաշվի առնելով ներկայի կարիքների ու ապագայի պահանջմունքի ներդաշնակ գոյությամբ: Ի սկզբանե, ինչ որ տեղ իդեալականացված գաղափարն, այսօր բավականին շոշափելի հասկացություն է, որի լիարժեք ընկալման դեպքում հետևում է այն միտքը, որ հնի քանդման արդյունքում ստեղծված նորը չի կարող ունենալ այն արժեքը, ինչ ոչ հնի հաշվին ստեղծված նորը: 1990 ականների սկզբին առաջադրված այս հասկացությունները արդեն վաղուց դադարել են լոկ դեկլարատիվ բնույթի եզրույթներ լինելուց, այլև վերածվել են կենսակերպի ու մաս կազմել թե՛ քաղաքային, թե՛ գյուղական, թե՛ մարդածին (ձեռակերտ), և թե՛ բնական լանդշաֆտների զարգացման գործընթացներում:

Դրա վառ ապացույցն են վերջին մի քանի տարիներին մի շարք միջազգային և եվրոպական փաստաթղթերում ամփոփված դրույթներն ու առաջարկությունները, մասնավորապես ՅՈՒՆԵՍԿՈ-ի առաջարկությունը պատմական տարածքների պաշտպանության և ժամանակակից դերի վերաբերյալ (ընդունված 2011 թվականին) [7], ինչպես նաև եվրոպական մակարդակում ընդունված Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիան [13] (2000 թվական, Հայաստանի կողմից վավերացվել է 2004 թվականին), ինչպես նաև Կայուն եվրոպական քաղաքների վերաբերյալ Լայպցիգի խարտիան [14], (ընդունված 2007 թվականին):

Սույն ծրագրի ուսումնասիրական աշխատանքների շրջանակում Հայաստանում առկա իրավիճակի բացահայտման արդյունքում պարզվեց, որ այսօր արդիական են հատկապես քաղաքային միջավայրերում տեղի ունեցող գործընթացներում ճարտարապետական ժառանգության մաս կազմող օբյեկտների (հուշարձանների) պահպանության հետ առնչվող խնդիրները: Դա ունի իր թե՛ սուբյեկտիվ և թե՛ օբյեկտիվ պատճառները: Դրանց տեղադիրքը

քաղաքային, հիմնականում կենտրոնական տարածքներում գրավիչ գործոն՝ մասնավոր ներդրողների համար:

Թե՛ դիտարկման արդյունքում, թե՛ ոլորտում ակտիվ այլ մասնագետների կարծիքի հիման վրա պարզ դարձավ, որ օրենքում ավելի շատ ուշադրություն է դարձվում հնագիտական ժառանգության պահպանությանը, որը վերը նշված նկատառման հետ միասին ուղղորդեցին աշխատանքային խմբին կենտրոնանալ հատկապես ճարտարապետական ու քաղաքաշինական ժառանգության պահպանության խնդիրների վրա:

Ուսումնասիրական աշխատանքների և դրան հաջորդած փուլերում վերլուծվել են վերջին տարիներին մի շարք աղմկահարույց դեպքերի առիթով բացահայտված գործընթացային բացթողումները: Դրանք առնչվում են թե՛ հուշարձանների պահպանության ու քաղաքաշինական գործունեության կարգավորման հարցերին, թե՛ տարբեր մարմինների միջև պարտականությունների բաշխմանը: Ակնառու է, նաև, պարզագույն իրավագիտակցության պակասը: Այդ ամենն արտացոլված է առանձին օրենսդրական ակտերի վերաբերյալ այս գլխին հաջորդող գլուխներում շարադրված առաջարկություններում:

Դրանցով փորձ է արված լուծումներ առաջարկել ուսումնասիրական աշխատանքների ու վերլուծական փուլի ընթացքում վերհանված խնդիրների համար: Դրանք հավակնում են էականորեն ազդել ժառանգության պահպանության ոլորտում խնդիրների լուծման վրա, առանց բացառելու այլ նկատառումներ որոնք չեն արտացոլվել քննարկումների ընթացքում:

Կարևոր է համարվում Հայաստանի Հանրապետության ստանձնած ու ստանձնելիք պարտավորությունների արտացոլումը ազգային մակարդակում մշակված օրենսդրական փաստաթղթերում: Այդ իսկ պատճառով, մի շարք կետերում ուղղակի առաջարկվում է օգտագործել արդեն վավերացված փաստաթղթերում առկա ձևակերպումները:

Ժառանգության պահպանության նպատակը

Նախ և առաջ անհրաժեշտ է սահմանել ժառանգության պահպանության անհրաժեշտությունն ու դրա նպատակը: Ներկա օրենսդրության դիտարկման ընթացքում այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե մեր ողջ հնարավորությունները կամ մասնագիտական կարողություններն ուղղված են պարզապես մեր նախնիների թողածը պահպանելուն, և այն էլ ցավոք արդյունավետ չի

իրականացվում: Սակայն նպատակի ձևակերպման համար կարևոր է նախ ընդունել և հանրության համար ընկալելի դարձնել հայեցակետային (կոնցեպտուալ) գաղափարները:

Ժառանգության պահպանությունը նախ և առաջ պետք է միտված լինի պետության բնակչության շրջանում իրենց անմիջական շրջապատող միջավայրից դրական զգացողությունների ստացմանն ու այն “սիրելու” համար նախադրյալներ ստեղծելուն: Դրանում մեծ դեր կարող է ունենալ պատմականորեն ձևավորված՝ “ունիկալ” (բացառիկ) միջավայրի առկայությունը: Այն նպաստում է տարբեր մակարդակներում տեղական ու համընդհանուր հպարտության ձևավորմանը և փոխում է բնակչության վերաբերմունքը քաղաքին, թաղամասին և այլ միավորներին: Հատկապես կարևորվում են միջավայրը բնորոշող տարրերի տեղական առանձնահատկությունները, որոք էլ ավելի շոշափելի են դարձնում բնակիչների շրջանում “տիրոջ զգացողության” ու համապատասխանաբար՝ պատասխանատվության զգացմունքի առաջացմանը: Այս մոտեցումը կարելի է հանդիպել վերջին տարիներին ընդունված գրեթե բոլոր միջազգային փաստաթղթերում:

Ժառանգության պահպանությունը հաճախ դիտարկվում է որպես տնտեսական զարգացման բաղադրիչ: Ամենևին չանտեսելով խնդրի տնտեսական կողմը, անհրաժեշտ է նշել, որ վերը շարադրված հայեցակետը ևս ունի սոցիալական և տնտեսական խթանիչ նշանակություն: Քաղաքացիների տեղական մակարդակով տարածքային կապվածությունը ինքնին նպաստում է ներքին արտագաղթի նվազմանն ու երկրի համաչափ զարգացմանը:

Իրական տնտեսական բաղադրիչը հաճախ արտահայտվում է զբոսաշրջության զարգացման ծրագրերում պատմամշակութային հուշարձանների ընդգրկման համատեքստում: Սակայն զբոսաշրջության զարգացումը դիտարկվում է վերից վար գործընթաց (ազգային մակարդակով որոշման ընդունում ու խթանում), առանց տեղում ունենալով դրա արժևորման նախադրյալները: Այդ դեպքում նման զարգացումների երկարաժամկետ կտրվածքով չեն բխում ժառանգության, ինչպես նաև կայուն զարգացման տրամաբանությունից: Դրա համար էլ անհրաժեշտ է արժևորման գործընթացի ապակենտրոնացման ու տեղայնացման գործընթացները կայացնել ու զարգացնել, որն էլ իր հերթին դրանք դարձնելով է ավելի արդյունավետ:

Պահպանության կառավարման համակարգը

Ելնելով վերը նշվածից, ինչպես նաև համաշխարհային փորձից ու Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններից, ինչպես նաև ի գիտություն ընդունելով, որ զբոսաշրջությունը հանդիսանում է երկրի տնտեսական զարգացման առաջնահերթություններից մեկը, առաջանում է անհրաժեշտություն վերանայելու ժառանգության պահպանության կառավարման համակարգը, թե՛ Ազգային, թե՛ տարածքային, թե՛ տեղական մակարդակներում:

Այս ծրագրի շրջանակում ձեռք բերված եզրահանգումներից մեկը վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետությունում ժառանգության ոլորտի պետական կառավարման կազմակերպման իրավիճակային գնահատականին: Մասնավորապես, ժառանգության պահպանության համար պետական լիազորված մարմին հանդիսացող մշակույթի նախարարությունն ու իր ստորաբաժանում հանդիսացող գործակալությունը մեծ հաշվով ունեն թե՛ գործադիր, թե՛ վերահսկողական, թե՛ քաղաքականության մշակման գործառույթներ: Անհրաժեշտ է նշված գործողությունները տարանջատել, որը կնպաստի ոլորտում առկա խնդիրների էական նվազմանը:

Դեռևս 2011 թվականի ապրիլ ամսին “Անկախ” թերթում ուրբանլաբ ՀԿ-ի հիմնադիր Սարհատ Պետրոսյանի հրապարակած հոդվածում [42] հնչեցվել է քաղաքաշինության, մշակույթի և բնապահպանության նախարարություններից վերահսկողական գործառույթների տարանջատման և նոր մարմնում զետեղման գաղափարի մասին: Այն նաև համահունչ է ծրագրի շրջանակում բացահայտված խնդիրներին: Ելնելով դրանից առաջարկվում է, որպեսզի մշակույթի նախարարությունում գործող գործակալությունը է իրականացնի միայն հուշարձանների բացահայտման և դրանց վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն ու մշակումը: Իսկ վերահսկողական գործառույթները ցանկալի է իրականացնել քաղաքաշինության ոլորտի տեսչական գործընթացների համատեքստում:

Ինչպես ավելի ուշ կներկայացվի, ծրագրի շրջանակում մշակված առաջարկությունների կարևորագույն տարրերից է նաև մշակութային ժառանգության պահպանության գործադրման և կարգավորման գործընթացները ընդհանուր քաղաքաշինական գործընթացներից չտարանջատելը: Այսպիսով, մշակույթի նախարարությունը միայն սահմանում է հուշարձանի կարգավիճակը, որից հետո այն միայն մասնագիտական մշտադիտարկում է իրականացնում

հուշարձանների հետ տարվող քաղաքաշինական գործունեության ընթացքում: Նման կերպ է կառուցված նաև բազմաթիվ երկրներում հուշարձանների մասով գործընթացների իրականացումը, հատկապես որ դրանք իրականացվում են տեղական (ինքնակառավարման մարմինների) մակարդակներում: Հաշվի առնելով այն փաստը, որ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության քաղաքաշինական գործունեությունը ևս հանդիսանում է տեղական մակարդակի գործառույթ ապա սրանով հուշարձանների պահպանությունը դառնում է ավելի արդյունավետ:

Ավելի ուշ կխոսվի նաև ոլորտում մասնագիտացված շինարարական ու նախագծային միավորների՝ անհատների ու կազմակերպությունների լիցենզավորման կարևորության մասին, ինչը ևս հանդիսանում է օրենսդրական պահանջ, որը սակայն առ այսօր գործադրված չէ: Առաջարկվում է այն կիրառել և հատկապես նախագծային դաշտը դիտարկել որպես ինքնակարգավորվող դաշտ և դրա հավատարմագրման (լիցենզավորում, արտոնագրում, որակավորում և այլն) գործընթացը թողնել մասնագիտական հանրույթին, օրինակ Վերականգնող ճարտարապետների հայկական ասոցիացիային:

Ցանկալի կլիներ նաև տարբեր համայնքներում, ինչպես նաև մարզպետարաններում մշակույթի բաժիններում հուշարձանների համար մասնագետների ընտրության գործընթացներում ապահովել լիազոր մարմնի մասնագիտական մասնակցությունը:

Հուշարձանի կարգավիճակի տրամադրումը

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, հուշարձանի կարգավիճակը ենթադրում է դրանց ընդգրկումը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ՀՀ մարզերի (նաև Երևանի) հուշարձանների պետական ցանկերում, որոնք հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով: 3.3 գլխում խոսվելու է այդ ցուցակների կազմման ընթացակարգերի մասին, սակայն հաշվի առնելով նախկին փորձը երբ ցուցակում ներգրավված կառույցները հեշտությամբ կորցնում են իրենց կարգավիճակը կառավարության որոշմամբ (Սևան հյուրանոց, Մոսկվա կինոթատրոնի ամառային դահլիճ և այլն) առաջարկվում է առհասարակ վերացնել հուշարձանների ցանկերից առանձին հուշարձաններ հանելու հասկացությունը:

Այս դրույթի թերի կողմերի վերաբերալ բազմակողմանի քննարկման արդյունքում Ծրագրի աշխատանքային խմբի անդամները հանգել են այն մտքին, որ հուշարձանը պետք է հանել հուշարձանների ցանկից միայն այն դեպքում երբ այն այլևս գոյություն չունի, սակայն ժառանգության պահպանության մեթոդների թվին է պատկանում նաև վերստեղծում հասկացությունը, որը գրեթե բացառում է հուշարձանի կարգավիճակի կորուստ հասկացությունը: Առհասարակ այս դրույթը առանձնակի կարևորություն է ձեռք բերում ներկա պահին ժառանգության պահպանության շուրջ ստեղծված իրավիճակում և, եթե նույնիսկ այն ծայրահեղ պահպանողական տպավորություն է թողնում, ապա ելնելով ժառանգության պահպանության շահերից, առաջարկվում է այն այսօր համարել առաջնահերթություն և ընդունել այս առաջարկությունը:

Առաջարկվում է նաև հուշարձանի տեղափոխման դրույթի գրեթե վերացումը: Այն, համաձայն Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության կոնվենցիայի, կարող է կիրառվել միայն հուշարձանի անմիջական գոյությանը վտանգ սպառնալու դեպքում, այնինչ օրենքը մի քանի այլ ավելի անկարևոր դեպքերի համար է ենթադրում հուշարձանի տեղափոխությունը: Փաստորեն այսօր գործողության մեջ մտնող կառավարության 1616-ն որոշման հավելված 2-ում նշված “Երևան քաղաքի տեղափոխման ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկի” [35] գոյությունը հակասում է Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին:

Քննարկումների ընթացքում դիտարկվել է նաև հուշարձաններն ըստ նշանակության դասակարգելու տրամաբանությունը: Այս պահին դասակարգվում են հանրապետական և տեղական նշանակությամբ: Առաջարկվում է քառաստիճան համակարգ.

- Համամարդկային՝ հանրապետական/ազգային նշանակության այն հուշարձանները որոնք ներգրավված են ՅՈՒՆԵՍԿՈ-ի ցանկերում,
- Ազգային՝ նախկին հանրապետականի փոխարեն,
- տեղային կամ տարածքային՝ նախկին տեղականի փոխարեն,
- համայնքային:

Վերը նշվածը բխում է նաև ՅՈՒՆԵՍԿՈ-ի համապատասխան առաջարկության [7] 18-րդ հոդվածից, որտեղ մասնավորապես ասվում է՝ “Պահպանության ենթակա պատմական

տարածքների և դրանց շրջակայքի ցուցակը պետք է կազմվի ազգային, տարածքային կամ տեղական մակարդակով”:

Համայնքային մակարդակը հատկապես կարևորվում է, որպեսզի համայնքի ավագանու որոշմամբ հնարավոր լինի կոնկրետ կառույցների տալ հուշարձանի կարգավիճակ և կարգավորել այն նույն տրամաբանությամբ ինչպիսին տեղայինն է: Այն էականորեն նպաստելու է այս գլխում արդեն հնչեցված տեղական մակարդակով պահպանության արժևորմանը:

Չնայած նրան, որ ցանկերը արդեն կազմված են, սակայն առաջարկվում է օրենքով սահմանել հուշարձանների ցանկում ներգրավվելու չափորոշիչները: Մինչ այս այդ չափորոշիչները հաստատվել են փորձագիտական խմբի կողմից, որը ստեղծվել էր ցանկերի կազմման համար: Սակայն ավելի ուշ ՀՀ ոչ նյութական հուշարձանների ցանկի կազմման ժամանակ այն հաստատվել է ցանկի հետ (չնայած այն պետք է հաստատվեր նախապես): Առաջարկվում է այն ամրագրել օրենքով, մասնավորեցնելով յուրաքանչյուր դասակարգման համար առանձին:

Չնայած նրան, որ այդպես էլ չստացվեց նախարարությունում առկա հուշարձանների օրենքի պաշտոնական նախագիծը, սակայն ըստ առկա տեղեկությունների նրանում փորձ է արված ամրագրել որոշակի չափորոշիչներ: Սակայն դրանցում ու առհասարակ մասնագիտական շրջանակներում առկա դիրքորոշումներում բացակայում է ամենաչափելի չափանիշներից մեկը՝ կառույցի տարիքը: Սա կարող է էականորեն ոչ միայն փոխել հուշարձանների ցանկերի պարունակությունը, այլև նոր որակ հաղորդել ողջ ոլորտին: Այդ հարցադրումը ներառված է եղել նաև հարցումների ընթացքում: Ստորև ներկայացված է մի դրվագ՝

Աղյուսակ 2. Հարցումների ընթացքում հուշարձանի կարգավիճակի տրամադրման չափորոշիչներին վերաբերող հարցերի արդյունքները (ավելի մանրամասն տես հավելված 1-ում)			
Հ/Հ	Հարցադրում և պատասխաններ	Հարցվածների	
		քանակը	տոկոսը
7. Ներքոնշյալ չափորոշիչներից որո՞նք պետք է կիրառվեն պետության կողմից պահպանվող հուշարձանների ցուցակի (ցանկի) կազմման ժամանակ.			
1	կառուցման թվականը	19	57.6%
2	նախագծող ճարտարապետը	15	45.5%
3	տիպաբանական առանձնահատկությունը	19	57.6%
4	քաղաքաշինական համալիրի մաս կազմելը	28	84.8%
5	Շինանյութը	6	18.2%
6	գործառնական նշանակությունը	9	27.3%

7	նախնական իրավիճակի անխաթարությունը	9	27.3%
8	ճարտարապետական (գեղարվեստական) լուծումները	27	81.8%
9	պատմական նշանակությունը	30	90.9%
10	նախկին օգտագործողների (բնակիչների) նշանավոր լինելը	23	69.7%
11	հազվագյուտ լինելը	24	72.7%
12	գոյություն ունեցող միջավայրում ունեցած դերը	27	81.8%
13	Այլ	2	
8. Ձեր կարծիքով կառուցման թվականի չափորոշիչի դեպքում քանի տարվա վաղեմությունը կարող է հիմք հանդիսանալ հուշարձանի կարգավիճակ տալու համար			
14	մինչև 30 տարի	6	22.2%
15	31-50 տարի	10	37.0%
16	51-100 տարի	14	51.9%
17	101 – 150	5	18.5%
18	151 – 200	6	22.2%
19	200 –ից ավելի	7	25.9%

Դրանից բխում է, որ նպատակահարմար է որպեսզի 100 տարվա վաղեմություն ունեցող ցանկացած կառույց ներառել հուշարձանների ցանկերում: Այս պրակտիկան ընդունված է բազմաթիվ երկրներում, օրինակ Միացյալ Թագավորությունում այն 180 [40] տարի է:

Կատարվել են նաև ցուցակներում խնդրահարույց տեսակների վերաբերյալ վերլուծություն: Օրինակ բացահայտվել է որ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կան միայն երկու պահպանվող մշակութային տարածքներ: Չնայած այն փաստին, որ Օրենքը վերաբերում է նաև պատմական միջավայրերին, սակայն հանրապետության ամբողջ տարածքի համար կառավարության ցանկի դիտարկման արդյունքում պարզվեց, որ նշված երկու մշակութային տարածքներից բացի, ցուցակներում առկա են միայն 8 պահպանման ենթակա քաղաքաշինական միավորներ՝ փողոցներ, բակեր կամ այլ տարածական միավորներ: Աղյուսակում 3-ում երևում է ընտրված ութը պատմական բնակավայրերում (դրանք այն քաղաքներն են որոնք ներառված են եղել Եվրամիության կողմից ֆինանսավորվող Կիլյան նախաձեռնության ծրագրի մեջ) որոնցում շատ փոքր թիվ են կազմում 19-րդ դարի վերջի ու 20-րդ դարի սկզբի կառույցներ: Դրանից բխում է որ առհասարակ ցուցակները որպես հիմնական փաստաթուղթ պահպանման ենթակա ժառանգության սահմանների վերաբերյալ եթե նույնիսկ իրականացնում են կոնկրետ կառույցների պահպանություն, սակայն առկա օրենսդրությունը էականորեն նվազ կերպով է կատարում պատմական միջավայրերի պահպանությունը:

Աղյուսակ 3. Կիևյան նախաձեռնության շրջանակում պատմական արժեք ներկայացնող բնակավայրերում Պետական ցանկերում ներառված Հուշարձանների վերաբերյալ թվային վերլուծություն						
Հ/Հ	Քաղաք	Բնակելի տներ			Պատմական միջավայրեր	1920-2010 թթ.-ի ընթացքում կառուցված
		ավելի քան 100 տարվա վաղեմության	մինչև 100 տարվա վաղեմության	ընդհանուր		
1	Երևան	69	82	151	7	345
2	Դիլիջան	23	48	71	0	47
3	Աշտարակ	10	0	10	0	15
4	Մեղրի	35	1	36	0	39
5	Գորիս	174	2	176	0	190
6	Ալավերդի	2	0	2	0	7
7	Գյումրի	783	91	874	1	852
8	Վաղարշապատ	8	8	16	0	33

Ծրագրի մշակման ընթացքում ստեղծված Երևանի պահպանության նախաձեռնությունների միավորումը առաջադրեց Երևանի պատմական կենտրոնի վերաբերյալ հատուկ ուշադրության անհրաժեշտությունը, որից հետո կառավարությունը ստեղծեց աշխատանքային խումբ Երևանի կենտրոնի կարգավորման վերաբերյալ իրավական ինչ որ փաստաթղթերի ստեղծման համար: Սակայն ՀՀ օրենսդրության շրջանակում ցանկացած տարածքի հատուկ պահպանման կարգավիճակ տալը արդեն բավարար է ընթացակարգերի փոփոխության համար:

Պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ

Այս մասին ավելի մանրամասն խոսվելու է 3.2 գլխում, սակայն մամուլի մշտադիտարկման ընթացքում արդեն պարզ էր, որ անհրաժեշտ փոփոխություններ պետք է կատարվեն Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում ու Քրեական օրենսգրքում, նպատակ ունենալով խստացնել պատասխանատվության չափերը ցանկացած տեսակի հուշարձանի նկատմամբ ոտնձգության դեպքում:

Քաղաքաշինական փաստաթղթերի համակարգը

Չնայած այն փաստին որ քաղաքաշինության ոլորտի կարգավորման ամբողջ դաշտի դիտարկումը էականորեն լայնացնելու էր ուսումնասիրության շրջանակները, սակայն այն մասնակիորեն ներառվել է, համապատասխանաբար՝ առաջարկություններով: Այն մասնավորապես վերաբերում էր օրենքով ամրագրված մի շարք տեղեկությունների՝ դրանք են պահպանական գոտիները և պատմամշակութային հիմնավորման նախագծերը: Համաձայն մի շարք փաստաթղթերի դրանք պետք է դիտարկել որպես ելակետային նյութ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համար, սակայն մի շարք այլ կարգերով դրանք հանդիսանում են ստորադաս ծրագրային փաստաթղթեր: Առաջարկվում (որի մասին ավելի մանրամասն ներկայացված է 3.3 գլխում) պատմամշակութային հիմնավորման նախագիծը դիտարկել որպես ծրագրային փաստաթղթերի, մասնվարապես գլխավոր և գոտիավորման հատկագծերի պարտադիր մաս: Ելակետային համարել միայն հուշարձանների պահպանության գոտիները, իսկ մնացած գոտիները թողնել նախագծող ճարտարապետների ու քաղաքաշինարարների նախագծային պարտականությունների թվին: Կարևոր է նաև նույն նախագծերի կարգերում ամրագրել լիցենավորված վերականգնող ճարտարապետների ներգրավումը նախագծերի մշակման փուլերում:

Հուշարձանների կադաստր

Ծրագրի աշխատանքային խումբը օրենքի պահանջ հանդիսացող կադաստրի բացակայությունը համարում է ոլորտում առկա խնդիրների մեծ մասի հիմնական պատճառը: Այն կարիք ունի առանձին ենթաօրենսդրական փաստաթղթի շրջանակում կարգավորման ու գործադրման: Այդ մասին և 3.3 գլխում խոսվելու է, սակայն այն պետք է հանդիսանա գործակալության հիմնական գործառույթը, որը պետք է համապատասխան կապերով արտացոլվի ՀՀ տարածքում առկա այլ կադաստրների հետ:

Հատկապես անշարժ գույքի կադաստրում այս տեղեկատվության ներառումը կարևոր է քանի որ այն հանդիսանում է սահմանափակում գույքի վրա և ցանկացած կարգավիճակի փոփոխություն պետք է արտացոլված լինի անշարժ գույքի սեփականության վկայականում:

Ոչ վաղ անցյալի ժառանգության արժևորում

Հաշվետվության պատրաստման օրերին (նոյեմբերի վերջին) Վիեննայի ճարտարապետական կենտրոնում տեղի ունեցավ “Խորհրդային մոդեռնիզմ (1955–1991թվականներ)” Անհայտ պատմություններ” կոնգրեսը և ցուցահանդեսը: Վիեննայի 19-րդ ճարտարապետական կոնգրեսի ընդունած բանաձևում մասնավորապես ասվում է՝ *“Կոնգրեսը ճանաչեց այս ճարտարապետական ժառանգության բարձր գեղարվեստական և պատմական նշանակությունը՝ որպես համաշխարհային մշակույթի անքակտելի մաս”* [41]: Նույն օրերին Լայպցիգում տեղի ունեցավ նաև ICOMOS-ի (Հուշարձանների ու պատմական տարածքների միջազգային խորհուրդ, International Council on Monuments and Sites) համաժողովը, որի շրջանակում կրկին մասնագիտական քննարկումներ են ընթացել Կենտրոնական և արևելյան եվրոպայում սոցիալիզմի ճարտարապետական ժառանգության պահպանության խնդիրների վերաբերյալ: Այս երկուսը հանդիսանում են ոչ վաղ (շուրջ 50 տարվա) վաղեմություն ունեցող ժառանգության արժևորման ու դրա տրամաբանական շարունակությունը հանդիսացող պահպանության խնդիրների վերաբերյալ կարևոր երևույթներ: Աղյուսակ 3-ում ներկայացված թվային տվյալները վկայում են որ նշված ժամանակաշրջանի կառույցների մի մասն են միայն ներգրավված ծուցակներում:

Մամուլի մշտադիտարկման ընթացքում բացահայտվեց, որ եթե վերջին տասնամյակում վտանգված էին նախախորհրդային շրջանին վերաբերող ժառանգությունը, ապա վերջին երկու տարիներին արդեն վտանգված են խորհրդային շրջանին վերաբերող կառույցները (Ծածկած շուկա, ԱԳՆ-ի շենքը և այլն):

Հարկ է նաև նշել, որ գերակշիռ ծավալ կազմող թամանյանական դպրոցի ճարտարապետական նմուշների կողքին, համաշխարհային ճարտարապետական ժառանգության համատեքստում մեծ արժեք են ներկայացնում 1920-1935 թվականներին մոդեռնիստական (կոնստրուկտիվիստական) ճարտարապետների (Կ. Հալաբյան, Մ. Մազմանյան, Գ. Քոչար և այլք) աշխատանքները, ինչպես նաև 1960-1980-ական թվականներին վերաբերող Հայաստանին հատուկ տեղական մոդեռն ճարտարապետական դպրոցի մի շարք այլ ներկայացուցիչների (Կ. Հակոբյան, Ա. Թաթևանյան, Ս. Խաչիկյան, Ֆ. Դարբինյան և այլք) աշխատանքները:

Այս ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել առանձին գիտական ուսումնասիրություններ, որոնց պետք է հաջորդի պահպանվող հուշարձանների ցանկերի վերանայումը:

3.2. Օրենքների վերաբերյալ

Օրենքի վերաբերյալ մեր առաջարկությունները պայմանականորեն բաժանում ենք մի քանի խմբերի.

- Օրենքի համապատասխանեցում Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիային (Գրանադա, 1985թ.),
- Օրենքից բխող պահանջների հիման վրա մի շարք այլ օրենքներում փոփոխությունների կատարում,
- Ընդհանուր այլ առաջարկություններ:

Օրենքի համապատասխանեցում Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիային

Մասնավորապես առաջարկում ենք.

1. “Հոդված 1. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ (այսուհետ՝ հուշարձաններ) են պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձանները գտնվում են պետության պահպանության ներքո:”

Գտնում ենք, որ հոդված 1-ում հստակորեն չի առանձնացվում “ինտերիեր” տիպը: Ուստի, առաջարկում ենք լրացնել սույ հոդվածը հիմք ընդունելով “Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին” կոնվենցիայի հոդված 1-ը, որտեղ, կարծում ենք, շատ ավելի ամբողջական ձևակերպված է անշարժ հուշարձանների սահմանումը:

“Սույն Կոնվենցիայի նպատակների համար որպես «ճարտարապետական ժառանգություն» են համարվում հետևյալ անշարժ արժեքները.

4. հուշարձանները՝ պատմական, հնագիտական, գեղարվեստական, գիտական, սոցիալական կամ տեխնիկական տեսանկյունից մասնավորապես ուշագրավ իրականացումները, ներառյալ դրանց անքակտելի մաս կազմող տեղադրումները և հարդարանքի տարրերը,
5. ճարտարապետական համալիրները՝ քաղաքային կամ գյուղական կառույցների համաձին խմբեր, որոնք պատմական, հնագիտական, գեղարվեստական, գիտական, սոցիալական և տեխնիկական տեսանկյունից հանդիսանում են մասնավորապես ուշագրավ, և որոնց կապակցվածությունը բավարար է տեղագրական (տոպոգրաֆիկ) սահմանազատման առարկա հանդիսանալու համար,
6. տեսարժան վայրերը՝ մարդու և բնության կողմից ստեղծված համակցված աշխատանքներ, որոնք կառուցված են մասնակիորեն, պատմական, հնագիտական, գեղարվեստական, գիտական, սոցիալական կամ տեխնիկական տեսանկյունից հանդիսանում են ուշագրավ և կազմում են բավարար համարվող բնութագրական ու միատարր տարածք՝ տեղագրական (տոպոգրաֆիկ) սահմանազատման առարկա հանդիսանալու համար:”

2. Հոդված 9. Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում լիազորված մարմնի իրավասությունը.

ժդ) նպաստում է ոչ պետական սեփականություն համարվող հուշարձանների պահպանական միջոցառումների իրականացմանը.

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայի հոդված 6-ը հստակ սահմանում է նպաստման հիմնական ուղենիշները.

“Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է՝

4. հանրային իշխանությունների կողմից ազգային, տարածաշրջանային և տեղական իրավասությունների և առկա բյուջետային միջոցների սահմաններում, տրամադրել ֆինանսական աջակցություն՝ իր տարածքում գտնվող ճարտարապետական ժառանգության պահպանման և վերականգնման աշխատանքներ իրականացնելու նպատակով.

5. անհրաժեշտության դեպքում ձեռնարկել հարկային բնույթի միջոցներ՝ այդ ժառանգության պահպանությանն աջակցելու նպատակով.

6. խրախուսել ճարտարապետական ժառանգության պահպանմանն ու վերականգնմանն ուղղված մասնավոր նախաձեռնությունները:”

Առաջարկում ենք հիմք ընդունել կոնվենցիայից մեջբերվածը և օրենքի այդ հոդվածը լրացնել՝ հստակեցնելով, որ պետությունը պարտավոր է անհրաժեշտության դեպքում ձեռնարկել հարկային բնույթի միջոցներ ժառանգության պահպանությանն աջակցելու նպատակով: Ի դեպ, կոնվենցիայում չի առանձնացվում պետական սեփականություն և մասնավոր սեփականություն համարվող հուշարձանները:

Օրենքից բխող պահանջների հիման վրա մի շարք այլ օրենքներում փոփոխությունների կատարում

3. Հոդված 16. Հուշարձանների տարածքը, պահպանման գոտիները, դրանց կարգավիճակը և օգտագործման ռեժիմը.

Հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանության ապահովման, պատմագեղարվեստական արժեքների բացահայտման, նպատակային օգտագործման և բարենպաստ տեսողական ընկալման նպատակով սահմանվում է հուշարձանի պահպանական գոտիների համակարգ և օգտագործման ռեժիմ:

Այս կապակցությամբ տեղին ենք համարում խոսել Վարչական իրավախախտումների մասին: Այսպիսով՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 95-րդ հոդվածը սահմանում է.

“Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության կամ օգտագործման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից ութսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրհիսնապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

Առաջարկում ենք չափի ավելացումով խստացնել սահմանված “հիսնապատիկից ութսունապատիկ/հարյուրհիսնապատիկից երկու հարյուրապատիկ” չափը:

4. Հոդված 20. Նորահայտ հուշարձանների պահպանության և անվթարության ապահովումը.

Հուշարձանի հայտնաբերման փաստը թաքցնող, այն հաշվառելու և ուսումնասիրելու համար արգելքներ ստեղծող, ինչպես նաև գործոնները ոչնչացնող կամ յուրացնող անձը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

“Պատասխանատվության” պատշաճ և ամբողջական ձևակերպման համար առաջարկում ենք Քրեական Օրենսգրքի 264-րդ հոդվածի համապատասխան խմբագրում և լրացում:

5. Հոդված 32. Հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներ իրականացնողները.

Հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներն իրականացնում են մասնագիտացված կազմակերպությունները և այն մասնագետները, որոնք ունեն համապատասխան լիցենզիա և տվյալ հուշարձանում աշխատանքներ կատարելու համար սահմանված կարգով տրված թույլտվություն:

Հայաստանի Հանրապետության լիցենզավորման մասին օրենքում, որևէ նման լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ չկա: Միայն հոդված 5-ում ակնարկվում է հետևյալը՝

“Գործունեության առանձին տեսակներով զբաղվելու լիցենզավորման նպատակներն են՝

4. անձանց կյանքին, առողջությանը, գույքին, պեղության և հասարակության շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վրանգի սպառնալիքով հղի գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողության իրականացումը.”

Առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության լիցենզավորման մասին օրենքում կատարել համապատասխան լրացում:

Ընդհանուր այլ առաջարկներ

6. Հոդված 6. Հուշարձանների դասակարգումը.

Հուշարձանները դասակարգվում են նաև ըստ բնույթի՝

գ) քաղաքաշինական և ճարտարապետական՝ պարմական բնակավայրերի, թաղամասերի, փողոցների, այգիների կառուցապարման հատվածներ, բնակելի, պալատական,

պաշտամունքային, հասարակական, արտադրական և ճարտարագիտական կառույցներ, ժողովրդական տներ, ճարտարապետական կոթողներ...”:

Այս հոդվածում հստակ ընդգծված է “հատվածներ” եզրույթը և առանձին օբյեկտները, սակայն հոդվածն ավելի ամբողջական դարձնելու համար առաջարկում ենք այն վերաձևակերպել հետևյալ կերպ.

“գ) քաղաքաշինական և ճարտարապետական՝ պատմական բնակավայրերի, թաղամասերի, փողոցների, այգիների կառուցապատում(ներ) և/կամ կառուցապատման հատվածներ...”:

7. Հոդված 11. Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը.

թ) հուշարձանների պահպանական գործերում հողի, համայնքի սեփականություն համարվող հուշարձան-շենքերի և շինությունների սեփականատերերի և օգտագործողների հետ կնքում են հուշարձանների պահպանության պայմանագիր (պարտավորագիր), որի մեկ օրինակը ներկայացնում են լիազորված մարմին:

Առաջարկում ենք, որ Կառավարությունը մշակի հուշարձանի պահպանության համար նախատեսված պայմանագրի ձև, որը կկիրառվի սեփականատեր և լիազոր մարմին հարաբերությունները հստակեցնելու նպատակով:

8. Հոդված 22. Հասարակայնության աջակցությունը հուշարձանների պահպանության և օգտագործման աշխատանքներին.

Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձինք իրենց անմիջական մասնակցությամբ, նախաձեռնությամբ, հովանավորությամբ, նվիրատվությամբ, ֆինանսական և նյութատեխնիկական օգնությամբ կարող են աջակցել հուշարձանների հայտնաբերման, պետական հաշվառման, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման աշխատանքներին, կարող են ներկայացնել և քննարկման դնել բնագավառի վերաբերյալ մասնակի կամ համալիր առաջարկներ, ծրագրեր:

Առաջարկում ենք “նվիրատվության” հետ կիրառել նաև “նվիրաբերություն” եզրույթը, որի մանրամասները սահմանվում են Քաղաքացիական Օրենսգրքի 605րդ հոդվածով:

9. Հոդված 38. Հուշարձանների օգտագործման հիմնական նպատակները.

Հուշարձանն օգտագործողները, եթե իրենց կանխամտածված կամ ոչ կանխամտածված գործողություններով վնասել են հուշարձանի պահպանությանը, կորցնում են օգտագործման իրավունքը:

Վերը նշված հոդվածը կարիք ունի վերաձևակերպման, քանզի օգտագործողը չի կարող վնասել հուշարձանի պահպանությանը: Առաջարկում ենք այն շարադրել հետևյալ խմբագրությամբ.

“Հուշարձանն օգտագործողները, եթե իրենց կանխամտածված կամ ոչ կանխամտածված գործողություններով վնասել են հուշարձանի պահպանությանն ուղղված գործընթացին/ներին, կորցնում են օգտագործման իրավունքը:”

3.3. Ենթաօրենսդրական փաստաթղթերի վերաբերյալ

Սույն ուսումնասիրության շրջանակներում չենք անդրադարձել “Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգի” (այսուհետև՝ Կարգ) “IV. Հուշարձանների հետախուզումը և հնագիտական պեղումները” բաժնին, քանի որ այն առավելապես գիտամեթոդական և գիտագործնական նշանակություն ունի, և այդ բաժնում հավելյալ առաջարկությունների անհրաժեշտություն մենք այսօր չենք տեսնում: Միայն մեկ նկատառում. Կարգի 77-րդ կետում նշված “...գիտավերականգնման հատուկ նորմերի , որոնք հաստատվում են լիազորված մարմնի կողմից” վերաբերյալ և 86-րդ կետում նշված “գիտանախագծային փաստաթղթերի” մշակման համար պետք է ընդունել իրավական ակտեր, թերևս գերատեսչական ակտերի մակարդակով: Ցանկալի է նաև՝ հրապարակել հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման գիտամեթոդական տեղեկատու:

Կարգի բոլոր բաժիններն էական խմբագրման անհրաժեշտություն ունեն: Ամբողջությամբ պետք է հանել “VI. Սեփականությունը հուշարձանների նկատմամբ” բաժինը, քանի որ նրա բոլոր կետերի շարադրանքով փորձ է արվել սահմանել նորմեր, որոնք ՀՀ օրենսդրության համաձայն կարող են սահմանվել միայն օրենքով (“Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի հոդված 9-ի 4-րդ մաս): Նույն հիմնավորմամբ պետք է հանել նաև Կարգի 33-րդ և 42-45-րդ կետերը, ինչպես նաև Օրենքի 32-րդ հոդվածի և սույն Կարգի 30-րդ կետի անհարկի կրկնություն հանդիսացող՝ համապատասխանաբար 91-րդ և 82-րդ կետերը: Հուշարձանների նկատմամբ սեփականության իրավունքի, դրանց օտարման և օգտագործման տրամադրելու (այդ թվում՝ սահմանափակ օգտագործման իրավունքով), սեփականատերերի և օգտագործողների նկատմամբ խրախուսման միջոցներ կամ սահմանափակումներ, ինչպես նաև պատժամիջոցներ կիրառելու, ընդհուպ մինչև սեփականության իրավունքը դադարոցնելու և օբյեկտը հետ վերցնելու կարգն ու պայմանները անհրաժեշտ է նորագույն մոտեցումների լույսի ներքո վերանայել և ընթացակարգային մանրամասնությամբ վերաշարադրել Օրենքում, սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ կատարելով VII և VIII գլուխներում:

Կարգի առանձին կետերի վերաբերյալ մեր առաջարկները տեղ են գտել “դիտողություններ” բաժնում: Ստորև ներկայացնում ենք մեր առաջարկությունները հայեցակարգային խմբավորմամբ.

1. Հուշարձանների պետական հաշվառման համակարգի կայացման համար անհրաժեշտ է նախ հստակ և միարժեք սահմանումներ տալ Կարգում (նաև՝ Օրենքում) օգտագործվող տերմիններին: Նույն կերպ պետք է սահմանել պետական հաշվառման փաստաթղթերի կազմը: Ընդ որում դա պետք է արվի ոչ միայն համապատասխան ձևաթղթերի հաստատումով, այլև տեքստային շարադրանքով:

Օրենքի հոդված 13-ով սահմանվել է, որ հուշարձանների պետական ցուցակները հիմնական փաստաթուղթ և իրավական հիմք են օբյեկտին հուշարձանի կարգավիճակ տալու, սակայն մեր կարծիքով հուշարձանի վկայագիրը գլխավոր իրավական փաստաթուղթն է, որը մանրամասն տեղեկություններ է պարունակում հուշարձանի մասին: Այն մեր պատկերացմամբ հուշարձանի անձնագիրն է և նրանում պարունակվող տեղեկությունները նույնպես վերը նշված եղանակով կետ առ կետ պետք է թվարկվեն և ունենան համապատասխան դասակարգիչներ ժամանակակից տեխնիկական միջոցներով դրանք գրանցելու և պահպանելու համար: Նույնպիսի թվարկում պետք է ունենան նաև վկայագրին որպես համալրում կցվող հավելյալ “վավերագրերը”, որոնք կարող են ունենալ պարտադիր և լրացուցիչ բաղկացուցիչներ: Ցանկալի է սահմանել նաև այդ նյութերի պատրաստման որակի և հավաստիության ապահովման վերաբերյալ չափորոշիչներն ու կանոնները:

Անհրաժեշտ է վերանայել հուշարձանների պետական ցուցակների հաստատված ձևը: Դրանք պետք է կազմվեն Օրենքի սահմանած դասակարգումներին համապատասխան, չպետք է պարունակեն մոտավոր ճշտության տվյալներ, իրավական ակտով պետք է շարադրել յուրաքանչյուր սյունակի լրացման կարգը:

2. Հուշարձանների պետական հաշվառման վերջնական հանգրվանը Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների կադաստրն է (այսուհետև՝ հուշարձանների կադաստր): Այն պետք լինի որոշակիորեն առանձնացված, հարբերական ինքնուրույնությամբ, հստակ սահմանված աշխատակարգով հաստատություն, որտեղ անժամկետ պահպանության են հանձնվում հուշարձանների պետական հաշվառման բոլոր փաստաթղթերը իրենց հիմնական ու լրացուցիչ բաղադրյալներով, պահպանական գոտիների համակարգի և պատմամշակութային հիմնավորման բոլոր նախագծերը: Այն միակ մարմինն է, որը տրամադրում է հուշարձանների վերաբերյալ հավաստի և սպառիչ տեղեկատվություն: Օրենքի

և կարգի շարադրանքում պետք է քացառել տարատեսակ արխիվների թվարկումը և նրանց որևէ գործառույթ վերագրելը: Օրենքը նույնիսկ նույնացնում է հուշարձանների պետական հաշվառումը և կադաստրը (հոդված 9-ի ը) կետ)՝ ”ը) վարում է հուշարձանների պետական հաշվառումը (կադաստրը)”:

Ցավոք այսքանով ավարտվում է Օրենքում կադաստրի մասին հիշատակումը: Մենք չափազանց կարևորում ենք կադաստրի կայացումը և առաջնահերթ անհրաժեշտություն ենք համարում Օրենքում առանձին հոդվածի ավելացումը “Քաղաքաշինության մասին” ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի նմանությամբ, սույն Կարգում առանձին բաժնի շարադրումը , ինչպես նաև համապատասխան գերատեսչական նորմատիվ ակտի ընդունումը:

3. Լիազորված մարմնի կազմում գործող կոլեգիալ մարմինները (մեր հետազոտման առարկա հանդիսացող բնագավառի) երեքն են, որոնցից միայն մեկի՝ միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի կազմավորման և գործունեության մասին կան սահմանված նորմեր Օրենքում, մյուս երկուսի՝ փորձագիտական հանձնաժողովի և գիտամեթոդական խորհրդի վերաբերյալ ընդունված նորմատիվային ակտ մեզ հայտնի չէ: Առաջարկում ենք վերջինների իրավասություններն ու պարտականությունները համատեղել մեկ մարմնում, որի կազմավորման կարգն ու կանոնադրությունը կամ աշխատակարգը սահմանել իրավական նորմատիվ ակտով: Հաշվի առնելով աշխատանքների ու իրավասությունների լայն ընդգրկումը, առաջարկում ենք Օրենքում լրացում կատարելով սահմանել այդ հանձնաժողովի լիազորությունները և կառավարության որոշմամբ հաստատել կազմն ու կանոնադրությունը:

4. Հուշարձանների պահպանական գոտիների համակարգի և պատմամշակութային հիմնավորման նախագծերի վերաբերյալ, բազմաթիվ քննարկումներից հետո, մեր ձևավորված կարծիքը հետևյալն է.

Նախ պետք է հստակ զանազանել և միարժեք նշանակությամբ օգտագործել “պահպանական գոտի” և “պահպանության գոտի” տերմինները՝ ըստ Օրենքի հոդված 16-ի:

Պահպանության գոտին հուշարձանի զբաղեցրած և նրա սպասարկման ու պահպանության համար անհրաժեշտ հողամասն է: Այն անբաժանելի է ու անփոփոխ և հուշարձանի հետ միասին ենթակա է գրանցման անշարժ գույքի միասնական կադաստրում: Այդ հողամասը դասվում է ՀՀ

հողային օրենսգրքով [18] սահմանված՝ հատուկ պահպանվող տարածքների հողերի նպատակային նշանակության (կատեգորիայի) պատմական և մշակութային գործառական նշանակության հողերի շարքին:

Պահպանական գոտին քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է: Նրա մշակումն իրականացվում է քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) բոլոր փուլերի փաստաթղթերի մշակման հետ միաժամանակ, որոնց կազմում պետք է լինի՝ ըստ ՀՀ օրենսդրության:

Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման համար որպես ելակետային հիմք նպատակահարմար է դիտարկել միայն պահպանության գոտին:

Գլխավոր հատակագծերի մշակմանը կարող է նախորդել, կամ նրա հետ միաժամանակ մշակվել պատմամշակութային հիմնավորումների նախագիծը և պահպանական գոտիների սահմանները, իսկ գոտիավորման նախագծերի կազմում կարող են մշակվել պահպանական գոտիներն իրենց ենթագոտիներով, որոնցից պահպանության գոտին անփոփոխ է, իսկ կառուցապատման և լանդշաֆտի կարգավորման գոտին մշակվում են նախագծային աշխատանքների ընթացքում համադրվելով քաղաքաշինական միջավայրի պահպանման, վերափոխման և կայուն զարգացման խնդիրների ամբողջ համատեքստի հետ:

Պահպանական գոտիների և պատմամշակութային հիմնավորումների նախագծերը պարտադիր պահպանման են հանձնվում հուշարձանների կադաստրում, միևնույն ժամանակ քաղաքաշինական փաստաթղթերը, որոնց կազմում դրանք ընդգրկված են, պահպանվում են քաղաքաշինական կադաստրում և գրանցվում են անշարժ գույքի միասնական կադաստրում:

5. “VII. Հուշարձանների և դրանց պահպանական գոտիների օգտագործումը” բաժինը ավելի պարզ և գործնական շարադրանք կարող էր ունենալ, եթե մենք ելնեինք այն հիմնադրույթից, որ հուշարձանն օգտագործման կարելի է տալ միայն այն դեպքում, եթե.

- հուշարձանի պետական հաշվառման բոլոր փաստաթղթերը ձևակերպված են և պահպանության են տրված կադաստրում,
- հուշարձանի վկայագիրը և պահպանության գոտին գրանցված են անշարժ գույքի միսնական կադաստրում,

- առկա է հուշարձանի պահպանական գոտու նախագիծը, սահմանված է հուշարձանի պահպանության ռեժիմը:

Գիտամեթոդական և փորձագիտական հանձնաժողովը քննում է օգտագործման ծրագրի համապատասխանությունը հուշարձանի պահպանության ռեժիմին և տալիս համաձայնություն,որից հետո կնքվում են օգտագործման տրամադրելու և հուշարձանի պահպանական պայմանագրերը, որոնք գրանցվում են անշարժ գույքի միասնական կադաստրում: Բնականաբար պայմանագրերում պետք է հստակ շարադրված լինի պարտավորություններ չկատարման հետևանքների մասին:

4. Ամփոփում

Հայերեն

Մեր օրերում ավելի ու ավելի շատ է խոսվում մեզ շրջապատող մարդածին միջավայրում տեղի ունեցող փոփոխությունների ու քաղաքաշինական գործունեության մասին, որը փորձում է պատասխանել ընթացող գործընթացների վերաբերյալ առաջացող մտահոգություններին ու հարցերին՝ միաժամանակ առաջադրելով լուծումներ դրանց համար: Սակայն ակներև է, որ այդ գործընթացում շոշափելի արդյունքներ չեն արձանագրվում և թե՛ հասարակության, թե՛ մասնագիտական հանրության շրջանում շարունակում են հնչել մտահոգություններ:

Հատկապես մշակութային ժառանգության պահպանությանը վերաբերող խնդիրները հանդիսացան **ուրբանլաբ Երևանի** հասարակական սեկտորում հայտնվելու սկզբնապատճառներից մեկը: Դրան միտված, քաղաքաշինական կայուն զարգացման համար համապատասխան դաշտ ստեղծելու նպատակով փորձ արվեց դիտարկել քաղաքաշինության ամբողջ ոլորտում առկա իրավիճակը, և վեր հանել առկա խնդիրները: Հաշվի առնելով ոլորտի չափազանց լայն ընդգրկումը, և այն հանգամանքը, որ վերջին շրջանում քաղաքաշինական նախաձեռնությունները հիմնականում հարուցում են մշակութային ժառանգության ու քաղաքային միջավայրի պահպանության հետ կապված հանրային անհանգստություն և սուր արձագանքներ, ինչպես նաև տարբեր նախաձեռնությունների բերմամբ արդեն իսկ ծանոթ լինելով ոլորտի իրավական կարգավորման բացերին՝ նախաձեռնվեց **Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման, վերլուծության և առաջարկությունների մշակման ծրագիրը** (այսուհետ՝ Ծրագիր): Դրա նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների (այսուհետ՝ Հուշարձաններ) պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման և վերլուծության հիման վրա մշակել ոլորտին վերաբերող օրենսդրական և ենթաօրենսդրական առաջարկություններ:

Դրանք չեն հավակնում լուծել ոլորտում առկա բոլոր խնդիրները, սակայն կարող են լավ հիմք հանդիսանալ ոլորտում բարեփոխումներ իրականացնելու, ինչպես նաև առկա խնդիրների լուծմանը միտված ավելի ընդգրկուն քննարկումներ անցկացնելու համար:

Ծրագրի առաջին փուլում իրականացվել են ուսումնասիրական աշխատանքներ, որի շրջանակում տեղի են ունեցել առցանց հարցումներ, մշտադիտարկվել են վերջին տարիների ընթացքում մամուլում ժառանգության պահպանությանը վերաբերող հրապարակումները, ոլորտում ակտիվ քաղաքացիական նախաձեռնությունների անդամների հետ անցկացվել են մտքային գրոհ-քննարկումներ՝ վերհանելու համար առկա խնդիրները: Զուգահեռ գույքագրվել և դասակարգվել են Հայաստանի Հանրապետությունում գործող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության և, առհասարակ, քաղաքաշինությանը վերաբերող օրենսդրական ողջ հենքը, այդ թվում՝ օրենքներ, ենթաօրենսդրական փաստաթղթեր, կարգեր և այլն (թվով 106 փաստաթուղթ): Դիտարկվել են նաև ստանձնած և ստանձնելիք միջազգային ու եվրոպական պարտավորությունները՝ բացահայտվել են միջազգային ու եվրոպական համարժեք փորձի կիրառման հնարավորությունները: Այս ամենի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, ներգրավված անձանց մասնագիտական կարծիքի հիման վրա, առաջնահերթությունների հստակեցմամբ թույլ տվեց առաջադրել խնդիրների լուծմանը միտված առաջարկություններ, որոնք կարելի է խմբավորել երեք հիմնական խմբերում. հայեցակարգային խնդիրներ, որոնք բխում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից և ստանձնած միջազգային ու եվրոպական պարտավորություններից, օրենսդրական առաջարկություններ և ենթաօրենսդրական առաջարկություններ: Առանձին հավելվածներում ներկայացվել են ծրագրի շրջանակում կատարված այլ աշխատանքների (հարցումներ, թարգմանություններ և այլն) արդյունքները, որոնք կարող են օգտակար նյութ հանդիսանալ ոլորտում կատարվող այլ ուսումնասիրությունների համար:

Սույն ծրագրի ուսումնասիրական աշխատանքների շրջանակում, Հայաստանում առկա իրավիճակի բացահայտման արդյունքում պարզվեց, որ այսօր խոցելի են հատկապես քաղաքային միջավայրերում տեղի ունեցող գործընթացներում ճարտարապետական ժառանգության մաս կազմող օբյեկտների (հուշարձանների) պահպանության հետ առնչվող խնդիրները՝ իրենց տեղադրվածության ու մասնավոր ներդրողների համար գրավչության պատճառով:

Դրանցում կային թե՛ քաղաքաշինական կարգավորման հետ կապված, թե՛ տարբեր մարմինների միջև պարտականությունների բաշխման, ինչպես նաև պարզ իրավագիտակցության պակասի հետ կապված խնդիրներ:

Ստորև ներկայացված են մի շարք առաջարկություններ, որոնք կարևորվել են աշխատանքային խմբի կողմից.

1. Նախ և առաջ կարևոր է վերաձևակերպել ժառանգության պահպանության անհրաժեշտության սահմանումը հայեցակետային (կոնցեպտուալ) տեսակետից: Ժառանգության պահպանությունը պետք է միտված լինի պետության բնակչության շրջանում իրենց անմիջական շրջապատող միջավայրի դրական ընկալմանը և յուրահատկության (բացառիկության) զգացողությանը, ինչը իր հերթին պարունակում է իր մեջ մեծ տնտեսական խթանիչ բաղադրիչ՝ նվազեցնելով ներքին արտագաղթը ու նպաստելով երկրի համաչափ զարգացմանը:
2. Քանի որ զբոսաշրջությունը հանդիսանում է երկրի տնտեսական առաջնահերթ զարգացման ուղղություններից մեկը, հետևաբար առաջանում է անհրաժեշտություն վերանայելու ժառանգության պահպանությունը բոլոր տեսակի տարածքային զարգացման գործընթացներում՝ այն դարձնելով հիմնարար ելակետային նախադրյալ:
3. Անհրաժեշտ է տարանջատել պետական լիազոր մարմին հանդիսացող մշակույթի նախարարության գործադիր, վերահսկողական և քաղաքականության մշակման գործառույթները: Մշակույթի նախարարությունը պետք է իրականացնի միայն հուշարձանների բացահայտման և հուշարձանի կարգավիճակի սահմանման գործընթացները, դրանց վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն ու մշակումը: Իսկ վերահսկողական գործառույթները նպատակահարմար է իրականացնել քաղաքաշինության ոլորտի տեսչական գործընթացների համատեքստում:
4. Ազգային օրենսդրության շրջանակում, մասնավորապես Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին օրենքում (այսուհետ՝ Օրենք), անհրաժեշտ է օգտագործել արդեն վավերացված փաստաթղթերում առկա ձևակերպումները, մասնավորապես Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության կոնվենցիայի դրույթներն ու սահմանումները:
5. Առաջարկվում է առհասարակ վերացնել հուշարձանների ցանկերում ներառված հուշարձանները ցանկից հանելու հասկացությունը: Հուշարձանը պետք է հանել հուշարձանների ցանկից միայն այն դեպքում, երբ այն այլևս գոյություն չունի: Սակայն այդ դեպքում ցանկալի է իրականացնել ժառանգության պահպանության մեթոդների թվին

պատկանող վերստեղծում գործողությունը, որով գրեթե բացառվում է հուշարձանի կարգավիճակի կորուստ հասկացությունը:

6. Առաջարկվում է նաև գրեթե բացառել հուշարձանի տեղափոխման դրույթը: Այն, համաձայն Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության կոնվենցիայի, կարող է կիրառվել միայն հուշարձանի ֆիզիկական գոյությանը վտանգ սպառնալու դեպքում:
7. Այս պահին ըստ նշանակության դասակարգվող հանրապետական և տեղականի փոխարեն առաջարկվում է Հուշարձանների դասակարգման քառաստիճան համակարգ՝ համամարդկային, ազգային (նախկին հանրապետական), տեղային կամ տարածքային (նախկին տեղականի) և համայնքային: Հատկապես կարևորվում է, որ համայնքի ավագանու որոշմամբ հնարավոր լինի կոնկրետ կառույցների տալ հուշարձանի կարգավիճակ և պահպանել դրանք նույն կերպ ինչ մյուսները:
8. Առաջարկվում է օրենքով սահմանել հուշարձանների ցանկում ներգրավվելու չափորոշիչները, որոնք նախկինում հաստատվել են փորձագիտական խմբի կողմից: Առաջարկվում է նաև չափորոշիչները մասնավորեցնել յուրաքանչյուր դասակարգման համար առանձին՝ ներառելով ամենաչափելի չափանիշներից մեկը՝ կառույցի տարիքը:
9. Անհրաժեշտ է կատարել հուշարձանների նկատմամբ ոտնձգությունների, ստանձնած պարտավորությունների և այլ սահմանված ռեժիմների խախտումների դեպքում պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ անհրաժեշտ փոփոխություններ Վարչական իրավախախտումների մասին օրենքում ու Քրեական օրենսգրքում՝ խստացնելով պատասխանատվության չափերը:
10. Պատմամշակութային հիմնավորման նախագիծը դիտարկել որպես ծրագրային փաստաթղթերի, մասնավորապես գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի պարտադիր մաս, որը մշակվում է քաղաքաշինական նախագծման հետ միասին և միաժամանակ: Ելակետային համարել միայն հուշարձանների պահպանության գոտիները, իսկ մնացածը դասել նախագծող ճարտարապետների և քաղաքաշինարարների նախագծային պարտականությունների թվին՝ նախագծերի մշակման փուլերում պարտադիր ներգրավելով լիցենզավորված վերականգնող ճարտարապետների:
11. Առանձին ենթաօրենսդրական փաստաթղթի շրջանակում լրացնել Օրենքի պահանջ հանդիսացող Հուշարձանների պետական հաշվառման վերջնական հանգրվանը՝ Հայաստանի

Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների կադաստրը՝ արտացոլելու համար ցանկացած կարգավիճակի փոփոխություն ու սահմանելու համար առկա սահմանափակումները գույքի վրա: Դրանք պետք է ամրագրել անշարժ գույքի սեփականության վկայականում:

12. Առաջարկվում է հատուկ ուշադրության արժանացնել ոչ վաղ անցյալի ժառանգության (մասնավորապես խորհրդային տարիներին կառուցված) արժևորմանն ու պահպանմանը: Անհարժեշտ է դրանք ավելացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում:
13. Հուշարձանների դասակարգման մեջ (Օրենքի հոդված 6) ըստ իրենց քաղաքաշինական և ճարտարապետական բնույթի, հստակ ընդգծված է *“հատվածներ”* եզրույթը և առանձին օբյեկտները, սակայն հոդվածն ավելի ամբողջական դարձնելու համար առաջարկում ենք ավելացնել նաև՝ *“այգիների կառուցապատում(ներ) և/կամ կառուցապատման հատվածներ”* եզրույթները:
14. Կառավարությանը առաջարկվում է մշակել հուշարձանի պահպանության համար նախատեսված պայմանագրի (Օրենքում հիշատակվում է որպես պահպանական պարտավորագիր) ձև, որը կկիրառվի սեփականատեր և լիազոր մարմին հարաբերությունները հստակեցնելու նպատակով:
15. “Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգի” (այսուհետև՝ Կարգ) տարբեր բաժիններում էական խմբագրման անհրաժեշտություն կա: Մասնավորապես տերմինների վերաբերյալ կան բազմաթիվ չմանրամասնված կետեր, օրինակ՝ *“գիտավերականգնման հատուկ նորմեր”* (կետ 77), *“գիտանախագծային փաստաթղթեր”* (կետ 86):
16. Հուշարձանների պետական հաշվառման համակարգի կայացման համար անհրաժեշտ է նախ հստակ և միարժեք սահմանումներ տալ Կարգում (նաև՝ Օրենքում) օգտագործվող տերմիններին և սահմանել պետական հաշվառման փաստաթղթերի կազմը՝ տեքստային շարադրանքով:
17. Ամբողջությամբ պետք է հանել Կարգի “Սեփականությունը հուշարձանների նկատմամբ” բաժինը, քանի որ նրա բոլոր կետերի շարադրանքով փորձ է արվել սահմանել նորմեր, որոնք

ՀՀ օրենսդրության համաձայն կարող են սահմանվել միայն օրենքով (“Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի հոդված 9-ի 4-րդ մաս):

18. Առաջարկվում է որպես գլխավոր իրավական փաստաթուղթ սահմանել հուշարձանի վկայագիրը, որտեղ մանրամասն կետ առ կետ պետք է թվարկվեն և ունենան համապատասխան դասակարգիչներ, ժամանակակից տեխնիկական (թվային) միջոցներով՝ դրանք գրանցելու և պահպանելու համար: Նույնպիսի թվարկում պետք է ունենան նաև վկայագրին որպես համալրում կցվող հավելյալ “վավերագրերը”՝ սահմանված նաև այդ նյութերի պատրաստման որակի և հավաստիության ապահովման վերաբերյալ չափորոշիչներն ու կանոնները:
19. Առաջարկվում է լիազորված մարմնի կազմում գործող երեք կոլեգիալ մարմինները՝ հնագիտական ու փորձագիտական հանձնաժողովները և գիտամեթոդական խորհուրդը համատեղել մեկ մարմնում, հստակեցնելով դրա լիազորություններն ու կառավարության որոշմամբ հաստատել կազմն ու կանոնադրությունը:
20. Հուշարձանների պահպանական գոտիների համակարգի և պատմամշակութային հիմնավորման նախագծերի վերաբերյալ, նախ պետք է հստակ զանազանել և միարժեք նշանակությամբ օգտագործել “պահպանական գոտի” և “պահպանության գոտի” տերմինները՝ ըստ Օրենքի հոդված 16-ի: Պահպանության գոտին դասվում է ՀՀ հողային օրենսգրքով սահմանված՝ հատուկ պահպանվող տարածքների հողերի նպատակային նշանակության (կատեգորիայի) պատմական և մշակութային գործառական նշանակության հողերի շարքին: Պահպանական գոտին քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է, որի մշակումն իրականացվում է քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) բոլոր փուլերի փաստաթղթերի մշակման հետ միաժամանակ: Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման համար որպես ելակետային հիմք նպատակահարմար է դիտարկել միայն պահպանության գոտին:
21. Առաջարկում ենք պահպանական գոտիների և պատմամշակութային հիմնավորումների նախագծերը պարտադիր պահպանման հանձնել հուշարձանների կադաստրում, միևնույն ժամանակ քաղաքաշինական փաստաթղթերը, որոնց կազմում դրանք ընդգրկված են, պահպանել քաղաքաշինական կադաստրում և գրանցել անշարժ գույքի միասնական կադաստրում:

22. Օրենքով սահմանված մասնագիտացված շինարարական ու նախագծային միավորների լիցենզավորման պահանջից ելնելով, առաջարկվում է նախագծային դաշտը դիտարկել որպես ինքնակարգավորվող և դրա լիցենզավորումը թողնել մասնագիտական հանրության:

Անգլերեն / English

Nowadays more and more is being spoken about the changes in our man-made environment and urban development activities which are trying to respond to the worries and questions of ongoing processes while at the same time proposing solutions for them. However it is obvious that tangible results are not being recorded in that process and that concerns are still being voiced both in public and professional community circles.

Issues relating particularly to the protection of cultural heritage became one of the main reasons for **urbanLab Yerevan's** appearance the public sector. With that aim, an attempt was made to consider the existing situation in the entire urban development sector, and to reveal existing problems with the objective of creating a corresponding field for sustainable development in urban development. Based on this situation and also being familiar with the numerous issues existing in the sector, some of which are also a result of legal, sub-legal and normative shortcomings, **a Study, Analysis and Development Program for Legislative Basis of the Protection of Historical and Cultural Monuments** (hereinafter: Program) was initiated.

Its objective is to draft legislative and sub-legislative recommendations in the sector based on study and analysis of the legislative bases of the maintenance of immovable historical and cultural monuments (hereinafter: Monuments) in the territory of the Republic of Armenia.

It does not claim to resolve all the existing problems in the sector but can become a good foundation for the realisation of reforms and developmental processes in the sector and also for conducting more inclusive discussions on the resolution of existing issues.

Studies have been realised in the first phase of the program within the framework of which internet based surveys have taken place, publications in the press over the past few years relating to the protection of heritage have been monitored, brain-storming has taken place with members of active civil initiatives in order to reveal existing problems. Simultaneously the maintenance of historical and cultural monuments functioning in the Republic of Armenia and in general the entire legislative base concerning urban planning including the laws, sub-legal documents, regulations and so on (106 documents in all), have been inventoried and classified. The international and European commitments

assumed and to be assumed have also been observed; the possibility of applying international and European equivalent practises have been identified.

The study and analysis of all this, based on the professional opinion of the people involved , through clarification of priorities, allowed the proposal of recommendations aimed at solving issues, which can be grouped in three main groups: conceptual issues, which stem from the RA Constitution and assumed international and European obligations; legislative recommendations, and sub-legislative recommendations.

The results of other activities conducted within the framework of the project (surveys, translations and so on) which may be useful material for other studies being conducted within the sector, are presented in separate appendices.

Within the framework of this program's study activities, as a result of the identification of the situation in Armenia, it became clear that today, the issues relating to the protection of objects constituting architectural heritage (Monuments) are particularly vulnerable to the processes taking place in urban environments, because of the attraction of their locations to private investor.

Amongst them there were issues linked to both regulation of urban planning, and the distribution of responsibilities between different bodies and also a simple lack of legal awareness.

Below we present several important recommendations:

1. Firstly the definition of the necessity for protection of heritage must be reformulated from the conceptual point of view. The protection of heritage must be aimed at the positive perception by the population of the state of its immediate environment which in turn contains a large economic incentive component thus reducing the internal emigration and contributing to the proportionate development of the country.
2. Since tourism is a priority direction for the economic development of the country, consequently the necessity to review the protection of heritage during the processes of all types of regional development.
3. It is necessary to separate the executive, supervisory and policy making functions of the ministry of culture which is the state authorised body. The Ministry of Culture must only realise the processes of identification and status definition of monuments, and the collection and processing of

information concerning them. It is preferable for supervision to be realised within the context of urban development sector's departmental procedures.

4. Within the framework of the national legislation it is necessary to use existing formulations in already validated documents, particularly the provisions and definitions in the Convention for the protection of the architectural heritage of Europe.
5. It is recommended that the concept of removing monuments included in the monuments lists be generally eliminated. A monument must be removed from the monuments list only when it no longer exists. However in that case, re-creation operations, which are part of the methods of protection of monuments, must be implemented. With this, the concept of loss of status for the monument is almost ruled out.
6. It is also recommended that the provision for relocating monuments should be almost completely eliminated. According to the Convention for the protection of the architectural heritage of Europe, that can only be applied in a case of a direct threat to the existence of the monument.
7. It is recommended that a four-level system of classification of Universal, National (formerly Republican), Local or Regional (formerly Local), and Community, replaces the present one of Republican and Local. It is particularly important that, with the decision of the community council (Avagani), it be possible to give the status of monument to specific structures and to maintain them in the same manner as the others.
8. It is recommended that the criteria for inclusion in the monuments lists be stipulated by law. Prior to this, these criteria were approved by a group of experts. It is proposed that it should be set by law, specifying it for each class separately, including the most easily measured criterion, the age of the structure.
9. It is vital to make necessary changes in the Administrative Offences Code and Penal Code, concerning liability in cases of abuse towards monuments and violation of assumed obligations and other defined regimes, by increasing the amounts of liability.
10. Perceive the Historic-Cultural Justification Plan as a mandatory part of the Urban Planning Documents, particularly the Master and Zoning plans, considering only the baseline to be the protection of monuments zones, and to classify the rest as part of the drafting responsibilities of the

designing architects and town planners, involving licensed restoring architects during the drafting stages.

11. Within the framework of a separate sub-legislative document, fulfill the final stage of the state registration of monuments, being the requirement of the (article 9) of the Law, which is the Cadastre of immovable historical and cultural monuments, in order to reflect any change in status, and to define existing limitations on the property. Those must be stipulated on the real estate ownership certificate.
12. It is recommended that special attention be paid to the appreciation and protection of heritage from the not-too distant past (particularly structures from the soviet era). It is vital that they should be added to the state immovable historical and cultural monuments lists.
13. In the classification of monuments according to their urban planning and architectural character In Article 6 of the Law, the term “sections” and separate objects are clearly underlines, however to make the Article more complete it is recommended that the terms “ construction of gardens and/or sections of construction” be added.
14. It is recommended that the government draft a sample contract for the protection of monuments, which will be introduced with the objective of clarifying relations between the owner and the authorized body.
15. Substantial editing is necessary in different sections of the "Regulation on the State Registration, Study, Preservation, Strengthening, Repair, Restoration and Utilization of Historical and Cultural Monuments” (hereinafter: Regulation). In particular, concerning terminology, there are numerous vague clauses, such as “*special norms of scientific-restoration, which are approved by the authorized body*” (clause 77), and “*of scientific-draft documents*” (clause 86).
16. In order to establish the State monuments registration system, it is first necessary to give clear and unequivocal definitions for the terminology used and to stipulate the draft text of the state registration documents in the Regulation (and also in the Law).
17. It is necessary to completely remove the section on “Private ownership of monuments” because the text in all its clauses attempts to define norms which, according to the RA legislation can only be defined by law (RA law “On legal acts” Article 9, Part 4.)

18. It is recommended that the monument's certificate be considered as the principle legal document, where they should be enumerated point by point in detail and have corresponding classifiers, using modern technical methods, in order to register and retain them. Similar numbering should also be on the "documents" attached to the certificate as additions.
19. It is recommended that the three functioning collegial bodies, archaeological and expert committees and scientific-methodological council in the structure of the authorized body, are combined into one body, its powers be specified and its composition and charter be approved by a government decision.
20. Concerning the monument protection zones system and Historical-Cultural Justification Plans: firstly, the terms "protection (pahpanakan) zone" and "preservation (pahpanutyan) zone" must be clearly differentiated and used unequivocally, according to the Law, Article 16. Preserved zones are classified by the Land Code of the Republic of Armenia as categories of lands of special preserved territories in the class of land with historical and cultural functional meaning. Protection zones is an urban development planning document the drafting of which is realized together with the urban development planning (spatial planning) document drafting in all stages simultaneously. It is expedient to consider only the protection zones as the initial base for the drafting of urban planning documents.
21. We recommend that it should be compulsory to hand over the plans for protection zones and Historical-Cultural Justification Plans to the monuments cadastre, At the same time, urban planning documents in which they constitute a part of, should be kept in the urban planning cadastre and registered in the integrated state cadastre of real estate.
22. Based on the requirement of licensing of specialized construction and planning units as specified by the Law, we recommend that the field of planning should be viewed as self-regulating and leave its licensing should be left to the specialized community.

Հղումներ

1. ՀՀ Անկախության հռչակագիր
2. ՀՀ Սահմանադրություն

Միջազգային կոնվենցիաներ և այլ փաստաթղթեր

3. Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիա, *Հաագա, 1954թ., ՀՀ միացել է 5.09.1993թ.,*
4. Մշակույթի և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիա, *Փարիզ, 1972թ., ՀՀ միացել է 5.12.1993թ.,*
5. Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին կոնվենցիա, *Փարիզ, 2003թ., ՀՀ միացել է 18.05.2006թ.,*
6. Մշակութային ինքնարտահայտման բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին կոնվենցիա, *Փարիզ, 2005թ.,*
7. ՅՈՒՆԵՍԿՈ-ի Առաջարկությունը պատմական քաղաքային լանդշաֆտի վերաբերյալ՝ ներառյալ սահմանումների բառարան, *Փարիզ, 2011թ.,*
8. ՅՈՒՆԵՍԿՈ-ի Առաջարկությունը պատմական տարածքների պաշտպանության և ժամանակակից դերի վերաբերյալ, *Նայրոբի, 1976 թ.:*

Եվրոպայի խորհրդի կոնվենցիաներ և այլ փաստաթղթեր

9. Եվրոպական մշակութային կոնվենցիա, *Փարիզ, 1954թ.,*
10. Հնագիտական ժառանգության պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա (վերանայված), *Վալլետրա, 1992թ.,*
11. Հասարակության համար մշակութային ժառանգության նշանակության մասին Եվրոպայի խորհրդի շրջանակային կոնվենցիա, *Ֆարո 2005թ.,*
12. Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիա, *Գրանադա, 1985թ.,*
13. Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիա, *Ֆլորենցիա, 2000թ.,*
14. Կայուն եվրոպական քաղաքների վերաբերյալ Լայպցիգի խարտիան, *Լեյպցիգ, 2007թ.:*

Օրենքներ

15. ՀՀ օրենքը պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին, *ՀՕ-261, ընդունված 11.11.1998թ.*,
16. ՀՀ օրենքը ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին, *ՀՕ-531-Ն, ընդունված 11.04.2003թ.*,
17. Քաղաքաշինության մասին օրենք, *ՀՕ-217, ընդունված 05.05.1998թ.*,
18. ՀՀ հողային օրենսգիրք, *ՀՕ-185, ընդունված 02.05.2001թ.*,
19. ՀՀ օրենսգիրքը վարչական իրավախախտումների վերաբերյալ, *ընդունված 06.12.1985թ.*,
20. ՀՀ օրենքը լիցենզավորման մասին, *ՀՕ-193, ընդունված 05.30.2001թ.*,
21. ՀՀ օրենքը իրավական ակտերի մասին, *ՀՕ-320, ընդունված 03.04.2002թ.*:

Կառավարության որոշումներ

22. ՀՀ կառավարության որոշումը պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին, *N 438, ընդունված 20.04.2002թ.*,
23. ՀՀ կառավարության որոշումը մշակույթի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին, *N 1298-Ն, ընդունված 11.09.2003թ.*,
24. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին, *N 1357-Ն, ընդունված 29.08.2002թ.*,
25. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ մշակույթի, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության ու օգտագործման բնագավառներում կառավարումն իրականացնող լիազորված մարմնի իրավասություններ վերապահելու եվ ՀՀ կառավարության 1998 թվականի ապրիլի 6-ի N 229 ու 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1112 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին, *N 1549-Ն, ընդունված 27.11.2003թ.*,

26. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ պատմության և կուլտուրայի հուշարձանների ցուցակից «Սևան» հյուրանոցի շենքը հանելու մասին, *N 981-Ն, ընդունված 8.08.2004թ.*,
27. ՀՀ զբոսաշրջային կենտրոններում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին, *N 118-Ն, ընդունված 9.02.2012թ.*,
28. ՀՀ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին, *N 1920-Ն, ընդունված 29.12.2011թ.*,
29. ՀՀ կառավարության որոշումը բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին, *N 408, ընդունված 14.05.2011թ.*,
30. ՀՀ կառավարության որոշումը պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխման մասին, *N 1526-Ա, ընդունված 26.10.2006թ.*,
31. ՀՀ կառավարության որոշումը «Հուշարձանների վերականգնման «Շիրակ» արվեստանոց», «Հուշարձանների վերականգնման «Տավուշ» արվեստանոց», «Հուշարձանների վերականգնման «Վայք», «Արագածոտն», «Հուշարձանների վերականգնման «Գեղարքունիք» արվեստանոց», «Հուշարձանների վերականգնման «Զանգեզուր» արվեստանոց» փակ բաժնետիրական ընկերությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու, «Հուշարձանների վերականգնման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու և վերջինիս պետական բաժնետոմսերի կառավարման լիազորությունները ՀՀ մշակույթի նախարարությանը վերապահելու մասին, *N 826-Ն, ընդունված 24.07.2008թ.*,
32. ՀՀ լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման հիմնադրույթներ, 17.11.2011թ.
33. Գորիս քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագիծը և քաղաքի պատմական տարածքի, նրա առանձին հատվածների վերակառուցման և օգտագործման ծրագրի հայեցակարգը, ընդունված 31.05.2012թ.
34. ՀՀ կառավարության որոշում լանդշաֆտի եվրոպական կոնվենցիային բխող՝ ՀՀ պարտավորությունների կատարման 2011-2012թթ միջոցառումների ցանկը հաստատելու մասին, *N 308 – Ն, 24.03.2011թ.*,

35. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին, N 1616-Ն, 07.10. 2004:

Այլ փաստաթղթեր

36. ՀՀ Լանդշաֆտային ազգային քաղաքականության իրագործման հիմնադրույթներին հավանություն տալու մասին քաղվածք ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից, N 45, 17.11.2011թ.,
37. ՀՀ օրենքը պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին օրենքում լրացում կատարելու մասին նախագիծ, տրամադրված 11.05.2010-ին տեղի ունեցած հանրային քննարկմանը,
38. Տեղեկություններ Երևան քաղաքի պատմական հուշարձանների պահպանության մասին, Զեկույց, “Պետական Կարիքների Զոհեր” ՀԿ, Երևան, 2012թ.,
39. ՀՀ կառավարություն որոշում արձանագրային նախագիծ «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի նախագծի հայեցակարգին հավանություն տալու մասին, 2012թ.,
40. Principles of Selection for Listing Buildings of the Department for Culture, Media and Sport of United Kingdom, March 2010
41. Վիեննայի 2012 թվականի ճարտարապետական կոնգրեսի բանաձևը (Petition of Vienna Architectural Congress 2012)
42. Քաղաքաշինությունն ու նոր Կառավարությունը, Սարհատ Պետրոսյան, Անկախ շաբաթաթերթ, 16.05.2012թ.
43. Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը, ուսումնական ձեռնարկ, Վարազդատ Հարությունյան, Գրիգոր Նալբանդյան, Արտյոմ Գրիգորյան (երկրորդ հրատարակություն), Դար, Երևան, 2005, 280 էջ:

Հավելվածներ

1. Ժառանգության պահպանությունը Հայաստանում առցանց հարցումների արդյունքներ
2. Մամուլի մշտադիտարկման արդյունքներ
3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ
4. Պաշտոնական հարցումներ և այլ աշխատանքային փաստաղթեր

Կատարված թարգմանություններ

5. Կայուն եվրոպական քաղաքների վերաբերյալ Լայպցիգի խարտիա
6. ՅՈՒՆԵՍԿՈ-ի Առաջարկությունը պատմական տարածքների պաշտպանության և ժամանակակից դերի վերաբերյալ
7. ՅՈՒՆԵՍԿՈ-ի Առաջարկությունը պատմական քաղաքային լանդշաֆտի վերաբերյալ՝ ներառյալ սահմանումների բառարան
8. ՅՈՒՆԵՍԿՈ-ի Ճարտարապետական և քաղաքաշինական միջազգային մրցույթների վերաբերյալ ստանդարտ կանոնակարգը

Ժառանգության պահպանությունը Հայաստանում առցանց հարցումների արդյունքները

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման, վերլուծության և առաջարկությունների մշակման ծրագրի շրջանակում իրականացվել են հարցումներ առկա խնդիրների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար:

Առցանց հարցումը կատարվել է Survey Monkey (www.surveymonkey.com) կայքի միջոցով: Մասնակցության հրավեր ուղարկվել է շուրջ 100 հոգու, որոնցից հարցմանը մասնակցել են 38-ը, որից միայն 32-ն են պատասխանել բոլոր հարցերին:

Ստորև ներկայացված են.

- Հաստատված հարցաշարը
- Հարցման մշակված արդյունքների ամփոփ աղյուսակը

Հաստատված հարցաշարը

Նախաբան

Հարգելի գործընկեր,

ուրբանլաբ Երևան քաղաքաշինության ժողովրդավարացման ինստիտուտը Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության ֆինանսավորմամբ իրականացնում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների (այսուհետ՝ ժառանգություն) պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման, վերլուծության և առաջարկությունների մշակման ծրագիր: Ծրագրի ուսումնասիրական աշխատանքների շրջանակում խնդրում ենք պատասխանել ներքոնշյալ հարցերին, որոնք կօգնեն մեզ կողմնորոշվել ոլորտում առկա խնդիրների բացահայտման գործում:

Իրավիճակի բացահայտում

1. Ծանոթ եք արդյոք ոլորտին վերաբերող ներքոնշյալ օրենսդրական ակտերին.

- o ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրերի պահպանության մասին օրենք
- o ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին օրենք
- o ՀՀ քաղաքաշինության մասին օրենք
- o ՀՀ կառավարության որոշումները տարբեր մարզերի (այդ թվում և Երևանի) պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին
- o Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիա
- o Կիևյան խարտիա

2. Ձեր կարծիքով որո՞նք են հանդիսանում Հայաստանում ժառանգության պահպանության հետ կապված խնդիրները (կարող եք ընտրել մի քանի պատասխան).

- o օրենսդրական դաշտի անկատարություն
- o անարդյունավետ կառավարում
- o պարտականությունների սխալ բաշխում
- o սահմանափակ նյութական միջոցներ
- o արհեստավարժ կադրերի պակաս
- o հանրության անտարբերություն
- o կոռուպցիա
- o այլ

3. Նախագծային գործընթացներում երբևիցե առնչվե՞լ եք հետևյալ սահմանափակումների հետ.

- o հուշարձանի պահպանման գոտի
- o կառուցապատման կարգավորման գոտի
- o լանդշաֆտի պահպանության գոտի

- o հանրապետական նշանակության հուշարձանի հետ կապված քաղաքաշինական գործունեության իրականացման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշում

4. Ձեր կարծիքով ո՞ր տեսակի հուշարձաններն են առավել վտանգված Հայաստանում.

- o հնագիտական
- o պատմական
- o քաղաքաշինական և ճարտարապետական
- o մոնումենտալ արվեստի
- o բնության

Լուծումների առաջադրում

5. Ներքոնշյալ գործողություններից որո՞նք Ձեր կարծիքով կարող են լուծել ժառանգության պահպանության հետ կապված խնդիրները (կարող եք ընտրել մի քանի պատասխան).

- o օրենսդրական և ենթօրենսդրական առաջարկությունների մշակումը
- o արհեստավարժ կադրերի (վերա)պատրաստումը
- o պետական ու տեղական մակարդակներում լիազորությունների վերաբաշխումը
- o հանրային գիտակցության բարձրացումը
- o այլ

6. Ձեր կարծիքով ներքոնշյալ սուբյեկտներից որո՞նք պետք է ստանձնեն Հայաստանում ժառանգության պահպանության հետ կապված պատասխանատվությունը, մասնավորապես պետության կողմից պահպանվող հուշարձանի կարգավիճակի տրամադրումը (կարող եք ընտրել մի քանի պատասխան).

- o ՀՀ Ազգային ժողով
- o ՀՀ կառավարություն
- o ՀՀ մշակույթի նախարարություն
- o տարածքային կառավարման մարմիններ (մարզպետներ)
- o տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը (քաղաքապետը)

- o տեղական ինքնակառավարման մարմնի ավագանին
- o այլ

7. Ներքոնշյալ չափորոշիչներից որո՞նք պետք է կիրառվեն պետության կողմից պահպանվող հուշարձանների ցուցակի (ցանկի) կազմման ժամանակ.

- o կառուցման թվականը
- o նախագծող ճարտարապետը
- o տիպաբանական առանձնահատկությունը
- o քաղաքաշինական համալիրի մաս կազմելը
- o շինանյութը
- o գործառնական նշանակությունը
- o նախնական իրավիճակի անխաթարությունը
- o ճարտարապետական (գեղարվեստական) լուծումները
- o պատմական նշանակությունը
- o նախկին օգտագործողների (բնակիչների) նշանավոր լինելը
- o հազվագյուտ լինելը
- o գոյություն ունեցող միջավայրում ունեցած դերը

8. Ձեր կարծիքով կառուցման թվականի չափորոշիչի դեպքում քանի տարվա վաղեմությունը կարող է հիմք հանդիսանալ հուշարձանի կարգավիճակ տալու համար

- o մինչև 30 տարի
- o 31-50 տարի
- o 51-100 տարի
- o 101 – 150
- o 151 – 200
- o 200 –ից ավելի
- o Այլ

9. Ձեր տարիքը.

- o մինչև 20 տարեկան
“Կայուն եվրոպական քաղաքների վերաբերյալ Լայպցիգի խարտիան” անդամ պետությունների կողմից պատրաստված փաստաթուղթ է, որը կազմվել է եվրոպական շահագրգիռ կողմերի լայն և թափանցիկ մասնակցությամբ: Մարտահրավերների և հնարավորությունների, ինչպես նաև եվրոպական քաղաքների տարբեր պատմական, տնտեսական, սոցիալական և բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա, անդամ պետությունների՝ քաղաքային զարգացման համար պատասխանատու նախարարները համաձայնության են եկել քաղաքային զարգացման քաղաքականության ընդհանուր դրույթների և ռազմավարությունների վերաբերյալ: Նախարարները պարտավորվում են. ▪ իրենց երկրներում նախաձեռնել քաղաքական բանավեճ այն մասին, թե ինչպես ներգրավել կայուն եվրոպական երկրների վերաբերյալ Լայպցիգի խարտիայի դրույթներն ու ռազմավարությունները ազգային, տարածաշրջանային և տեղական զարգացման քաղաքականություններում, ▪ կիրառել ինտեգրված քաղաքային զարգացման մեթոդը և վերջինիս կիրառման վերահսկումը, և այդ նպատակով ստեղծել անհրաժեշտ շրջանակ ազգային մակարդակով և,	The “LEIPZIG CHARTER on Sustainable European Cities” is a document of the Member States , which has been drawn up with the broad and transparent participation of European Stakeholders. In the knowledge of the challenges and opportunities as well as the different historical, economical, social and environmental backgrounds of European cities, the Member States’ Ministers responsible for Urban Development agree upon common principles and strategies for urban development policy. The Ministers commit themselves ▪ to initiate a political debate in their states on how to integrate the principles and strategies of the Leipzig Charter on Sustainable European Cities into national, regional and local development policies, ▪ to use the tool of integrated urban development and the related governance for its implementation and, to this end, establish any necessary framework at national level and

▪ խթանել համաչափ տարածական կազմակերպումը՝ հիմնված եվրոպական բազմակենտրոն քաղաքային կառուցվածքի վրա: Նախարարները շնորհակալություն են հայտնում Գերմանիայի նախագահությանը պատրաստելու համար “Քաղաքաշինական զարգացման ինտեգրումը որպես նախադրյալ արդյունավետ քաղաքային կայունության համար” զեկույցը և “Ռազմավարություններ մեկուսացված քաղաքային տարածքներում ֆիզիկական միջավայրի խթանման համար”, “Մեկուսացված քաղաքային տարածքներում տեղական տնտեսության և տեղական աշխատաշուկայի կարողությունների հզորացում”, “Կրթություն և վերապատրաստման կիրառելի քաղաքականություններ մեկուսացված քաղաքային տարածքներում բնակվող երեխաների և երիտասարդների համար” և “Կայուն քաղաքային երթևեկություն և մեկուսացված քաղաքային տարածքներ” հետազոտությունները՝ ներառյալ Եվրոպայում օրինակելի օրինակների: Այս ուսումնասիրությունները կօգնեն բոլոր չափերի քաղաքներին կայուն եվրոպական քաղաքների վերաբերյալ Լայպցիգի խարտիայում սահմանված չափանիշերի և ռազմավարությունների արդյունավետ կիրառմանը:	▪ to promote the establishment of balanced territorial organization based on a European polycentric urban structure. The Ministers thank the German Presidency for having prepared the report “Integrated urban development as a prerequisite for successful urban sustainability” and the studies “Strategies for upgrading the physical environment in deprived urban areas”, “Strengthening the local economy and local labour market policy in deprived urban areas”, “Proactive education and training policies on children and young people in deprived urban areas” and “Sustainable urban transport and deprived urban areas” with their examples of good practice in Europe. These studies will help cities of all sizes in the effective implementation of the principles and strategies set out in the Leipzig Charter on Sustainable European Cities.
Նախարարները հայտարարում են՝	The Ministers declare:
Մենք՝ Եվրամիության անդամ պետություններում քաղաքային զարգացման համար պատասխանատու նախարարներս, նկատի ունենք եվրոպական բոլոր չափերի քաղաքները, որոնք զարգացել են պատմության ընթացքում՝ դառնալով արժեքավոր և անփոխարինելի տնտեսական, սոցիալական և մշակութային հիմնարար արժեքներ:	We, the ministers responsible for urban development in the Member States of the European Union, consider European cities of all sizes which have evolved in the course of history to be valuable and irreplaceable economic, social and cultural assets.

Մեր քաղաքների պահպանության, ամրապնդման և հետագա զարգացման նպատակով մենք աջակցում ենք Եվրամիության կայուն զարգացման ռազմավարությանը՝ հիմնված Լիլի գործողությունների ծրագրի, Ռոտերդամի քաղաքային համաձայնության և Բրիստոլի համաձայնագրի վրա: Կայուն զարգացման բոլոր տարրերը պետք է հաշվի առնել հավասարաչափ: Դրանք ներառում են տնտեսական բարգավաճումը, հասարակական հավասարակշռությունը և առողջ միջավայրը: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մշակութային և առողջապահական ոլորտներին: Այս նպատակով պետք է ուշադրություն դարձնել անդամ պետությունների ինստիտուցիոնալ կարողություններին:	With the objective of protecting, strengthening and further developing our cities, we strongly support the EU Sustainable Development Strategy, building on the Lille Action Programme, the Rotterdam Urban Acquis and the Bristol Accord. In doing so, all dimensions of sustainable development should be taken into account at the same time and with the same weight. These include economic prosperity, social balance and a healthy environment. At the same time attention should be paid to cultural and health aspects. In this due attention should be paid to the institutional capacity in the Member States.
Մեր քաղաքներն օժտված են եզակի մշակութային և ճարտարապետական որակներով, հասարակության ներգրավումն ապահովելու ամուր կապերով և տնտեսական զարգացման բացառիկ հնարավորություններով: Դրանք հանդիսանում են գիտելիքի կենտրոններ, աճի ու նորարարությունների աղբյուրներ: Միևնույն ժամանակ, նրանք տառապում են ժողովրդագրական խնդիրներով, սոցիալական անհավասարությունից, բնակչության որոշակի խմբերի արտաքսումից, մատչելի և հարմարավետ բնակարանային և բնապահպանական խնդիրների բացակայությունից: Վերջիվերջո, քաղաքները չեն կարող ապահովել իրենց գործառույթը՝ որպես հասարակական առաջընթացի և տնտեսական աճի շարժիչ ուժեր, ինչպես նկարագրված է Լիսաբոնի ռազմավարության մեջ, քանի դեռ հաջողություն չունենք հասարակական հավասարակշռությունը պահպանելու հարցում, որը կոչված է ապահովելու մշակութային բազմազանությունն ու ստեղծելու բարձր որակ քաղաքային	Our cities possess unique cultural and architectural qualities, strong forces of social inclusion and exceptional possibilities for economic development. They are centres of knowledge and sources of growth and innovation. At the same time, however, they suffer from demographic problems, social inequality, social exclusion of specific population groups a lack of affordable and suitable housing and environmental problems. In the long run, cities cannot fulfill their function as engines of social progress and economic growth as described in the Lisbon Strategy unless we succeed in maintaining the social balance within and among them, ensuring their cultural diversity and establishing high quality in the fields of urban design, architecture and environment.

նախագծման, ճարտարապետության և շրջակա միջավայրի ոլորտներում:	
Մենք ավելացող պահանջ ունենք քաղաքային զարգացման գործընթացում ընգրկված բոլոր անձանց և կառույցների կողմից համակարգված գործունեության և միասնական ռազմավարությունների, որոնք տարածվում են առանձին քաղաքների սահմաններից դուրս: Կառավարման յուրաքանչյուր մակարդակ՝ տեղական, տարածաշրջանային, ազգային և եվրոպական, պատասխանատվություն է կրում մեր քաղաքների ապագայի նկատմամբ: Այս բազմամակարդակ կառավարությունն իսկապես արդյունավետ դարձնելու համար մենք պետք է բարելավենք ոլորտային քաղաքականության համակարգումը և մշակենք պատասխանատվության նոր մեթոդ. ինտեգրված քաղաքային զարգացման քաղաքականության համար: Մենք նաև պետք է երաշխավորենք, որ բոլոր մակարդակներում քաղաքականություն մշակող անձինք ծեռք բերեն ընդհանուր և միջմասնագիտական գիտելիքներ և փորձ, որոնք անհրաժեշտ են զարգացնելու քաղաքները որպես կայուն համայնքներ:	We increasingly need holistic strategies and coordinated action by all persons and institutions involved in the urban development process which reach beyond the boundaries of individual cities. Every level of government - local, regional, national and European - has a responsibility for the future of our cities. To make this multi-level government really effective, we must improve the coordination of the sectoral policy areas and develop a new sense of responsibility for integrated urban development policy. We must also ensure that those working to deliver these policies at all levels acquire the generic and cross occupational skills and knowledge needed to develop cities as sustainable communities.
Մենք ողջունում ենք Եվրամիության տարածական օրակարգում ընգրկված հաշվետվություններն ու առաջարկությունները և եվրոպական կառույցի աշխատանքը, որը խթանում է քաղաքային հիմնախնդիրների վերաբերյալ ինտեգրված տեսակետը: Մենք ճանաչում ենք Ալբորգի պարտավորվածությունները՝ որպես արժեքավոր մասնակցություն ռազմավարական և համակարգված գործունեությանը տեղական մակարդակում, և 2007 թվականի ապրիլի 27-ին տեղի ունեցած մշակույթի կերտման մասին ճարտարապետության քաղաքականություններ ի եվրոպական ֆորումի եզրակացությունները: Մենք հաշվի ենք առնում “Կենսական	We strongly welcome the statements and the recommendations set out in the Territorial Agenda of the European Union and the work of the European Institutions which promotes an integrated view of urban issues. We recognize the Aalborg Commitments as a valuable contribution to strategic and coordinated action at a local level and the conclusions of the European Forum for Architectural Policies on Building Culture on 27 April 2007. We take note of the European Charter “Network Vital Cities”.

կարևորություն ունեցող քաղաքների” մասին Եվրոպական խարտիան:	
Մենք առաջարկում ենք՝	We recommend:
I. Առավելագույնս օգտվել ինտեգրված քաղաքային զարգացման քաղաքականության մոտեցումներից	I. Making greater use of integrated urban development policy approaches
Մեզ համար ինտեգրված քաղաքային զարգացման քաղաքականություն նշանակում է քաղաքային զարգացմանը վերաբերող մտահոգությունների և հետաքրքրությունների համաժամանակյա և արդար փաստերի ընդունում: Ինտեգրված քաղաքային զարգացման քաղաքականությունը գործընթաց է, որտեղ քաղաքային քաղաքականության վճռորոշ տարածքների տարածական, ոլորտային և ժամանակային բնութագրերը համակարգված են: Տնտեսվարողների, շահագրգիռ կողմերի և ընդհանուր հասարակության ներգրավումը կարևոր գործոն է: Ինտեգրված քաղաքային զարգացման քաղաքականությունը էական նախապայման է Եվրամիության կայուն զարգացման ռազմավարության կիրառման գործում: Դրա կիրառումը Եվրոպական մասշտաբի հանձնարարական է, սակայն այն պետք է հաշվի առնի տեղական պայմաններն ու պահանջները, ինչպես նաև օժանդակությունը:	For us, integrated urban development policy means simultaneous and fair consideration of the concerns and interests which are relevant to urban development. Integrated urban development policy is a process in which the spatial, sectoral and temporal aspects of key areas of urban policy are co-ordinated. The involvement of economic actors, stakeholders and the general public is essential. Integrated urban development policy is a key prerequisite for implementing the EU Sustainable Development Strategy. Its implementation is a task of European scale, but it is one which must take account of local conditions and needs as well as subsidiarity.
Ինտեգրված քաղաքային զարգացման քաղաքականության կողմից առաջարկված հետաքրքրությունների համաձայնեցումը հանդիսանում է փոխըմբռման ձեռքբերման կիրառելի հիմք պետության, տարածաշրջանների, քաղաքների, քաղաքացիների և տնտեսվարողների միջև: Գիտելիքի և ֆինանսական միջոցների միավորմամբ հազվադեպ տրամադրվող հասարակական ֆոնդերը կարող են օգտագործվել արդյունավետ կերպով: Հասարակական և մասնավոր ներդրումները կհամակարգվեն ավելի օգտակար կերպով:	The reconciliation of interests facilitated by an integrated urban development policy forms a viable basis for a consensus between the state, regions, cities, citizens and economic actors. By pooling knowledge and financial resources, scarce public funds can be more effectively used. Public and private investments will be better coordinated. Integrated urban development policy involves actors outside the administration and enables citizens to play an active role in shaping their immediate living environment. At the same time, these measures can provide more planning and investment certainty.

Ինտեգրված քաղաքային զարգացման քաղաքականությունը ներառում է վարչական համակարգից դուրս գործող անձինք և հնարավորություն է տալիս քաղաքացիներին ակտիվ դեր խաղալու նրանց անմիջական կենսական միջավայրի կերտման գործում: Մինչդեռ ժամանակ այս միջոցները կարող են ապահովել ծրագրման և ներդրումների հստակություն:	
▪ Մենք առաջարկում ենք եվրոպական քաղաքներին ընդունել ինտեգրված քաղաքային զարգացման ծրագրերը ամբողջությամբ: Կիրառման ուղղված ծրագրման գործիքները պետք է նկարագրեն քաղաքների և շրջակա միջավայրի խոցելի և ամուր կողմերը՝ հիմնված ներկա իրավիճակի վերլուծության վրա, ▪ սահմանեն հետևողական զարգացման նպատակներ քաղաքային տարածքի համար և մշակեն քաղաքի համար տեսլական, ▪ համակարգեն տարբեր միջավայրերը, ոլորտային և տեխնիկական ծրագրերն ու քաղաքականությունները, և երաշխավորեն, որ ծրագրված ներդրումները կօգնեն խթանելու քաղաքային տարածքի ներդաշնակ զարգացմանը, ▪ համակարգեն և կենտրոնացնեն հասարակական ու մասնավոր ոլորտների հիմնադրամների օգտագործումը, և ▪ համակարգված լինեն տեղական ինքնակառավարման և քաղաքային-տարածաշրջանային մակարդակներում, ներգրավեն քաղաքացիներին և այլ աջակիցների, ովքեր կարող են զգալիորեն նպաստել յուրաքանչյուր տարածքի ապագա տնտեսական, հասարակական, մշակութային և շրջակա միջավայրի որակների ապահովմանը:	▪ We recommend that European cities consider drawing up integrated urban development programmes for the city as a whole. These implementation-oriented planning tools should describe the strengths and the weaknesses of cities and neighbourhoods based upon an analysis of the current situation, ▪ define consistent development objectives for the urban area and develop a vision for the city, ▪ coordinate the different neighbourhood, sectoral and technical plans and policies, and ensure that the planned investments will help to promote a well-balanced development of the urban area ▪ coordinate and spatially focus the use of funds by public and private sector players and ▪ be co-ordinated at local and city-regional level and involve citizens and other partners who can contribute substantially to shaping the future economic, social, cultural and environmental quality of each area.
Պետք է ամրապնդել համակարգումը	Coordination at local and city-regional level

տեղական և քաղաքային-տարածաշրջանային մակարդակում: Նպատակը քաղաքների և գյուղական տարածքների, ինչպես նաև քաղաքային և մայրաքաղաքային տարածաշրջաններում փոքր, միջին և մեծ քաղաքների միջև համահավասար համագործակցությունն է: Մենք պետք է դադարենք դիտել քաղաքային զարգացման քաղաքականության հարցերը և որոշումները յուրաքանչյուր քաղաքի մակարդակում տարանջատված: Մեր քաղաքները պետք է լինեն քաղաքային տարածաշրջանային զարգացման կիզակետերը և պատասխանատվություն ստանձնեն տարածաշրջանային համախմբվածության համար: Արդյունավետ կլինի, որ մեր քաղաքները ավելի սերտ հաղորդակցվեն միմյանց հետ եվրոպական մակարդակում:	should be strengthened. An equal partnership between cities and rural areas as well as between small-, medium-sized and large towns and cities within city-regions and metropolitan regions is the aim. We must stop looking at urban development policy issues and decisions at the level of each city in isolation. Our cities should be focal points of city-regional development and assume responsibility for territorial cohesion. It would therefore be helpful if our cities would network more closely with each other at European level.
Ինտեգրված քաղաքային զարգացման քաղաքականությունը առաջարկում է մեզ մեթոդների ամբողջություն, որն արդեն ապացուցել է իր արժեքը մի շարք եվրոպական քաղաքներում զարգացնող ժամանակակից, համագործակցող և արդյունավետ կառավարման համակարգի գործում: Սրանք անհրաժեշտ են եվրոպական քաղաքների մրցունակությունը բարելավելու համար: Այդ մեթոդները դյուրինացնում են բնակարանային, տնտեսական, ենթակառուցվածքների և ծառայությունների զարգացման վաղ շահավետ համադրումը՝ հաշվի առնելով, մասնավորապես, գոյություն ունեցող ծերացման և արտագաղթի միտումների ազդեցությունն ու էներգետիկ քաղաքականության պայմանները:	Integrated urban development policy offers us a set of instruments which have already proved their worth in numerous European cities in developing modern, co-operative and effective governance structures. These are indispensable for improving the competitiveness of European cities. They facilitate early beneficial co-ordination of housing, economic, infrastructure and services development by taking account, inter alia, of the impact of existing ageing and migration trends and energy-policy conditions.
Ինտեգրված քաղաքային զարգացման քաղաքականության շրջանակում մենք համարում ենք, որ գործողության հետևյալ ռազմավարությունները չափազանց կարևոր են եվրոպական քաղաքների մրցունակությունը ամրապնդելու համար:	Within the scope of an integrated urban development policy, we consider the following strategies for action to be of crucial importance for strengthening the competitiveness of European cities:

- Բարձրորակ տարածքների ապահովում հասարակական ստեղծում և	- Creating and ensuring high-quality public spaces
Հասարակական տարածքների որակը, քաղաքային արհեստական լանդշաֆտներն ու ճարտարապետական և քաղաքային զարգացումը կարևոր դեր ունեն քաղաքային բնակչության կենսապայմանների հարցում: Որպես թույլ տեղային գործոններ, դրանք էական նշանակություն ունեն գրավելու համար գիտելիքահեն բիզնեսներին, որակավորված և ստեղծագործ աշխատուժին և տուրիզմին: Այսպիսով, ճարտարապետության, ենթակառուցվածքի նախագծման և քաղաքաշինության փոխգործությունը պետք է զարգանա, որպեսզի ստեղծի գրավիչ՝ սպառողին ուղղված հասարակական տարածքներ և կենսամիջավայրում հասնի բարձր չափանիշի՝ “շինարվեստի” (բաուկուլտուր): Շինարվեստը պետք է ընկալվի բառի ամենալայն իմաստով՝ իբրև մշակութային, տնտեսական, տեխնոլոգիական, հասարակական և բնապահպանական ոլորտների ընդհանրություն՝ ներգործելով գծագրման և շինարարության որակի ու գործընթացի վրա: Այնուամենայնիվ, այս մոտեցումը չպետք է սահմանափակվի հասարակական տարածքներով: Այսպիսի “շինարվեստ” անհրաժեշտ է ողջ քաղաքի և նրա շրջակայքի համար: Եվ քաղաքները, և կառավարությունը պետք է ունենան իրենց ներգործությունը: Սա հատկապես կարևոր է ճարտարապետական ժառանգության պահպանման համար: Պատմական շենքերը, հասարակական տարածքներն ու նրանց քաղաքային և ճարտարապետական արժեքը պետք է պահպանվեն:	The quality of public spaces, urban man-made landscapes and architecture and urban development play an important role in the living conditions of urban populations. As soft locational factors, they are important for attracting knowledge industry businesses, a qualified and creative workforce and for tourism. Therefore, the interaction of architecture, infrastructure planning and urban planning must be increased in order to create attractive, user-oriented public spaces and achieve a high standard in terms of the living environment, a “Baukultur”. Baukultur is to be understood in the broadest sense of the word, as the sum of all the cultural, economic, technological, social and ecological aspects influencing the quality and process of planning and construction. However, this approach should not be limited to public spaces. Such a “Baukultur” is needed for the city as a whole and its surroundings. Both cities and government must make their influence felt. This is particularly important for the preservation of architectural heritage. Historical buildings, public spaces and their urban and architectural value must be preserved.
Գործող և պատշաճ նախագծված քաղաքային տարածքների, ենթակառուցվածքների և ծառայությունների ստեղծումն ու պահպանումը հանձնարարական է, որը պետք է	Creating and safeguarding functional and well-designed urban spaces, infrastructures and services is a task which must be tackled jointly by the state, regional and the local authorities, as

իրականացվի պետության, տարածաշրջանային և տեղական մարմինների, ինչպես նաև քաղաքացիների և ձեռնարկատիրությունների հետ համատեղ:	well as by citizens and businesses.
- Ենթակառուցվածքային ցանցերի արդիականացում և էներգիայի արդյունավետության բարելավում	- Modernizing infrastructure networks and improving energy efficiency
Կարելի է կատարել նշանակալի ներդրումներ կենսակերպի որակի, դիրքային առանձնահատկության և շրջակա միջավայրի որակի բարելավման համար՝ համակարգելով քաղաքային - տարածաշրջանային երթևեկությունը կայուն, հասանելի և մատչելի ցանցերով: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել երթևեկության կառավարման և փոխկապակցված երթևեկության միջոցներին՝ ներառյալ հեծանվային և հետիոտի ենթակառուցվածքները: Քաղաքային երթևեկությունը պետք է համաձայնեցվի բնակավայրերի, աշխատանքային տարածքների, շրջակա միջավայրի և հասարակական տարածքների տարբեր պահանջների հետ:	An essential contribution to the quality of life, locational quality and the quality of the environment can be made by sustainable, accessible and affordable urban transport with coordinated links to the city-region transport networks. Particular attention should be paid to traffic management and interlinking transport modes, including cycling and pedestrian infrastructure. Urban transport must be reconciled with the different requirements of housing, work areas, the environment and public spaces.
Տեխնիկական ենթակառուցվածքը, հատկապես ջրամատակարարումը, կեղտաջրերի մաքրումը և այլ մատակարարման ցանցերը, պետք է բարելավվեն նախնական փուլում և համապատասխանեցվեն փոփոխվող կարիքներին, որպեսզի բավարարեն հետագա պահանջները բարձրորակ քաղաքային կենսապայմանների ապահովման համար:	Technical infrastructure, especially water supply, waste-water treatment and others supply networks, must be improved at an early stage and adapted to changing needs in order to meet future requirements for high quality urban living.
Կայուն կենցաղային ծառայությունների համար կարևոր նախապայմաններ են հանդիսանում էներգախնայողությունն ու բնական պաշարների տնտեսապես արդյունավետ կիրառումը: Անհրաժեշտ է բարելավել շենքերի էներգախնայողությունը: Բնակարանային ֆոնդի վերականգնումը կարող է կարևոր	Key prerequisites for sustainable public utility service are energy efficiency and economic use of natural resources and economic efficiency in their operation. Energy efficiency of buildings must be improved. This concerns both existing and new buildings. The renovation of housing stock can have an important impact on

ազդեցություն ունենալ էներգախնայողության համար և բարելավել բնակչի կենսամիջավայրը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել հավաքովի մասերից բաղկացած, հին և ցածրորակ շենքերին: Օպտիմիզացված և արդյունավետ ենթակառուցվածքային ցանցերը և էներգաարդյունավետ շենքերը կնվազեցնեն ձեռնարկատիրությունների և բնակիչների ծախսերը:	energyefficiency and the improvement of a resident’s quality of life. Particular attention mustbe paid to pre-fabricated, old and low quality buildings. Optimized and perfomant infrastructure networks and energy efficient buildings will lower costs for businessesand residents alike.
Պաշարների արդյունավետ և կայուն կիրառման կարևոր հիմքը կոմպակտ կառուցվածք ունեցող շինությունն է: Այն կարելի է ստանալ տարածական պլանավորման և քաղաքաշինության միջոցով, որը կանխում է քաղաքային տարածքների ընդլայնումը՝ վերահսկելով հողային պաշարներն ու անշարժ գույքի չարաշահումը: Բնակության, աշխատավայրի, կրթության, հարմարությունների և հանգստի վայրերի համակցման ռազմավարությունը քաղաքային միջավայրում ապացուցվել է որպես կայուն մեթոդ:	An important basis for efficient and sustainable use of resources is a compact settlement structure. This can be achieved by spatial and urban planning, which prevents urban sprawl by strong control of land supply and of speculative development. The strategy of mixing housing, employment, education, supply and recreational use in urban neighbourhoods has proved to be especially sustainable.
Քաղաքները պետք է նպաստեն բնակիչների կենսակերպի որակի ապահովմանը և զարգացմանը, ինչպես նաև բնակավայրերը դարձնեն գրավիչ որպես ձեռնարկատիրական վայրեր՝ կիրառելով կրթության, աշխատանքի, հասարակական ծառայությունների, առողջապահության, ապահովության և անվտանգության ոլորտներում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները, ինչպես նաև քաղաքային տնտեսության կառավարման զարգացման միջոցները:	Cities must contribute to ensuring and enhancing their residents' quality of life and their attractiveness as business locations by making use of sophisticated information and communication technologies in the fields of education, employment, social services, health, safety and security, as well as means for improving urban governance.
Մեր քաղաքները պետք է հարմարեցվեն դիմակայելու կլիմայի փոփոխության արդյունքում սպառնացող վտանգին: Հճգրիտ նախագծված և հատակագծված քաղաքային զարգացումը կարող է ապահովել ցածր-ածխածնային զարգացման ուղի, բարելավել	Our cities must also be able to adjust to the threat posed by climate change. Well-designed and planned urban development can provide a low carbon way ofaccommodating growth, improve environmental quality and reduce carbon emissions. Cities can achieve these

շրջակա միջավայրի որակը և նվազեցնել ածխածնային արտանետումները: Քաղաքները կարող են հասնել այս արդյունքներին կանխարգելման, մեղմացման և հարմարեցման նորարարական մեթոդներով, որոնք իրենց հերթին նպաստում են նոր արդյունաբերության զարգացմանը և ցածր ածխածնային բիզնեսին:	outcomes through innovative prevention, mitigation and adaptation measures which in turn aid the development of new industry and low carbon business.
- Նորարարությունների և կրթության ակտիվ քաղաքականություններ	- Proactive innovation and educational policies
Քաղաքներն այնպիսի վայրեր են, որտեղ ստեղծվում և նաև տարածվում են շատ գիտելիքներ: Քաղաքային գիտելիքի ներուժի ամբողջական կիրառումը կախված է նախադպրոցական և դպրոցական կրթության որակից և կրթության ու վերապատրաստման համակարգերում ներառված հնարավորությունների փոխանցումից, ինչպես նաև հասարակական և մշակութային ցանցերից: Կարևոր են նաև ցկյանս կրթության հնարավորությունների ապահովումը, համալսարանների և ոչ համալսարանական հետազոտությունների կառույցների բարձր որակը և արդյունաբերության, բիզնեսի և գիտական համայնքի միջև փոխանակման ցանցը:	Cities are places where a lot of knowledge is created and also imparted. The full exploitation of a city's knowledge potential depends on the quality of its pre-school and school education, and on the transfer opportunities provided within the education and training systems, as well as by social and cultural networks. The opportunities for lifelong learning, the excellence of the universities and non-university research institutes and the transfer network between industry, businesses and the scientific community.
Ինտեգրված քաղաքային զարգացման քաղաքականությունը կարող է նպաստել այս գործոնների բարելավմանը, օրինակ՝ միավորելով շահագրգիռ կողմերին, օժանդակելով ցանցերին և օպտիմացնելով տեղանքի կառույցները: Ինտեգրված քաղաքային զարգացումը նպաստում է հասարակական և միջմշակութային երկխոսությանը:	Integrated urban development policy can contribute to improving these factors, for example by bringing the stakeholders together, by supporting networks and optimizing locational structures. Integrated urban development promotes social and intercultural dialogue.
Ինտեգրված քաղաքային զարգացման ռազմավարությունները, համատեղ քաղաքային զարգացման կառավարումը և ճշգրիտ տնօրինումը կարող են աջակցել եվրոպական քաղաքների ներուժի	Integrated urban development strategies, cooperative urban development management and good governance can contribute towards a purposeful use of the potential of European cities particularly with regard to competitiveness and

նպատակաուղղված օգտագործմանը, մասնավորապես մրցունակությանը և աճին, ինչպես նաև կարող են նպաստել շրջակա միջավայրի անհամաչափությունների նվազեցման գործընթացին: Նրանք քաղաքացիներին հնարավորություն են տալիս ցուցաբերելու մասնակցություն ժողովրդավարությանը:	growth, as well as to reducing disparities within and among neighbourhoods. They provide citizens with an opportunity for social and democratic participation.
II. Հատուկ ուշադրություն դարձնել քաղաքային ամբողջություն կազմող մեկուսացված թաղամասերին	II. That special attention is paid to deprived neighbourhoods within the context of the city as a whole.
Քաղաքները բախվել են կարևոր մարտահրավերների, որոնք մասնավորապես կապված են տնտեսական և հասարակական կառույցների և գլոբալացման փոփոխությունների հետ: Հատուկ խնդիրներ են հատկապես գործազրկությունն ու սոցիալական բացառումը: Տնտեսական և հասարակական պայմանների, ինչպես նաև շրջակա միջավայրի որակի զգալի տարբերություններ կարող են գոյություն ունենալ քաղաքային տարածքներում: Ի հավելում, սոցիալական տարբերությունները և տնտեսական զարգացման տարբերությունները հաճախ շարունակում են խորանալ, որը քաղաքներում հանգեցնում է անկայունության: Հասարակական ինտեգրման քաղաքականությունը, որը նպաստում է անհավասարությունների նվազեցմանն ու սոցիալական անհավասարության կանխարգելմանը, կարող է հանդիսանալ լավագույն երաշխիք մեր քաղաքներում անվտանգության պահպանումն ապահովելու համար:	Cities are faced with major challenges, especially in connection with the change in economic and social structures and globalization. Specific problems, among others, are especially high unemployment and social exclusion. Within one city, considerable differences may exist in terms of economic and social opportunities in the individual city areas, but also in terms of the varying quality of the environment. In addition, the social distinctions and the differences in economic development often continue to increase which contributes to destabilization in cities. A policy of social integration which contributes to reducing inequalities and preventing social exclusion will be the best guarantee for maintaining security in our cities.
Քաղաքներում և քաղաքային տարածքներում սոցիալական համախմբվածության և ինտեգրման նպատակներին հասնելու համար հասարակական բնակելի տարածքների ըմբռնելի քաղաքականությունները կարող են հանդիսանալ արդյունավետ գործիքներ: Առողջ, հարմարավետ և մատչելի	In order to achieve the objectives of social cohesion and integration in cities and urban areas, well-conceived social housing policies can be effective tools. Healthy, suitable and affordable housing can make these neighborhoods more attractive for both young and old people. This is a contribution to stability

բնակարանաշինությունը կարող է այս միջավայրերը դարձնել ավելի գրավիչ և երիտասարդների և մեծահասակներ համար: Այն նպաստում է շրջակա միջավայրի կայունությանը:	in the neighborhoods.
Ավելի նպատակահարմար է նախապես հայտնաբերել նախազգուշական նշաններ և ժամանակին ու արդյունավետ կերպով իրականացնել վերականգնողական քայլեր: Եթե տարածքը սկսում է անկում ապրել, դրա շրջակայքի վերականգնման աշխատանքները կարող են մի քանի անգամ ավելի ծախսատար լինել: Կառավարությունը պետք է առաջարկի հեռանկարներ և խրախուսական միջոցներ վնասված տարածքներում ապրող բնակչության կենսակերպը բարելավելու համար: Կարևոր է բնակչության ներգրավումը և ավելի արդյունավետ երկխոսությունը քաղաքական ներկայացուցիչների, բնակիչների և տնտեսվարողների միջև, որպեսզի համատեղ ուժերով լավագույն լուծումը գտնեն յուրաքանչյուր մեկուսացված քաղաքային տարածքի համար:	It is better to spot early warning signs and take remedial action in a timely and effective way. This saves resources. Once an area has begun to decline, the cost of and difficulty in turning it around can be many times more expensive. Government must offer an outlook and incentives for improvement to residents in affected areas. Active involvement of the residents and a better dialogue between the political representatives, the residents and the economic actors is essential to find the best solution for each deprived urban area.
Հաշվի առնելով վերոնշյալը՝ մենք համարում ենք, որ գործողության հետևյալ ռազմավարությունները, որոնք ներառված են ինտեգրված քաղաքային զարգացման քաղաքականության մեջ, էական նշանակություն ունեն մեկուսացված քաղաքային թաղամասերի համար՝	Against this background, we consider the following strategies for action, embedded in an integrated urban development policy, to be of crucial importance for deprived urban neighborhoods:
- Ռազմավարությունների կիրառում ֆիզիկական միջավայրին աջակցելու համար	- Pursuing strategies for upgrading the physical environment
Տնտեսական գործունեությունն ու ներդրումները մի կողմից, և բարձրորակ քաղաքային կառույցները, գերազանց կառուցապատված շրջակայքն ու արդի և արդյունավետ ենթակառուցվածքն ու հարմարությունները մյուս կողմից սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ: Այդ	Economic activity and investments on the one hand and high-quality urban structures, a sound built environment and a modern and efficient infrastructure and facilities on the other are closely interlinked. For this reason, it is necessary to improve existing building stock in deprived neighborhoods with regard to their

պատճառով անհրաժեշտ է ավելացնել գոյություն ունեցող շինարարական ֆոնդերը մեկուսացված տարածքներում նախագծման, ֆիզիկական պայմանների և էներգիայի արդյունավետության ապահովման համար: Նոր շինություններում, ինչպես նաև գոյություն ունեցող խոշոր հավաքովի մասերից բաղկացած հին և ցածրորակ շենքերում, բնակարանային չափանիշների բարձրացումը կրում է մեծագույն ներուժ եվրամիությունում էներգիո-արդյունավետության բարելավման և այդպիսով կլիմայի փոփոխության դեմ պայքարելու համար:	design, physical conditions and energy efficiency. Improvements in housing standards in new buildings as well as in existing large prefabricated, old and low quality buildings bear the biggest potential for increasing energy efficiency within the EU and thereby combating climate change.
Շրջակա միջավայրին նպաստելու համար կատարվող ներդրումների կայունությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ներառել դրանք երկարաժամկետ զարգացման ռազմավարության մեջ, որն իր մեջ ներառում է, մասնավորապես, հասարակական և մասնավոր ոլորտների կողմից շարունակական ներդրումներ:	In order to increase the sustainability of investments in upgrading the physical environment, they must be embedded in a long-term development strategy which also includes, inter alia, public and private follow-up investments.
- Տեղական տնտեսության և տեղական աշխատաշուկայի քաղաքականության ամրապնդում	- Strengthening the local economy and local labour market policy
Մեկուսացված թաղամասերի տնտեսական կայունությունը ապահովելու համար անհրաժեշտ է օգտագործել նաև ներքին տնտեսական ուժերը: Այս համատեքստում աշխատաշուկայի և տնտեսության քաղաքականությունները, որոնք համապատասխանում են առանձին շրջանների պահանջներին, կարող են հանդիսանալ հարմար գործիքներ: Նպատակը աշխատատեղերի ստեղծումն ու ապահովումն է և նոր ձեռնարկությունների շահագործման սկիզբը հեշտացնելը: Մասնավորապես, պետք է բարելավվեն տեղական աշխատաշուկա մուտք գործելու հնարավորությունները՝ առաջարկելով պահանջներին համապատասխան վերապատրաստման դասընթացներ: Անհրաժեշտ է օգտագործել	Measures to secure the economic stabilization of deprived neighborhoods must also exploit endogenous economic forces in the neighborhood themselves. In this context, labour market and economic policies which are tailored to the needs of the individual neighborhoods will be the appropriate instruments. The objective is to create and secure jobs and to facilitate the start-up of new businesses. In particular, access opportunities to local labour markets must be improved by offering demand oriented training. Increased use must also be made of the employment and training opportunities in the ethnic economy.

զբաղվածության և վերապատրաստման հնարավորությունները "էթնիկական տնտեսության" մեջ:	
Եվրամիությանը, անդամ պետություններին և քաղաքներին կոչ է արվում ստեղծելու ավելի բարենպաստ պայմաններ և միջոցներ տեղական տնտեսության, այնուհետև տեղական աշխատաշուկաների ամրապնդման համար՝ հատկապես խթանելով սոցիալական կողմնորոշում ունեցող տնտեսությունը և ապահովելով քաղաքացիների համար ընդունելի ծառայություններ:	The European Union, Member States and cities are called on to create better conditions and instruments to strengthen the local economy and thus the local labour markets, in particular by promoting the social economy and providing citizen-friendly services.
- Կրթության և վերապատրաստման գործող քաղաքականություններ երեխաների ու երիտասարդների համար	- Proactive education and training policies for children and young people
Մեկուսացված թաղամասերում իրավիճակի բարելավման կարևոր սկզբնակետը կրթության և վերապատրաստման դասընթացների բարելավումն է տեղական համայնքում գործող քաղաքականությունների հետ համատեղ, որոնք կենտրոնացված են երեխաների և երիտասարդների վրա:	A crucial starting point for improving the situation in deprived neighbourhoods is the improvement of the education and training situation in the local community in conjunction with proactive policies focused on children and young people.
Անհրաժեշտ է ապահովել և զարգացնել խոցելի թաղամասերում կրթության և վերապատրաստման ավելի շատ հնարավորություններ, որոնք ուղղված են տվյալ տարածքներում բնակվող երեխաների և երիտասարդների պահանջների և նրանց անխիարժեքության արտահայտմանը: Երեխաների և երիտասարդների վրա կենտրոնացված քաղաքականության միջոցով, որը կապակցված է նրանց բնակության վայրի սոցիալական տարածքի հետ, պետք է նպաստենք մեկուսացված թաղամասերում բնակվող երեխաների և երիտասարդների հեռանկարային ծրագրերի զարգացմանը, որպեսզի մասնակցություն ցուցաբերեն և իրականացնեն իրենց նպատակները, և պետք է ապահովենք հավասար	More possibilities for education and training must be provided and improved in disadvantaged neighbourhoods which are geared to the needs of, and address deficiencies in provision for children and young people living there. By means of a policy focus on children and young people which is tailored to the social area they live in, we must contribute to improving the prospects of the children and young people living in deprived neighbourhoods to participate and realize their ambitions and to ensure equal opportunities on a long-term basis.

հնարավորություններ երկարաժամկետ հիմունքներով:	
- Աջակցություն արդյունավետ և մատչելի քաղաքային երթևեկությանը	- Promotion of efficient and affordable urban transport
Բազմաթիվ մեկուսացված թաղամասեր կրում են անկայուն երթևեկության լրացուցիչ բեռը, ինչպես նաև շրջակա միջավայրի վատ ազդեցությունները, որոնք հետագայում նվազեցնում են այդ տարածքների գրավիչ լինելը: Արդյունավետ և մատչելի հանրային երթևեկության համակարգի զարգացումը այս թաղամասերում ապրող բնակիչներին կտա հավասար հնարավորություններ այլ քաղաքացիների պես ունենալու փոխադրամիջոցի ու հասանելիության միջոցներ, որոնց ակնկալելու իրավունքն ունեն:	Many deprived neighbourhoods have the additional burden of poor transport connections as well as poor environmental influences which further reduce their attractiveness. The development of an efficient and affordable public transport system will give residents in these neighbourhoods equal opportunity to have the mobility and accessibility of other citizens – which they have a right to expect.
Այս նպատակին հասնելու համար տվյալ տարածքներում փոխադրամիջոցների պլանավորումն ու երթևեկության կառավարումը պետք է նպատակաուղղված լինի նվազեցնելու փոխադրամիջոցների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և կազմակերպելու երթևեկությունն այնպես, որն ավելի արդյունավետ կդարձնի այս թաղամասերի ինտեգրումը քաղաքին և տարածաշրջանին որպես ամբողջություն: Այն նաև կպահանջի համապատասխան ցանցեր հետիոտնային և հեծանվային երթևեկության համար:	In order to achieve this aim, transport planning and traffic management in these areas must increasingly aim to reduce the negative impacts of transport on the environment and to organise transport in a manner which will better integrate these neighbourhoods into the city and region as a whole. This will also require appropriate networks for pedestrian and cycle traffic.
Որքան լավ կարողանանք կայունացնել մեկուսացված թաղամասերը տնտեսապես, ինտեգրել նրանց սոցիալապես և բարելավել շրջակա միջավայրի և փոխադրամիջոցների ենթակառուցվածքները, այդքան ավելի կմեծանա հավանականությունը, որ մեր քաղաքները կմնան հասարակական առաջընթացի, աճի և նորարարությունների կենտրոն երկարաժամկետ սկզբունքով:	The better we manage to stabilize deprived neighbourhoods economically, to integrate them socially and to upgrade their physical environment and transport infrastructure, the better the chances are that our cities will remain places of social progress, growth and innovation in the long term.

Մենք շեշտում ենք, որ	We emphasize that:
Քաղաքային զարգացման քաղաքականությունը պետք է լինի ազգային մակարդակի վրա, և նորարարական լուծումների համար խթանիչ միջոցը նույնպես պետք է ստեղծվի ազգային մակարդակի, ինչպես նաև այլ մակարդակների վրա:	Urban development policy should be laid down at national level and the stimuli for innovative solutions should also be created at national level, as well as at other levels.
Մեր քաղաքներին անհրաժեշտ է գործողության իրականացման բավարար հնարավորություն, որպեսզի իրականացնեն տեղական ինքնակառավարման մարմինների հանձնարարականները պատասխանատվությամբ և հստակ ֆինանսական հիմքով, որոնք ապահովում են երկարաժամկետ կայունություն: Այսպիսով, կարևոր է նաև, որ անդամ պետությունները ունենան հնարավորություններ օգտագործելու համար եվրոպական կառուցվածքային ֆոնդերը հիմնական ինտեգրման քաղաքային զարգացման ծրագրերի մեջ: Այս ֆոնդերի օգտագործումը պետք է սերտորեն կենտրոնացվի որոշակի հակասությունների և համաձայնությունների վրա, ինչպես նաև հաշվի առնի հնարավորությունները, խոչընդոտներն ու առանձնահատկությունները անդամ պետություններում: Տեղական ինքնակառավարման մարմինները պետք է զարգացնեն համապատասխան հմտություններ և արդյունավետություն ինտեգրման քաղաքային զարգացման քաղաքականությունները կիրառելու համար, ինչպես նաև ձեռք բերեն համընդհանուր որակ և կայունություն տվյալ միջավայրում:	Our cities need enough scope for action in order to perform local tasks in a responsible manner and a sound financial basis which provides long-term stability. Therefore it is important too that Member States have the opportunity to use the European structural funds for substantial integrated urban development programmes. The use of these funds should be focused closely on the specific difficulties and potentials as well as take into consideration the opportunities, difficulties and specificities in the Member States. If not already provided for, local authorities should develop the necessary skills and efficiency to implement integrated urban development policies, also with a view to achieving overall quality and sustainability in the built-up environment.
ԵՄ նոր նախաձեռնություններն են՝ ՋԵՍՍԻԿԱ (Քաղաքներում կայուն ներդրումներին եվրոպական համատեղ աջակցում) և ՋԵՐԵՄԻ (Եվրոպական համատեղ ռեսուրսներ մանր և միջին ձեռնարկությունների համար), որոնք աջակցում են քաղաքային զարգացման համար դրամական միջոցների և մանր ու միջին ձեռնարկությունների ֆոնդերի	The new EU initiatives, JESSICA and JEREMIE, supporting the establishment of urban development funds and funds for SME, using financial engineering instruments to leverage private capital into the implementation of integrated urban development strategies, offer promising opportunities to enhance the effectiveness of conventional national and

ստեղծմանը՝ օգտագործելով ֆինանսական ճարտարագիտության մեթոդները մասնավոր կապիտալի լծակի համակարգում՝ ինտեգրման քաղաքային զարգացման ռազմավարությունների կիրառմամբ, և առաջարկում է խոստումնալից հնարավորություններ բարձրացնելու ազգային և եվրոպական ֆոնդերի աղբյուրների արդյունավետությունը:	European funding sources.
Ազգային մակարդակում կառավարության մարմինները պետք է ընկալեն քաղաքների կարևորությունը, որպեսզի կարողանան արտահայտել ազգային, տարածաշրջանային և տեղական ինքնակառավարման մարմինների նպատակները և նրանց քաղաքականությունների ազդեցությունը: Կառավարության մարմինների տարբեր ոլորտների ջանքերը, որոնք ուղղված են քաղաքային հարցերին կամ ազդեցություն ունեն դրանց վրա, պետք է ընդգծվեն և ինտեգրվեն այնպես, որպեսզի ցուցաբերեն արդյունավետություն, այլ ոչ թե հակառակը:	At national level, Government Departments need to recognise more clearly the importance of cities to deliver national, regional and local ambitions, and the impact of their policies upon them. The efforts of different sectoral Government Departments working or having an impact on urban issues need to be better aligned and integrated so they complement rather than conflict.
Մենք ընդգծում ենք փորձի և գիտելիքի պարբերաբար և կառուցվածքային փոխանակման կարևորությունը կայուն քաղաքային զարգացման դաշտում: Մենք դիմում ենք եվրոպական հանձնաժողովին, որպեսզի “Շրջանները՝ հանուն տնտեսական փոփոխությունների” նախաձեռնության հետագա համաժողովի ընթացքում ներկայացնի գործնական կիրառման փոխանակման արդյունքը Լայպցիգի խարտիայի ուղեցույցների հիման վրա: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է ունենալ եվրոպական հարթակ, որտեղ կարելի է միավորել և զարգացնել լավագույն փորձը, վիճակագրությունները, համեմատական վերլուծությունների ուսումնասիրությունները, գնահատականները, մասնագիտական գնահատումներն ու այլ քաղաքային հետազոտություններ՝ այսպիսով աջակցելով բոլոր մակարդակներում և բոլոր ոլորտներում	We emphasize the importance of systematic and structured exchange of experience and knowledge in the field of sustainable urban development. We ask the European Commission to present the outcome of the exchange of good practice on the basis of the guidelines of the Leipzig Charter at a future conference under the auspices of the “Regions for Economic Change” initiative. Alongside this we need a European platform to pool and develop best practice, statistics, benchmarking studies, evaluations, peer reviews and other urban research to support actors involved in urban development at all levels and in all sectors. We will continue to promote and intensify the exchange of knowledge and experience between policy makers, practitioners and researchers at local, regional, national and European level in the future in order to reinforce the urban dimension of the EU Sustainable Development Strategy, the Lisbon

քաղաքային զարգացման գործում ընդգրկված անձանց: Մենք շարունակելու ենք ապագայում սատարել և կայունացնել քաղաքականություն մշակողների, գործող անձանց և հետազոտողների գիտելիքի և փորձի փոխանակումը տեղական, տարածաշրջանային, ազգային և եվրոպական մակարդակներում, որպեսզի ամրապնդվի ԵՄ կայուն զարգացման ռազմավարության, Լիսաբոնի ռազմավարության ու Եվրոպական զբաղվածության ռազմավարության կարևորությունը:	Strategy and the European Employment Strategy.
Եվրոպան կարիք ունի ուժեղ և ապրելու համար հարմարավետ քաղաքների:	Europe needs cities and regions which are strong and good to live in.
*- Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով՝ ուրբանլաբ Երևան ՀԿ-ի միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակներին՝ ուրբանլաբ Երևան ՀԿ-ին և ծրագրում ներգրավված անձանց, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ: Հաշվետվությունում արտահայտված մտքերի ամբողջական կամ մասնակի օգտագործումը թույլատրվում է պատշաճ հղման դեպքում միայն: Այն պետք է ունենա հետևյալ բովանդակությունը. “Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման, վերլուծության և առաջարկությունների մշակման ծրագրի հաշվետվություն, ուրբանլաբ Երևան, Երևան, 2012”:	

Հավելված 6 <u>Ոչ պաշտոնական թարգմանություն*</u>	
Գլխավոր խորհրդաժողովի արձանագրություններ Տասնիններորդ նստաշրջան, Նայրոբի, 26-30 հոկտեմբերի, 1976 թվական Գլուխ 1 Բանաձևեր Միավորված Ազգերի Կրթության, Գիտության և Մշակույթի Կազմակերպություն	Records of the General Conference Nineteenth Session Nairobi, 26 October to 30 November 1976 Volume 1 Resolutions United Nations Educational, Scientific and Cultural Organization
Առաջարկություն պատմական տարածքների պաշտպանության և ժամանակակից դերի վերաբերյալ¹	Recommendation concerning the safeguarding and contemporary role of historic areas¹
1- Առաջարկություն, որն ընդունվել է II Ծրագրի հանձնաժողովի զեկուցագրում երեսունչորսերորդ լիազուար նիստի ընթացքում 1976 թվականի նոյեմբերի 26-ին:	1-Recommendation adopted on the Report of Programme Commission II at the thirty-fourth plenary meeting on 26 November 1976.
Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության գլխավոր խորհրդաժողովը, հանդիպելով Նայրոբիում իր տասնիններորդ նստաշրջանի ժամանակ՝ 1976 թվականի հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 30-ը,	The General Conference of the United Nations Educational, Scientific and Cultural Organization, meeting in Nairobi at its nineteenth session, from 26 October to 30 November 1976,
Հաշվի առնելով այն, որ պատմական տարածքները մարդկության ամենօրյա միջավայրի մասն են կազմում ամենուր, արտահայտում են անցյալի կենդանի ներկայությունը, ապահովում են բազմազանությունը կյանքի տարբեր ոլորտներում, որն անհրաժեշտ է հասարակության բազմազանությունը ընդգծելու համար, և այս ամենով ձեռք են բերում արժեքներ և հավելյալ մարդկային	Considering that historic areas are part of the daily environment of human beings everywhere, that they represent the living presence of the past which formed them, that they provide the variety in life's background needed to match the diversity of society, and that by so doing they gain in value and acquire an additional human dimension,

Recommendation concerning the safeguarding and contemporary role of historic areas

հատկանիշների կարևորություն,	
Հաշվի առնելով այն, որ պատմական տարածքները հանդիսանում են մշակութային, կրոնական և հասարակական գործունեության բազմազանության ակնառու ապացույց, և այն, որ դրանց պահպանումն ու ժամանակակից հասարակական կյանքի մեջ ներգրավումը հանդիսանում է հիմնական գործոն քաղաքաշինության և երկրի զարգացման հարցում,	Considering that historic areas afford down the ages the most tangible evidence of the wealth and diversity of cultural, religious and social activities and that their safeguarding and their integration into the life of contemporary society is a basic factor in town-planning and land development,
Հաշվի առնելով այն, որ կարծրատիպայնացման և ապա-անհատականացման վտանգների դեմ անցյալի այս կենդանի վկան կենսական կարևորություն ունի մարդկության և ազգերի համար, ովքեր դրա մեջ են տեսնում իրենց կենսակերպի արտացոլումն ու ինքնության անկյունաքարերից մեկը,	Considering that in face of the dangers of stereotyping and depersonalization, this living evidence of days gone by is of vital importance for humanity and for nations who find in it both the expression of their way of life and one of the corner-stones of their identity,
Նշելով, որ աշխարհում աճի և արդիականացման պատրվակով անգիտակցաբար քանդման և անհիմն ու ոչ պատշաճ վերակառուցման աշխատանքները զգալի վնաս են հասցնում այս պատմական ժառանգությանը,	Noting that throughout the world, under the pretext of expansion or modernization, demolition ignorant of what it is demolishing and irrational and inappropriate reconstruction work is causing serious damage to this historic heritage,
Հաշվի առնելով, որ պատմական տարածքները անշարժ ժառանգություն են, որի ոչնչացումը հաճախ կարող է առաջացնել հասարակական անհանգստություն, նույնիսկ եթե այն չի տանում տնտեսական կորստի,	Considering that historic areas are an immovable heritage whose destruction may often lead to social disturbance, even where it does not lead to economic loss,
Հաշվի առնելով, որ այս իրավիճակը պահանջում է պատասխանատվություն յուրաքանչյուր քաղաքացուց և վերագրում է պետական մարմիններին պարտավորություններ, որոնք նրանք կարող են իրականացնել,	Considering that this situation entails responsibilities for every citizen and lays on public authorities obligations which they alone are capable of fulfilling,
Հաշվի առնելով այն, որ այս անփոխարինելի ժառանգության միջոցները հնացման վտանգներից կամ նույնիսկ ամբողջական վերացումից պահպանելու համար,	Considering that in order to save these irreplaceable assets from the dangers of deterioration or even total destruction to which they are thus exposed, it is for each State to

յուրաքանչյուր պետություն պետք է, որպես հրատապ հարց, ընդունի համապարփակ և գործող քաղաքականություն պատմական տարածքների և դրանց շրջակայքի պահպանության և վերականգնման համար՝ որպես ազգային, կրոնական կամ տեղական պլանավորում,	adopt, as a matter of urgency, comprehensive and energetic policies for the protection and revitalization of historic areas and their surroundings as part of national, regional or local planning,
Նշելով շատ դեպքերում արդյունավետ և բավարար չափով ճկուն օրենսդրության բացակայությունը ճարտարապետական ժառանգության վերաբերյալ և վերջինիս փոխկապակցումը քաղաքաշինության, տարածքային, ռեգիոնալ կամ տեղական նախագծման հետ,	Noting the absence in many cases of a legislation effective and flexible enough concerning the architectural heritage and its interconnexion with town-planning, territorial, regional or local planning,
Նշելով, որ գլխավոր խորհրդաժողովն արդեն ընդունել է միջազգային մեթոդներ մշակութային և բնական ժառանգության պահպանման համար, ինչպիսիք են առաջարկություն երկրաբանական պեղումների վերաբերյալ միջազգային չափանիշերի մասին (1956 թվական), առաջարկություն լանդշաֆտների և վայրերի գեղեցկության և առանձնահատկության պահպանության վերաբերյալ (1962 թվական), առաջարկություն հասարակական կամ մասնավոր աշխատանքների արդյունքում վտանգված մշակութային հարստության պահպանության վերաբերյալ (1966 թվական), և առաջարկություն, ազգային մակարդակով, մշակութային և բնական ժառանգության պահպանության վերաբերյալ (1972 թվական),	Noting that the General Conference has already adopted international instruments for the protection of the cultural and natural heritage such as the Recommendation on International Principles Applicable to Archaeological Excavations (1956), the Recommendation Concerning the Safeguarding of the Beauty and Character of Landscapes and Sites (1962), the Recommendation Concerning the Preservation of Cultural Property Endangered by Public or Private Works (1966), and the Recommendation Concerning the Protection, at National Level, of the Cultural and Natural Heritage (1972),
Ցանկություն հայտնելով ավելացնել և երկարաձգել սույն միջազգային մեթոդներում ներառված ստանդարտների և չափանիշերի կիրառումը,	Desiring to supplement and extend the application of the standards and principles laid down in these international instruments,
Մինչ այդ ունենալով առաջարկներ պատմական տարածքների պահպանության և դրանց ժամանակակից դերի վերաբերյալ, որը ներառված է նստաշրջանի օրակարգի 27-րդ կետում,	Having before it proposals concerning the safeguarding and contemporary rôle of historic areas, which question appears on the agenda of the session as item 27,

Որոշելով իր տասնութերորդ համագումարի ընթացքում, որ այս հարցը պետք է ստանա առաջարկության տեսք ուղղված անդամ պետություններին,	Having decided at its eighteenth session that this question should take the form of a Recommendation to Member States,
Ընդունում է սույն առաջարկությունը 1976 թվականի նոյեմբերի 26-ին:	Adopts, this twenty-sixth day of November 1976, the present Recommendation.
Գլխավոր խորհրդաժողովը խորհուրդ է տալիս անդամ պետություններին կիրառել վերը շարադրված դրույթները՝ որպես ազգային օրենք կամ մեկ այլ կանոն, ընդունելով միջոցներ սույն առաջարկության մեջ սահմանված չափանիշերն ու նորմերը ի կատար ածելու իրենց իրավասության ներքո գտնվող տարածքներում:	The General Conference recommends that Member States apply the above provisions by adopting, as a national law or in some other form, measures with a view to giving effect to the principles and norms set out in this Recommendation in the territories under their jurisdiction.
Գլխավոր խորհրդաժողովը խորհուրդ է տալիս անդամ պետություններին հրավիրել ազգային, տարածքային և տեղական մարմինների ու իր կառույցների, պատմական տարածքների և դրանց շրջակայքի պահպանության հարցերով զբաղվող ծառայությունների կամ մարմինների ու կազմակերպությունների ուշադրությունը սույն առաջարկության վրա:	The General Conference recommends that Member States bring this Recommendation to the attention of the national, regional and local authorities and of institutions, services or bodies and associations concerned with the safeguarding of historic areas and their environment.
Գլխավոր խորհրդաժողովը խորհուրդ է տալիս անդամ պետություններին զեկուցել սույն առաջարկության մեջ ներառված գործողության վերաբերյալ՝ համաձայն դրանում սահմանված ամսաթվերի և ձևի:	The General Conference recommends that Member States report to it, at the dates and in the form determined by it, on action taken by them on this Recommendation.
I. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ	I. DEFINITIONS
1. Սույն առաջարկության նպատակների հիման վրա՝ (ա) “Պատմական և ճարտարապետական (ներառյալ ազգային) տարածքները” պետք է համարվեն շենքերի, շինությունների և ազատ տարածքների որևէ խումբ, որը ներառում է հնագիտական և հնէաբանական վայրեր՝ բաղկացած քաղաքային կամ գյուղական միջավայրում բնակելի վայրերից, որոնց	1. For the purposes of the present recommendation: (a) “Historic and architectural (including vernacular) areas” shall be taken to mean any groups of buildings, structures and open spaces including archaeological and palaeontological sites, constituting human settlements in an urban or rural environment, the cohesion and value of which, from the

կապակցումն ու արժեքը հնագիտական, ճարտարապետական, նախապատմական, պատմական, գեղագիտական կամ հասարակական-մշակութային տեսակետից ճանաչված են: Այս "տարածքների" մեջ, որոնք իրենց առանձնահատկությամբ շատ են տարբերվում, հնարավոր է առանձնացնել մասնավորապես հետևյալը՝ նախապատմական վայրեր, պատմական քաղաքներ, հին քաղաքային թաղամասեր, գյուղեր և գյուղակներ, ինչպես նաև միատարր հուշարձաններ. հասկանալի է, որ վերջինս, որպես օրենք, պետք է զգուշորեն պահպանվի առանց փոփոխության: (բ) "Միջավայրը" պետք է համարվի բնական կամ մարդածին իրավիճակ, որն ազդում է այս տարածքների ընկալման անշարժ կամ դինամիկ եղանակին կամ որն ուղղակիորեն կապված է դրանց հետ տարածության մեջ կամ հասարակական, տնտեսական կամ մշակութային կապերով: (գ) "Պաշտպանությունը" պետք է հաշվի առնի պատմական կամ ավանդական տարածքների և դրանց շրջակայքի բացահայտումը, պաշտպանումը, պահպանությունը, վերականգնումը, վերանորոգումը, շահագործումն ու վերակենդանացումը:	archaeological, architectural, prehistoric, historic, aesthetic or socio-cultural point of view are recognized. Among these "areas", which are very varied in nature, it is possible to distinguish the following in particular: prehistoric sites, historic towns, old urban quarters, villages and hamlets as well as homogeneous monumental groups, it being understood that the latter should as a rule be carefully preserved unchanged. (b) The "environment" shall be taken to mean the natural or man-made setting which influences the static or dynamic way these areas are perceived or which is directly linked to them in space or by social, economic or cultural ties. (c) "Safeguarding" shall be taken to mean the identification, protection, conservation, restoration, renovation, maintenance and revitalization of historic or traditional areas and their environment.
II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՉԱՓԱՆԻՇԵՐ	II. GENERAL PRINCIPLES
2. Պատմական տարածքներն ու դրանց շրջակայքը պետք է համարվեն անփոխարինելի համընդհանուր ժառանգություն: Պետությունների կառավարություններն ու քաղաքացիները պետք է իրենց պարտականությունը համարեն պահպանել այս ժառանգությունը և ներգրավել այն արդի ժամանակների հասարակական կյանքի մեջ: Ազգային, տարածքային կամ տեղական մարմինները պետք է պատասխանատու լինեն այս պարտականության առջև քաղաքացիների և միջազգային համայնքի շահերից ելնելով՝	2. Historic areas and their surroundings should be regarded as forming an irreplaceable universal heritage, The governments and the citizens of the States in whose territory they are situated should deem it their duty to safeguard this heritage and integrate it into the social life of our times. The national, regional or local authorities should be answerable for their performance of this duty in the interests of all citizens and of the international community, in accordance with the conditions of each Member State as regards the allocation

համաձայն յուրաքանչյուր անդամ պետության պայմանների ուժերի բաշխման:	of powers.
3. Յուրաքանչյուր պատմական տարածք և իր շրջակայքը պետք է համարվի որպես միասնական ամբողջություն, որի հավասարակշռությունն ու առանձնահատկությունը կախված են բաղկացուցիչ մասերի փոխկապակցվածությունից, և որը ներառում է մարդկային գործունեության վայրեր, ինչպիսիք են շենքեր, տարածական կազմակերպումը և դրա շրջակայքը: Բոլոր գործող տարրերը, ներառյալ մարդկային գործունեության վայրերը, չնայած համեստ, այնուամենայնիվ ունեն կարևորություն, որն էլ չպետք է անտեսվի:	3. Every historic area and its surroundings should be considered in their totality as a coherent whole whose balance and specific nature depend on the fusion of the parts of which it is composed and which include human activities as much as the buildings, the spatial organization and the surroundings. All valid elements, including human activities, however modest, thus have a significance in relation to the whole which must not be disregarded.
4. Պատմական տարածքներն ու դրանց շրջակայքը պետք է ակտիվորեն պաշտպանվեն ամեն տեսակի վնասից, մասնավորապես ոչ պատշաճ օգտագործումից, ավելորդ հավելումներից և սխալ ու անընդունելի փոփոխություններից, քանի որ կարող են վնասել դրանց յուրահատկությունը, ինչպես նաև պետք է պաշտպանվեն աղտոտվածության արդյունքում առաջացող որևէ վնասից: Յանկացած վերականգնողական աշխատանք պետք է հիմնված լինի գիտական չափանիշերի վրա: Նմանապես, մեծ ուշադրություն պետք է դարձնել տարբեր հատվածների փոխկապակցվածության կամ հակադրության արդյունքում առաջացած ներդաշնակությանը և գեղագիտական զգացողությանը, որոնք ստեղծում են շենքերի խմբեր և որոնք ամեն մի խմբին տալիս են իրենց յուրահատուկ առանձնահատկությունը:	4. Historic areas and their surroundings should be actively protected against damage of all kinds, particularly that resulting from unsuitable use, unnecessary additions and misguided or insensitive changes such as will impair their authenticity, and from damage due to any form of pollution. Any restoration work undertaken should be based on scientific principles. Similarly, great attention should be paid to the harmony and aesthetic feeling produced by the linking or the contrasting of the various parts which make up the groups of buildings and which give to each group its particular character.
5. Արդի ուրբանիզացիայի պայմաններում, որ տանում է շենքերի մասշտաբի և խտության նշանակալի աճի, բացի պատմական տարածքների ուղղակի ոչնչացման վտանգից, գոյություն ունի իրական մի վտանգ, որն է՝ նոր զարգացած տարածքները կարող են վնաս հասցնել հարակից պատմական տարածքների	5. In the conditions of modern urbanization, which leads to a considerable increase in the scale and density of buildings, apart from the danger of direct destruction of historic areas, there is a real danger that newly developed areas can ruin the environment and character of adjoining historic areas. Architects and

միջավայրին ու առանձնահատկությանը: Ճարտարապետներն ու քաղաքաշինարարները պետք է ուշադրություն դարձնեն, որպեսզի դեպի հուշարձաններ և պատմական տարածքներ բացվող տեսարանները չաղավաղվեն և որ պատմական տարածքները ներդաշնակ կերպով ներգրավվեն ժամանակակից կյանքում:	town-planners should be careful to ensure that views from and to monuments and historic areas are not spoilt and that historic areas are integrated harmoniously into contemporary life.
6. Այն դեպքում, երբ առկա է վտանգ, որ շինարարական մեթոդների և ճարտարապետական ձևերի աճող համընդհանրությունը կարող է ստեղծել միանման միջավայր ամբողջ աշխարհում, պատմական տարածքների պահպանումը կարող է ունենալ նշանակալի ներդրում յուրաքանչյուր ազգի մշակութային և հասարակական արժեքների պահպանման և զարգացման մեջ: Սա կարող է նպաստել աշխարհի մշակութային ժառանգության ճարտարապետական հարստությանը:	6. At a time when there is a danger that a growing universality of building techniques and architectural forms may create a uniform environment throughout the world, the preservation of historic areas can make an outstanding contribution to maintaining and developing the cultural and social values of each nation. This can contribute to the architectural enrichment of the cultural heritage of the world.
III.ԱԶԳԱՅԻՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	III.NATIONAL, REGIONAL AND LOCAL POLICY
7. Յուրաքանչյուր անդամ պետությունում պետք է մշակի ազգային, տարածքային և տեղական ինքնակառավարման քաղաքականություն՝ համաձայն յուրաքանչյուր պետության պայմանների, որպեսզի իրավական, տեխնիկական, տնտեսական և հասարակական միջոցառումներ ձեռնարկվեն ազգային, կրոնական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատմական տարածքների և դրանց շրջակայքի պահպանության և դրանք ժամանակակից կյանքի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Ընդունված քաղաքականությունը պետք է ազդեցություն ունենա ծրագրման վրա ազգային, տարածքային կամ տեղական ինքնակառավարման մակարդակով և պետք է ապահովի բոլոր մակարդակներում ուղեցույցներ քաղաքաշինության, տարածքային և գյուղական զարգացման ծրագրման համար: Դրանից բխող	7. In each Member State a national, regional and local policy should be drawn up, in conformity with the conditions of each State as regards the allocation of powers, so that legal, technical, economic and social measures may be taken by the national, regional or local authorities with a view to safeguarding historic areas and their surroundings and adapting them to the requirements of modern life. The policy thus laid down should influence planning at national, regional or local level and provide guidelines for town-planning and regional and rural development planning at all levels, the activities stemming from it forming an essential component in the formulation of aims and programmes, the assignment of responsibilities and the conduct of operations. The co-operation of individuals and private associations should be sought in implementing

գործողությունները պետք է կազմեն նպատակների ու ծրագրերի, պարտականությունների սահմանման և գործողությունների իրականացման գործընթացի կարևոր բաղկացուցիչ մաս: Անհրաժեշտ է ամրապնդել անհատների և մասնավոր կազմակերպությունների համագործակցությունը պահպանության քաղաքականությունը կիրառելու համար:	the safeguarding policy.
IV. ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	IV. SAFEGUARDING MEASURES
8. Պատմական տարածքներն ու շրջակայքը պետք է պահպանվեն վերոնշյալ չափանիշերին և ներքոհիշյալ մեթոդներին համապատասխան, հատուկ միջոցառումները պետք է սահմանվեն յուրաքանչյուր պետության օրենսդրական և սահմանադրական իրավասության և կազմակերպչական ու տնտեսական կառույցի համաձայն:	8. Historic areas and their surroundings should be safeguarded in conformity with the principles stated above and with the methods set out below, the specific measures being determined according to the legislative and constitutional competence and the organizational and economic structure of each State.
Իրավական և վարչական միջոցառումներ	Legal and administrative measures
9. Պատմական տարածքների և դրանց շրջակայքի պահպանությանը նվիրված ամբողջական քաղաքականության կիրառումը պետք է հիմնված լինի յուրաքանչյուր երկրում գործող չափանիշերի վրա: Անդամ պետությունները պետք է ընդունեն գոյություն ունեցող դրույթները, կամ, անհրաժեշտության դեպքում, ընդունեն նոր օրենքներ և կանոնակարգեր պատմական տարածքների և դրանց շրջակայքի պահպանությունն ապահովելու համար՝ հաշվի առնելով սույն գլխում և հետագա գլուխներում ներառված դրույթները: Նրանք պետք է խրախուսեն կրոնական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կազմակերպված միջոցառումների ընդունումն ու իրականացումը պահպանությունը երաշխավորելու համար: Քաղաքային ու տարածքային ծրագրմանը և բնակարանային քաղաքականությանը վերաբերող օրենքները պետք է նույնպես վերանայվեն՝ ճարտարապետական	9. The application of an overall policy for safeguarding historic areas and their surroundings should be based on principles which are valid for the whole of each country. Member States should adapt the existing provisions, or, where necessary, enact new laws and regulations, so as to secure the protection of historic areas and their surroundings taking into account the provisions contained in this chapter and in the following chapters. They should encourage the adaptation or the adoption of regional or local measures to ensure such protection. Laws concerning town and regional planning and housing policy should also be reviewed so as to co-ordinate and bring them into line with the laws concerning the safeguarding of the architectural heritage.

ժառանգության պահպանության օրենքների հետ համաձայնեցնելու և համապատասխանեցնելու համար:	
10. Պատմական տարածքների պահպանության համար սահմանված համակարգի դրույթները պետք է սահմանեն գլխավոր չափանիշեր անհրաժեշտ ծրագրերի և փաստաթղթերի հաստատման վերաբերյալ, և մասնավորապես՝ ▪ հիմնական պայմաններ ու սահմանափակումներ, որոնք կիրառելի են պահպանվող տարածքների և դրանց շրջակայքի համար, ▪ հայտարարություն՝ ուղղված ծրագրերին ու գործողություններին, որոնք կծրագրվեն հանրային ծառայությունների պահպանման և ապահովման նպատակով, ▪ իրականացվելիք սպասարկում և այդ աշխատանքի համար պատասխանատու անձանց նշանակում, ▪ ոլորտներ, որտեղ քաղաքաշինության, վերակառուցման ու գյուղական հողային ֆոնդի կառավարումը կիրառելի են, ▪ պատասխանատու մարմնի նշանակում, որը լիազորված կլինի թույլատրել պահպանության սահմաններում որևէ վերականգնողական, ձևափոխման, նոր կառուցապատման կամ քանդման աշխատանքների իրականացումը, ▪ միջոցներ, որոնց շնորհիվ պահպանության ծրագրերը կֆինանսավորվեն և կիրականացվեն:	10. The provisions establishing a system for safeguarding historic areas should set out the general principles relating to the establishment of the necessary plans and documents and, in particular: ▪ the general conditions and restrictions applicable to the protected areas and their surroundings; ▪ a statement as to the programmes and operations to be planned for the purpose of conservation and provision of public services; ▪ maintenance to be carried out and the designation of those to be responsible for it; ▪ the fields to which town-planning, redevelopment and rural land management are applicable: ▪ the designation of the body responsible for authorising any restoration, modification, new construction or demolition within the protected perimeter; ▪ the means by which the safeguarding programmes are to be financed and carried out.
11. Պահպանությանը նվիրված ծրագրերն ու փաստաթղթերը պետք է սահմանեն՝ ▪ այն տարածքներն ու առարկաները, որոնք պետք է պահպանվեն,	11. Safeguarding plans and documents should define: ▪ the areas and items to be protected;

▪ հատուկ պայմաններն ու սահմանափակումները, որոնք պետք է կիրառվեն դրանց համար, ▪ նորմատիվները, որոնց պետք է հետևել սպասարկման, վերականգնման և զարգացման աշխատանքների ժամանակ, ▪ ընդհանուր պայմանները, որոնք վերահսկում են քաղաքային և գյուղական տարածքներում մատակարարման համակարգերի ստեղծումը, ▪ պայմանները, որոնք վերահսկում են նոր կառուցապատման աշխատանքները:	▪ the specific conditions and restrictions applicable to them; ▪ the standards to be observed in the work of maintenance, restoration and improvements; ▪ the general conditions governing the establishment of the supply systems and services needed in urban or rural life; ▪ the conditions governing new constructions.
12. Սույն օրենքները պետք է նաև ներառեն դրույթներ՝ նախատեսված կանխելու պահպանության օրենքների որևէ խախտում, ինչպես նաև պահպանության տակ գտնվող տարածքների սեփականության արժեքների որևէ շահադիտական աճ, որը կարող է փոխգիշել պահպանությանն ու վերականգնմանը՝ նախատեսված ողջ համայնքի շահերի համար: Այս դրույթները կարող են ներառել քաղաքաշինական միջոցառումներ, որոնք հնարավորություն են տալիս ազդելու կառուցապատման հողի գնի վրա, ինչպես օրինակ թաղամասի ստեղծում կամ ավելի փոքր զարգացման ծրագրում, որը հասարակական մարմինն տալիս է գնման արտոնության իրավունք, պարտադիր գնում սեփականատիրոջ կողմից որևէ գործողության ձախողման հետևանքով հասցրած վնասի վերականգնողական աշխատանքների իրականացման նպատակով, և նախատեսում է գործող տուգանքներ, ինչպիսիք են գործունեության դադարեցում, պարտադիր վերականգնում և/կամ համապատասխան տուգանք:	12. These laws should also in principle include provisions designed to prevent any infringement of the preservation laws, as well as any speculative rise in property values within the protected areas which could compromise protection and restoration planned in the interests of the community as a whole. These provisions could involve town-planning measures affording a means of influencing the price of building land, such as the establishment of neighbourhood or smaller development plans, granting the right of pre-emption to a public body, compulsory purchase in the interests of safeguarding or rehabilitation or automatic intervention in the case of failure to act on the part of the owners, and could provide for effective penalties such as the suspension of operations, compulsory restoration and/or a suitable fine.
13. Հանրային լիազոր մարմինները, ինչպես նաև անհատները պարտավորված են	13. Public authorities as well as individuals must be obliged to comply with the measures

իրականացնելու պահպանության համար նախատեսված միջոցառումները: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ապահովել բողոքարկման համակարգ անհիմն ու անարդար որոշումների դեմ:	for safeguarding. However, machinery for appeal against arbitrary or unjust decisions should be provided.
14. Հասարակական և մասնավոր մարմինների ստեղծման և հասարակական և մասնավոր աշխատանքային նախագծերի դրույթները պետք է համապատասխանեն պատմական տարածքների և դրանց շրջակայքի պահպանության կանոններին:	14. The provisions concerning the setting up of public and private bodies and concerning public and private work projects should be adapted to the regulations governing the safeguarding of historic areas and their surroundings.
15. Մասնավորապես, անմխիթար վիճակում գտնվող սեփականությունների, թաղամասերի և սուբսիդավորված բնակատեղիների կառուցապատմանը վերաբերող դրույթները պետք է ծրագրվեն կամ փոփոխվեն՝ համապատասխանելու համար պահպանության քաղաքականությանն ու նպաստեն դրանց: Վճարված դրամական հատկացումների ժամանակացույցը պետք է պատրաստվի և համապատասխանեցվի պատշաճորեն, մասնավորապես հեշտացնելու սուբսիդավորված բնակավայրերի զարգացումն ու հանրային օգտագործման վայրերի կառուցապատումը՝ վերականգնելով հին շինությունները: Քանդման բոլոր աշխատանքները ամեն դեպքում պետք է վերաբերեն այն շենքերին, որոնք իրենցից չեն ներկայացնում որևէ պատմական կամ ճարտարապետական արժեք, և ներկայացված ֆինանսավորումը պետք է ունենա հստակ վերահսկողություն: Այնուհետև, սուբսիդավորված բնակատեղիների կառուցապատման համար նախատեսված դրամական միջոցների մի մասը պետք է տրամադրվի հին շինությունների վերականգնմանը:	15. In particular, provisions concerning slum property and blocks and the construction of subsidized housing should be planned or amended both to fit in with the safeguarding policy and to contribute to it. The schedule of any subsidies paid should be drawn up and adjusted accordingly, in particular in order to facilitate the development of subsidized housing and public construction by rehabilitating old buildings. All demolition should in any case only concern buildings with no historic or architectural value and the subsidies involved should be carefully controlled. Further, a proportion of the funds earmarked for the construction of subsidized housing should be allocated to the rehabilitation of old buildings.
16. Շինությունների և հողատարածքի պահպանության միջոցառումների իրավական հետևանքները պետք է հասանելի լինեն հանրությանը և պետք է գրանցվեն համապատասխան լիազոր մարմնի կողմից:	16. The legal consequences of the protection measures as far as buildings and land are concerned should be made public and should be recorded by a competent official body.

17. Հաշվի առնելով յուրաքանչյուր երկրում գործող հատուկ պայմանները և տարբեր ազգային, տարածքային և տեղական մարմիններում պարտականությունների բաշխումը՝ պահպանության համակարգի շահագործման հիմքում պետք է ընկած լինեն հետևյալ չափանիշերը՝ (ա) անհրաժեշտ է ունենալ լիազոր մարմին, որը պատասխանատվություն է կրում ապահովելու մշտական համագործակցություն բոլոր շահագրգիռ կողմերի միջև, ինչպիսիք են ազգային, տարածքային և տեղական հանրային ծառայություններն ու անհատների խմբերը, (բ) պետք է կազմել պաշտպանությանը միտված ծրագրեր և փաստաթղթեր, երբ արդեն բոլոր անհրաժեշտ նախնական գիտական ուսումնասիրություններն իրականացված լինեն, կազմված բազմաբնույթ խմբերից, մասնավորապես՝ ▪ մասնագետներ պահպանության և վերականգնման աշխատանքներում, ներառյալ արվեստի պատմաբաններ, ▪ ճարտարապետներ և քաղաքաշինարարներ, ▪ սոցիոլոգներ և տնտեսագետներ, ▪ բնապահպաններ և լանդշաֆտային ճարտարապետներ, ▪ հանրային առողջապահության և սոցիալական ապահովության մասնագետներ, և, ընդհանրապես, պատմական տարածքների պահպանության և ընդլայնման ծրագրի մեջ ներառված մասնագետներ, (գ) լիազոր մարմինները պետք է խրախուսեն հանրության կարծիքների բարձրաձայնումն ու	17. Making due allowance for the conditions specific to each country and the allocation of responsibilities within the various national, regional and local authorities, the following principles should underlie the operation of the safeguarding machinery: (a) there should be an authority responsible for ensuring the permanent co-ordination of all those concerned, e. g. national, regional and local public services or groups of individuals; (b) safeguarding plans and documents should be drawn up, once all the necessary advance scientific studies have been carried out, by multidisciplinary teams composed, in particular, of: ▪ specialists in conservation and restoration, including art historians; ▪ architects and town-planners; ▪ sociologists and economists; ▪ ecologists and landscape architects; ▪ specialists in public health and social welfare; and, more generally, all specialists in disciplines involved in the protection and enhancement of historic areas; (c) the authorities should take the lead in sounding the opinions and organizing the
---	---

ներանց մասնակցությունը, (դ) պահպանության ծրագրերը և փաստաթղթերը պետք է հաստատվեն օրենքով լիազորված մարմնի կողմից, (ե) ազգային, տարածքային և տեղական մակարդակներում պահպանության դրույթներն ու կանոնները իրականացնող հանրային պատասխանատու մարմինները պետք է ունենան անհրաժեշտ անձնակազմ և համապատասխան տեխնիկական, վարչական և ֆինանսական միջոցներ:	participation of the public concerned; (d) the safeguarding plans and documents should be approved by the body designated by law; (e) the public authorities responsible for giving effect to the safeguarding provisions and regulations at all levels, national, regional and local, should be provided with the necessary staff and given adequate technical, administrative and financial resources.
Տեխնիկական, տնտեսական և սոցիալական միջոցառումներ	Technical, economic and social measures
18. Պահպանության ենթակա պատմական տարածքների և դրանց շրջակայքի ցուցակը պետք է կազմվի ազգային, տարածքային կամ տեղական մակարդակով: Այն պետք է սահմանի առաջնահերթ աշխատանքներ, որպեսզի պահպանության համար առկա սահմանափակ միջոցները բաշխվեն ողջամտորեն: Շտապ ձեռնարկվելիք պահպանության որևէ միջոցառում պետք է իրականացվի առանց պահպանության պլանների և փաստաթղթերի պատրաստմանը սպասելուն:	18. A list of historic areas and their surroundings to be protected should be drawn up at national, regional or local level. It should indicate priorities so that the limited resources available for protection may be allocated judiciously. Any protection measures, of whatever nature, that need to be taken as a matter of urgency should be taken without waiting for the safeguarding plans and documents to be prepared.
19. Պետք է իրականացնել տարածքի ամբողջական ուսումնասիրություն՝ ներառյալ տարածական վերլուծություն: Այն պետք է պարունակի հնագիտական, պատմական, ճարտարապետական, տեխնիկական և տնտեսական տվյալներ: Պետք է կազմել վերլուծական փաստաթուղթ՝ սահմանելով այն շինությունները կամ շենքերի խմբերը, որոնք պետք է պահպանվեն մեծ ուշադրությամբ և որոշակի պայմաններում, կամ, բացարձակ բացառիկ և ամբողջապես փաստագրված պայմաններում՝ քանդվեն: Սա իրավունք կտա լիազոր մարմիններին ստիպելու դադարեցնել սույն առաջարկությանը չհամապատասխանող որևէ	19. A survey of the area as a whole, including an analysis of its spatial evolution, should be made. It should cover archaeological, historical, architectural, technical and economic data. An analytical document should be drawn up so as to determine which buildings or groups of buildings are to be protected with great care, conserved under certain conditions, or, in quite exceptional and thoroughly documented circumstances, destroyed. This would enable the authorities to call a halt to any work incompatible with this recommendation. Additionally, an inventory of public and private open spaces and their

աշխատանք: Ինչպես նաև, անհրաժեշտ է ամրագրել հանրային և մասնավոր բաց տարածություններն ու դրանց բուսականության մասին տվյալներ՝ ելնելով նշված նպատակներից:	vegetation should be drawn up for the same purposes.
20. Ի հավելումն սույն ճարտարապետական ուսումնասիրության, անհրաժեշտ է իրականացնել սոցիալական, տնտեսական, մշակութային և տեխնիկական տվյալների և լայն քաղաքային կամ տարածքային համատեքստի ուսումնասիրություններ: Ուսումնասիրությունները պետք է ներառեն, հնարավորության դեպքում, ժողովրդագրական վիճակագրության մասին տվյալներ և տնտեսական, սոցիալական և մշակութային գործունեությունների վերլուծություն, կենսակերպի և սոցիալական հարաբերությունների մասին տեղեկություն, հողօգտագործման խնդիրների, քաղաքային ենթակառուցվածքի, ճանապարհային համակարգի իրավիճակի մասին տեղեկություն, հաղորդակցման ցանցերի և պահպանված տարածքների ու դրանց շրջապատող գոտիների միջև փոխադարձ կապի մասին տվյալներ: Շահագրգիռ մարմինները պետք է մեծ նշանակություն տան այս ուսումնասիրություններին և պետք է գիտակցեն, որ պահպանությանը նվիրված վավերական ծրագրերը չեն կարող պատրաստվել առանց վերոնշյալ տվյալների:	20. In addition to this architectural survey, thorough surveys of social, economic, cultural and technical data and structures and of the wider urban or regional context are necessary. Studies should include, if possible, demographic data and an analysis of economic, social and cultural activities, ways of life and social relationships, land-tenure problems, the urban infrastructure, the state of the road system, communication networks and the reciprocal links between protected areas and surrounding zones. The authorities concerned should attach the greatest importance to these studies and should bear in mind that valid safeguarding plans cannot be prepared without them.
21. Վերը նկարագրված ուսումնասիրությունն ավարտելուց հետո և նախքան պահպանությանը նվիրված ծրագրերի և առանձնահատկությունների կազմելը, անհրաժեշտ է ունենալ ծրագրման գործընթաց, որտեղ հաշվի են առնված քաղաքաշինական, ճարտարապետական, տնտեսական և սոցիալական և քաղաքային ու գյուղական կառուցվածքի մասին վերլուծությունները՝ համեմատելու գործառույթները, որոնք համապատասխանում են իր որոշակի կերպարին: Ծրագրման գործընթացի նպատակն	21. After the survey described above has been completed and before the safeguarding plans and specifications are drawn up, there should in principle be a programming operation in which due account is taken both of town-planning, architectural, economic and social considerations and of the ability of the urban and rural fabric to assimilate functions that are compatible with its specific character. The programming operation should aim at bringing the density of settlement to the desired level and should provide for the work to be carried

է հասցնել շինությունները ցանկալի մակարդակի և ապահովել աշխատանքներ բոլոր փուլերում, ինչպես նաև տրամադրել ժամանակավոր անհրաժեշտ կացարան աշխատանքների ընթացքում և մշտական բնակավայր այն բնակիչների համար, ովքեր չեն կարող վերադառնալ իրենց նախկին կացարանները: Սույն ծրագրման գործընթացը պետք է իրականացվի համայնքների և շահագրգիռ անձանց խմբերի հնարավորինս անմիջական մասնակցությամբ: Քանի որ պատմական տարածքների և դրանց շրջակայքի սոցիալական, տնտեսական և ֆիզիկական միջավայրը կարող է փոփոխության ենթարկվել ժամանակի ընթացքում, ուսումնասիրությունն ու վերլուծությունը պետք է լինեն շարունակական գործընթաց: Համապատասխանաբար կարևոր է, որ պահպանության ծրագրերի պատրաստումն ու դրանց իրականացումը հիմնված լինեն հասանելի արդեն կատարված ուսումնասիրությունների հիման վրա, քան հետաձգվեն մինչև ծրագրման գործընթացի վերջնական իրականացումը:	out in stages as well as for the temporary accommodation needed while it is proceeding, and premises for the permanent rehousing of those inhabitants who cannot return to their previous dwellings. This programming operation should be undertaken with the closest possible participation of the communities and groups of people concerned. Because the social, economic and physical context of historic areas and their surroundings may be expected to change over time, survey and analysis should be a continuing process. It is accordingly essential that the preparation of safeguarding plans and their execution be undertaken on the basis of studies available, rather than being postponed while the planning process is refined.
22. Պահպանությանը նվիրված ծրագրերի ու առանձնահատկությունների պատրաստումից և համապատասխան լիազոր մարմնի կողմից հաստատվելուց հետո ցանկալի է, որ դրանք իրականացվեն կամ հեղինակների կողմից, կամ էլ նրանց հսկողության ներքո:	22. Once the safeguarding plans and specifications have been drawn up and approved by the competent public authority, it would be desirable for them to be executed either by their authors or under their authority.
23. Այն պատմական տարածքներում, որտեղ ներառված են առանձնահատկություններ տարբեր ժամանակաշրջաններից, պահպանությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով բոլոր այդ ժամանակների արտացոլանքները:	23. In historic areas containing features from several different periods, preservation should be carried out taking into account the manifestations of all such periods.
24. Այն դեպքում երբ առկա են պաշտպանության ծրագրեր քաղաքային զարգացման կամ անմխիթար վիճակում գտնվող տարածքների մաքրման համար, որոնք ներառում են շենքերի քանդում, որոնք չեն ներկայացնում որևէ ճարտարապետական կամ	24. Where safeguarding plans exist urban development or slum clearance programmes consisting of the demolition of buildings of no architectural or historic interest and which are structurally too unsound to be kept, the removal of extensions and additional storeys of

պատմական հետաքրքրություն, կառուցվածքային տեսակետից պահպանելու ենթակա չեն, ընդլայնումների և արժեք չունեցող հավելված հարկերի հեռացնելու, և երբեմն նույնիսկ ուշ կառուցված շենքերի, որոնք մասնատում են տարածքի ամբողջականությունը, քանդումը կարող են միայն թույլատրվել համաձայն նախագծի:	no value, and sometimes even the demolition of recent buildings which break the unity of the area, may only be authorized in conformity with the plan.
25. Պահպանության ծրագրում չներառված քաղաքային զարգացման կամ անմխիթար վիճակում գտնվող տարածքների մաքրման ծրագրերը պետք է պահպանեն ճարտարապետական շինություններն ու այլ տարրերը կամ պատմական արժեքը, ինչպես նաև հարակից շինությունները: Եթե այս տարրերը բացասական ազդեցություն կրեն ծրագրի պատճառով, պահպանության ծրագրերը, ինչպես նկարագրված է վերևում, պետք է կազմվեն նախքան քանդումը:	25. Urban development or slum clearance programmes for areas not covered by safeguarding plans should respect buildings and other elements of architectural or historic value as well as accompanying buildings. If such elements are likely to be adversely affected by the programme, safeguarding plans as indicated above should be drawn up in advance of demolition.
26. Մշտական վերահսկում է անհրաժեշտ երաշխավորելու համար, որ այս գործողությունները չեն նպաստում գերշահույթների, և ոչ էլ այլ նպատակների, որոնք դեմ են ծրագրի դրույթներին:	26. Constant supervision is necessary to ensure that these operations are not conducive to excessive profits nor serve other purposes contrary to the objectives of the plan.
27. Քաղաքային զարգացման կամ անմխիթար վիճակում գտնվող տարածքների մաքրման յուրաքանչյուր ծրագրի ընթացքում անհրաժեշտ է հետևել իրդեհային և բնական աղետների դեմ կիրառվող հիմնական անվտանգության չափանիշերին, որոնք կարող են ազդել պատմական տարածքի վրա՝ ուշադրություն դարձնելով մշակութային ժառանգության պահպանության համար կիրառվող չափանիշերին: Եթե որևէ հակասություն լինի, անհրաժեշտ է կայացնել հատուկ որոշումներ բոլոր շահագրգիռ կողմերի համագործակցությամբ ապահովելու առավելագույն անվտանգություն մշակութային ժառանգությանը առանց վնաս հասցնելու:	27. The usual security standards applicable to fire and natural catastrophes should be observed in any urban development or slum clearance programme affecting a historic area, provided that this be compatible with the criteria applicable to the preservation of the cultural heritage. If conflict does occur, special solutions should be sought, with the collaboration of all the services concerned, so as to provide the maximum security, while not impairing the cultural heritage.
28. Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն	28. Particular care should be devoted to

դարձնել նոր շինություններին վերաբերող կանոններին և վերահսկմանը, որպեսզի դրանց ճարտարապետությունը ներդաշնակորեն համապատասխանեցվի պատմական շինությունների տարածական կազմակերպմանը և շենքերի խմբերի տեղաբաշխմանը: Այս նպատակով որևէ նոր շինության կառուցապատմանը պետք է հաջորդի քաղաքային համատեքստի վերլուծություն ոչ միայն շինությունների խմբի ընդհանուր բնութագրումը սահմանելու համար, այլ նաև վերլուծելու դրանց գերակշռող առանձնահատկությունները, օրինակ՝ բարձրությունների, գույների, նյութերի և ձևերի ներդաշնակությունը, ճակատային մասերի և տանիքների կառուցման մոդուլները, շինությունների ծավալի և տարածական ծավալի միջև ընկած հարաբերությունը, ինչպես նաև դրանց միջին համաչափությունն ու դիրքը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել հողատարածքների չափին, քանի որ վտանգ կա, որ հողատարածքի որևէ վերակազմավորում կարող է առաջացնել փոփոխություն, որը կարող է վտանգավոր լինել ամբողջ տարածքի ներդաշնակության համար:	regulations for and control over new buildings so as to ensure that their architecture adapts harmoniously to the spatial organization and setting of the groups of historic buildings. To this end, an analysis of the urban context should precede any new construction not only so as to define the general character of the group of buildings but also to analyse its dominant features, e.g. the harmony of heights, colours, materials and forms, constants in the way the façades and roofs are built, the relationship between the volume of buildings and the spatial volume, as well as their average proportions and their position. Particular attention should be given to the size of the lots since there is a danger that any reorganization of the lots may cause a change of mass which could be deleterious to the harmony of the whole.
29. Հուշարձանի մեկուսացումը կամ դրա հեռացումը շրջակայքի քանդման աշխատանքների պատճառով հիմնականում չի թույլատրվում, բացառությամբ հատուկ անխուսափելի պատճառներից ելնելով:	29. The isolation of a monument through the demolition of its surroundings should not generally be authorized, neither should a monument be moved unless in exceptional circumstances and for unavoidable reasons.
30. Պատմական տարածքները և դրանց շրջակայքը պետք է պաշտպանվեն սյուների, հենարանների և էլեկտրաէներգիայի կամ հեռախոսի մալուխների, ինչպես նաև հեռուստատեսային ալեհավաքների և մեծամասշտաբ գովազդային պաստառների տեղադրման արդյունքում առաջացած աղավաղումներից: Այն վայրերում, որտեղ սրանք արդեն գոյություն ունեն, համապատասխան միջոցառումներ պետք է ձեռնարկվեն դրանց հեռացման նպատակով: Սուսնծով ամրացվող պաստառների, նեոնային	30. Historic areas and their surroundings should be protected from the disfigurement caused by the erection of poles, pylons and electricity or telephone cables and the placing of television aerials and large-scale advertising signs. Where these already exist appropriate measures should be taken for their removal. Bill-posting, neon signs and other kinds of advertisement, commercial signs, street pavements and furniture, should be planned with the greatest care and controlled so that they fit harmoniously into the whole. Special

ցուցանակների և այլ տեսակի գովազդային, կոմերցիոն պաստառների, փողոցների ասֆալտապատման և կահույքի հետ կապված աշխատանքները պետք է ծրագրվեն մեծագույն զգուշությամբ և վերահսկվեն այնպես, որ դրանք համապատասխանեն ներդաշնակորեն ամբողջ տարածքի հետ: Անհրաժեշտ է գործադրել հատուկ ջանքեր բոլոր տեսակի բարբարոսությունները կանխելու նպատակով:	efforts should be made to prevent all forms of vandalism,
31. Անդամ պետություններն ու շահագրգիռ խմբերը պետք է պահպանեն պատմական տարածքներն ու դրանց շրջակայքը որոշակի տեխնոլոգիական զարգացումների արդյունքում առաջացող շրջակա միջավայրին հասցվող վնասից, մասնավորապես աղտոտումից՝ արգելելով վնասակար արդյունաբերություն այս տարածքների հարևանությամբ և ձեռնարկելով կանխարգելիչ միջոցներ հակազդելու մեխանիզմների և ավտոմեքենաների պատճառով առաջացող աղմուկի, ցնցումների և տատանումների քայքայիչ ազդեցություններին: Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ տուրիզմի պատճառով գերշահագործման արդյունքում առաջացող վնասակար հետևանքներին հակազդելու համար:	31. Member States and groups concerned should protect historic areas and their surroundings against the increasingly serious environmental damage caused by certain technological developments - in particular the various forms of pollution - by banning harmful industries in the proximity of these areas and by taking preventive measures to counter the destructive effects of noise, shocks and vibrations caused by machines and vehicles. Provision should further be made for measures to counter the harm resulting from over-exploitation by tourism.
32. Անդամ պետությունները պետք է սատարեն և աջակցեն տեղական ինքնակառավարման մարմիններին լուծումներ գտնելու մի կողմից ճանապարհային երթևեկության և մյուս կողմից շինությունների մասշտաբի և դրանց ճարտարապետական որակների միջև առկա անհամաձայնության համար, որը գոյություն ունի շատ պատմական վայրերում: Խնդրին լուծում տալու և հետիոտն շարժմանը նպաստելու համար պետք է ուշադրություն դարձնել արտաքին և նույնիսկ կենտրոնական ավտոկայանատեղերի տեղակայման, մուտքերին և սահմանված ճանապարհային համակարգերին, որոնք կհեշտացնեն հետիոտն շարժումը՝ նպաստելով ծառայությունների ու հասարակական փոխադրամիջոցների հասանելիությանը: Բազմաթիվ	32. Member States should encourage and assist local authorities to seek solutions to the conflict existing in most historic groupings between motor traffic on the one hand and the scale of the buildings and their architectural qualities on the other. To solve the conflict and to encourage pedestrian traffic, careful attention should be paid to the placing of, and access to, peripheral and even central car parks and routing systems established which will facilitate pedestrian traffic, service access and public transport alike. Many rehabilitation operations such as putting electricity and other cables underground, too expensive if carried out singly, could then be co-ordinated easily and economically with the development of the road system.

վերականգնողական աշխատանքներ, ինչպիսիք են էլեկտրաէներգիայի և այլ մալուխների ստորգետնյա անցկացումը, որոնք կապված են մեծ գումարների հետ, եթե դրանք իրականացվում են առանձին, կարող են կազմակերպվել հեշտորեն և տնտեսապես ձեռնտու՝ ճանապարհային համակարգի կառուցապատման հետ միասին:	
33. Պահպանությունն ու վերականգնումը պետք է ուղեկցվեն վերակենսունակացման գործողություններով: Կարևոր է պահպանել գործող բնորոշ գործառույթները, մասնավորապես արհեստները, ստեղծել նորերը, որոնց երկար կենսունակության դեպքում կարող են համապատասխանել քաղաքի, տարածաշրջանի կամ երկրի տնտեսական և սոցիալական միջավայրին, որտեղ դրանք ներկայացված են: Պահպանությանը նվիրված գործողությունների արժեքը պետք է գնահատել ոչ միայն շինությունների մշակութային արժեքների համաձայն, այլ նաև օգտագործման միջոցով ձեռքբերված արժեքի հարաբերակցությամբ: Պահպանության սոցիալական խնդիրները չեն կարող լինել ճշգրիտ, մինչև որ չկազմվեն ուղեցույց այս երկու արժեքային սանդղակների համար: Այս գործողությունները պետք է համապատասխանեն բնակիչների սոցիալական, մշակութային և տնտեսական կարիքներին՝ առանց վնասելու տվյալ տարածքի առանձնահատկությունը: Մշակութային վերակենսունակացման քաղաքականությունը պետք է ստեղծի մշակութային ակտիվություն պատմական տարածքների կենտրոններում և կարևորի դեր դրանց շրջակա համայնքների մշակութային զարգացման համար:	33. Protection and restoration should be accompanied by revitalization activities. It would thus be essential to maintain appropriate existing functions, in particular trades and crafts, and establish new ones, which, if they are to be viable, in the long term, should be compatible with the economic and social context of the town, region or country where they are introduced. The cost of safeguarding operations should be evaluated not only in terms of the cultural value of the buildings but also in relation to the value they acquire through the use made of them. The social problems of safeguarding cannot be seen correctly unless reference is made to both these value scales. These functions should answer the social, cultural and economic needs of the inhabitants without harming the specific nature of the area concerned. A cultural revitalization policy should make historic areas centres of cultural activities and give them a central role to play in the cultural development of the communities around them.
34. Գյուղական տարածքներում բոլոր աշխատանքները, որոնք կարող են առաջացնել խոչընդոտներ, ինչպես նաև տնտեսական և սոցիալական բոլոր փոփոխությունները պետք է զգուշորեն վերահսկվեն՝ պատմական գյուղական համայնքների ամբողջականությունը	34. In rural areas all works which cause disturbances and all changes of economic and social structure should be carefully controlled so as to preserve the integrity of historic rural communities within their natural setting.

պահպանելու համար:	
35. Պահպանության գործողությունները պետք է միավորեն հանրային լիազոր մարմինների ներդրումները անհատական կամ հավաքական սեփականատերերի և բնակիչների ու սպառողների կողմից կատարված ներդրումների հետ, առանձին կամ միասին, ովքեր պետք է խրախուսվեն առաջարկներ ներկայացնելու և ընդհանրապես ակտիվ դեր խաղալու: Համայնքի ու անհատի միջև պետք է հաստատվի մշտական համագործակցություն բոլոր մակարդակներում, մասնավորապես այնպիսի մեթոդներով, ինչպիսիք են՝ տեղեկատվություն ուղղված բոլոր շահագրգիռ անձանց, ուսումնասիրություններ ուղղված հարցմանը մասնակցած անձանց, ծրագրման խմբերին կից խորհրդատու խմբերի հաստատման, սեփականատերերի, բնակիչների ու սպառողների ներկայացում այն մարմիններում, որոնք պատասխանատու են պահպանության ծրագրերի հետ կապված գործողությունների կազմակերպման, որոշումներ կայացնելու և ղեկավարելու հարցում, կամ հանրային կազմակերպությունների ստեղծում ծրագրի իրականացման մեջ դեր խաղալու նպատակով:	35. Safeguarding activities should couple the public authorities' contribution with the contribution made by the individual or collective owners and the inhabitants and users, separately or together, who should be encouraged to put forward suggestions and generally play an active part. Constant co-operation between the community and the individual should thus be established at all levels particularly through methods such as: information adapted to the types of persons concerned; surveys adapted to the persons questioned; establishment of advisory groups attached to planning teams; representation of owners, inhabitants and users in an advisory function on bodies responsible for decision-making, management and the organization of operations connected with plans for safeguarding, or the creation of public corporations to play a part in the plan's implementation.
36. Պետք է խրախուսել պահպանության կամավոր խմբերի և շահույթ չհետապնդող կազմակերպությունների և պատվո կամ ֆինանսական պարգևների հիմնումը, որպեսզի պահպանության բոլոր ոլորտներում հատուկ խրախուսանքի արժանի աշխատանքը գնահատվի:	36. The formation of voluntary conservation groups and non-profit-making associations and the establishment of honorary or financial rewards should be encouraged so that specially meritorious work in all aspects of safeguarding may be recognized.
37. Պետք է ապահովել անհրաժեշտ հիմնադրամներ պատմական տարածքների և դրանց շրջակայքի պահպանության ծրագրերի համար նախատեսված հանրային ներդրումների մակարդակում՝ ներառելով համապատասխան հատկացումներ կենտրոնական, տարածքային և տեղական կառավարման մարմինների բյուջեներում: Բոլոր այս հիմնադրամները պետք	37. Availability of the necessary funds for the level of public investment provided for in the plans for the safeguarding of historic areas and their surroundings should be ensured by including adequate appropriations in the budgets of the central, regional and local authorities. All these funds should be centrally managed by public, private or semi-public

է կառավարվեն հասարակական, մասնավոր կամ կիսահանրային մարմինների կողմից, ում վստահվել է ֆինանսական օգնության կազմակերպումը ազգային, տարածքային կամ տեղական մակարդակներում և դրանց ուղղումը գործողության ամբողջական ծրագրի համաձայն:	bodies entrusted with the co-ordination of all forms of financial aid at national, regional or local level and with the channelling of them according to an overall plan of action.
38. Ներքևում նկարագրված հասարակական աջակցությունը պետք է հիմնվի այն չափանիշի վրա, որ համապատասխանության և անհրաժեշտության դեպքում, շահագրգիռ մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումները հաշվի առնվեն վերականգնման “հավելյալ ծախսը”, այսինքն սեփականատիրոջը պարտադրված հավելվածարժեքի շինության նոր շուկայական կամ վարձակալության արժեքի հետ համեմատած:	38. Public assistance in the forms described below should be based on the principle that, wherever this is appropriate and necessary, the measures taken by the authorities concerned should take into account the “extra cost” of restoration, i. e. the additional cost imposed on the owner as compared with the new market or rental value of the building.
39. Նման հասարակական հիմնադրամները հիմնականում պետք է նախևառաջ օգտագործվեն գոյություն ունեցող շենքերը, հատկապես ցածր վարձակալության համար նախատեսվածները, պահպանելու համար և չպետք է բաշխվեն նոր շինությունների կառուցապատման համար, մինչև որ վերջինս չդադարի վնաս հասցնել գոյություն ունեցող շենքերի օգտագործմանն ու գործառույթներին:	39. In general, such public funds should be used primarily to conserve existing buildings including especially buildings for low rental housing and should not be allocated to the construction of new buildings unless the latter do not prejudice the use and functions of existing buildings.
40. Պետք է հասանելի դարձնել դրամաշնորհների, նպաստների, հարմար տոկոսադրույքներով փոխառությունների կամ հարկային զիջումների տրամադրումը մասնավոր գույքի սեփականատերերին և սպառողներին, ովքեր իրականացնում են պահպանության ծրագրերի աշխատանքները նույն ծրագրերում ներառված չափանիշերի համաձայն: Սույն հարկային զիջումները, դրամաշնորհները և փոխառությունները նախևառաջ կարող են տրվել բնակելի և կոմերցիոն գույքի սեփականատերերին կամ սպառողներին, քանի որ համատեղ գործողությունները տնտեսապես ավելի մատչելի են, քան անհատականը: Մասնավոր գույքի	40. Grants, subsidies, loans at favourable rates, or tax concessions should be made available to private owners and to users carrying out work provided for by the safeguarding plans and in conformity with the standards laid down in those plans. These tax concessions, grants and loans could be made first and foremost to groups of owners or users of living accommodation and commercial property, since joint operations are more economical than individual action. The financial concessions granted to private owners and users should, where appropriate, be dependent on covenants requiring the observance of certain conditions laid down in

սեփականատերերին և սպառողներին տրված ֆինանսական զիջումները, հնարավորության դեպքում, պետք է կախված լինեն համաձայնություններից՝ պահանջելով հանրային շահերում ներառված որոշակի պայմանների ապահովումը և երաշխավորելով շենքերի ամբողջականությունը, ինչպիսիք են շենքեր այցելելու և դեպի այգիներ, պարտեզներ կամ տեսարժան վայրեր մուտք գործելու, լուսանկարելու թույլտվությունը և այլն:	the public interest, and ensuring the integrity of the buildings such as allowing the buildings to be visited and allowing access to parks, gardens or sites, the taking of photographs, etc.
41. Հանրային ու մասնավոր մարմինների բյուջեներում պետք է հատկացնել հատուկ ֆոնդեր՝ մեծածավալ հանրային աշխատանքների և աղտոտման արդյունքում վտանգված պատմական շինությունների պահպանության համար: Հանրային լիազոր մարմինները պետք է հատկացնեն հատուկ ֆոնդեր բնական աղետների պատճառած վնասի վերանորոգման համար:	41. Special funds should be set aside in the budgets of public and private bodies for the protection of groups of historic buildings endangered by large-scale public works and pollution. Public authorities should also set aside special funds for the repair of damage caused by natural disasters.
42. Ի հավելումն, հասարակական աշխատանքում ակտիվ գործունեություն ծավալող բոլոր ազգային բաժիններն ու ծառայությունները պետք է կազմեն իրենց ծրագրերը և բյուջեները, որպեսզի ներդնեն պատմական շենքերի վերականգնողական աշխատանքներում՝ ֆինանսավորելով աշխատանքները, որոնք համապատասխանում են իրենց նպատակներին և պահպանության ծրագրի նպատակներին:	42. In addition, all government departments and agencies active in the field of public works should arrange their programmes and budgets so as to contribute to the rehabilitation of groups of historic buildings by financing work which is both in conformity with their own aims and the aims of the safeguarding plan.
43. Հասանելի ֆինանսական ռեսուրսները ավելացնելու համար անդամ պետությունները պետք է խրախուսեն հանրային և/կամ մասնավոր ֆինանսավորման գործակալությունների կազմավորումը պատմական տարածքների և դրանց շրջակայքի պահպանության համար: Այս գործակալությունները պետք է ունենան կորպորատիվ կարգավիճակ և լիազորված լինեն ստանալու նվիրատվություններ անհատներից, հիմնադրամներից և արդյունաբերական ու կոմերցիոն շահագրգիռ կողմերից: Հատուկ	43. To increase the financial resources available to them, Member States should encourage the setting up of public and/or private financing agencies for the safeguarding of historic areas and their surroundings. These agencies should have corporate status and be empowered to receive gifts from individuals, foundations and industrial and commercial concerns. Special tax concessions may be granted to donors.

հարկային զիջումներ պետք է տրամադրվեն նվիրատուներին:	
44. Պատմական տարածքների և դրանց շրջակայքի պահպանության համար իրականացված աշխատանքի ֆինանսավորումը՝ ստեղծելով փոխառությունների ընկերություն, կարող է հեշտացվել հանրային ինստիտուտների և մասնավոր վարկային կազմակերպությունների կողմից, որոնք պատասխանատու են տրամադրել փոխառություններ սեփականատերերին նվազեցված տոկոսադրույքով երկարաժամկետ ծրագրված վերավճարումով:	44. The financing of work of any description carried out for the safeguarding of historic areas and their surroundings by setting up a loans corporation, could be facilitated by public institutions and private credit establishments, which would be responsible for making loans to owners at reduced rates of interest with repayment spread out over a long period.
45. Անդամ պետությունները և կառավարության շահագրգիռ այլ կողմերը կարող են հեշտացնել շահույթ չհետապնդող կազմակերպությունների կազմավորումը, որոնք պատասխանատու են գնելու, վերականգնումից հետո հնարավոր վայրերում վաճառելու շենքեր՝ օգտագործելով շրջանառու ֆոնդեր, որոնք սահմանված են պատմական շենքերի սեփականատերերին հատուկ իրավունք տալու այն նպատակով, որ պաշտպանեն դրանք և պահպանեն դրանց առանձնահատկությունը՝ շարունակելով բնակվել այնտեղ:	45. Member States and other levels of government concerned could facilitate the creation of non-profit-making associations responsible for buying and, where appropriate after restoration, selling buildings by using revolving funds established for the special purpose of enabling owners of historic buildings who wish to safeguard them and preserve their character to continue to reside there.
46. Չափազանց կարևոր է, որ պահպանության միջոցառումները հասարակական կառուցապատման մեջ չտանեն սոցիալական հյուսվածքի մասնատման: Վերականգնողական աշխատանքների պատճառով անապահով բնակիչների՝ շենքից կամ շինություններից տեղափոխվելու դժվարություններից խուսափելու համար վարձակալության բարձր փոխհատուցումը կարող է թույլատրել նրանց պահպանելու իրենց տները, կոմերցիոն շինություններն ու արտադրամասերը և դրանց ավանդական զարդանախշերն ու գործերը, հատկապես գյուղական արհեստները, փոքր մասշտաբի գյուղատնտեսությունը, ձկնորսությունը և այլն: Այս փոխհատուցումը, որը կապված կլինի եկամտի հետ, կօգնի	46. It is most important that safeguarding measures should not lead to a break in the social fabric. To avoid hardship to the poorest inhabitants consequent on their having to move from buildings or groups of buildings due for renovation, compensation for rises in rent could enable them to keep their homes, commercial premises and workshops and their traditional living patterns and occupations, especially rural crafts, small-scale agriculture, fishing, etc. This compensation, which would be income-related, would help those concerned to pay the increased rentals resulting from the work carried out.

շահագրգիռ անձանց վճարելու ավելացված վարձակալությունները կատարած աշխատանքի արդյունքում:	
Վ.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ՝ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	V.RESEARCH. EDUCATION AND INFORMATION
47. Պահանջվող հմուտ աշխատակիցների և արհեստավորների աշխատանքի որակի չափանիշը բարձրացնելու և ամբողջ ազգաբնակչությանը պահպանություն խրախուսելու և մասնակից դարձնելու համար անդամ պետությունների կողմից պետք է ձեռնարկվեն միջոցառումներ՝ իրավական և օրենսդրական իրավասության համաձայն:	47. In order to raise the standard of work of the skilled workers and craftsmen required and to encourage the whole population to realize the need for safeguarding and to take part in it, the following measures should be taken by Member States, in accordance with their legal and constitutional competence.
48. Անդամ պետություններն ու շահագրգիռ խմբերը պետք է խրախուսեն համակարգված ուսումնասիրությունը և հետազոտությունը հետևյալ հարցերի վերաբերյալ՝ ▪ պատմական տարածքների և դրանց շրջակայքի քաղաքաշինության տարրերը, ▪ բոլոր մակարդակներում պահպանության և ծրագրման միջև փոխադարձ կապեր, ▪ պատմական տարածքների համար կիրառվող պահպանության մեթոդներ, ▪ նյութերի փոփոխություն, ▪ արդի մեթոդների կիրառում պահպանության գործում, ▪ պահպանության համար անհրաժեշտ մասնագիտական մեթոդներ:	48. Member States and groups concerned should encourage the systematic study of, and research on: ▪ town-planning aspects of historic areas and their environment; ▪ the interconnexions between safeguarding and planning at all levels; ▪ methods of conservation applicable to historic areas; ▪ the alteration of materials; ▪ the application of modern techniques to conservation work; ▪ the crafts techniques indispensable for safeguarding.
49. Վերոնշյալ հարցերի շուրջ հատուկ կրթություն, ներառյալ գործնական վերապատրաստման դասընթացներ, պետք է կայանան և մշակվեն: Ի հավելումն, կարևոր է խրախուսել հմուտ բանվորների և մասնագետների վերապատրաստումը՝	49. Specific education concerning the above questions and including practical training periods should be introduced and developed. In addition, it is essential to encourage the training of skilled workers and craftsmen specializing in the safeguarding of historic

մասնագիտացնելով պատմական տարածքների, ներառյալ դրանց շրջապատող որևէ այլ տարածության պահպանության մեջ: Այնուհետև, անհրաժեշտ է խրախուսել այն արհեստներին, որոնք վտանգի են ենթարկված արդյունաբերության գործընթացների պատճառով: Ցանկալի է, որ շահագրգիռ կառույցները համագործակցեն այս հարցով մասնագիտացված միջազգային գործակալությունների հետ, ինչպիսիք են Հռոմում Մշակութային հարստության պահպանության և վերակազմման ուսումնասիրությունների կենտրոնը, Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդը (ICOMOS) և Թանգարանների միջազգային խորհուրդը (ICOM):	areas, including any open spaces surrounding them. Furthermore, it is necessary to encourage the crafts themselves, which are jeopardized by the processes of industrialization. It is desirable that the institutions concerned co-operate in this matter with specialized international agencies such as the Centre for the Study of the Preservation and Restoration of Cultural Property, in Rome, the International Council of Monuments and Sites (ICOMOS) and the International Council of Museums և
50. Պատմական տարածքների պահպանության ոլորտում տեղական գործունեության զարգացման համար նախատեսված վարչական անձնակազմի կրթությունը պետք է ֆինանսավորվի համապատասխան լիազոր մարմինների կողմից, անհրաժեշտության դեպքում, երկարաժամկետ ծրագրով:	50. The education of administrative staff for the needs of local development in the field of safeguarding of historic areas should be financed where applicable and needed and directed by the appropriate authorities according to a long-term programme.
51. Պահպանության մասին իրազեկումը պետք է խրախուսել դպրոցում, դպրոցից դուրս և համալսարանական կրթության ընթացքում՝ կիրառելով տեղեկատվական միջոցներ, ինչպիսիք են գրքեր, մամուլ, հեռուստատեսություն, ռադիո, կինոթատրոն և այլն: Պարզ, հասկանալի տեղեկություն պետք է ապահովել ոչ միայն գեղագիտական, այլ նաև սոցիալական և տնտեսական շահերից ելնելով՝ վերցված պատմական տարածքների և դրանց շրջակայքի պահպանության համար պատշաճ պատրաստված քաղաքականությունից: Նման տեղեկությունը պետք է լայնորեն տարածել մասնագիտացված մասնավոր ու ազգային մարմինների և ընդհանուր հասարակության միջև, որպեսզի նրանք տեղյակ լինեն, թե ինչու և ինչպես կարելի է բարելավել իրենց շրջակայքը:	51. Awareness of the need for safeguarding work should be encouraged by education in school, out of school and at university and by using information media such as books, the press, television, radio, cinema and travelling exhibitions. Clear, comprehensive information should be provided as to the advantages - not only aesthetic, but also social and economic - to be reaped from a well-conducted policy for the safeguarding of historic areas and their surroundings. Such information should be widely circulated among specialized private and government bodies and the general public so that they may know why and how their surroundings can be improved in this way.

52. Պատմական տարածքների ուսումնասիրությունը պետք է ընդգրկվի կրթության բոլոր մակարդակներում, հատկապես պատմության դասավանդման մեջ՝ այսպիսով երիտասարդների մտքերում արմատավորելով անցյալի աշխատանքների հանդեպ գիտելիք ու հարգանք, և ցույց տալով այս ժառանգության դերը ժամանակակից կյանքում: Այս տեսակի կրթության դասավանդման համար պետք է լայնորեն կիրառվեն աուդիո-վիզուալ միջոցներ և կազմակերպվեն այցելություններ դեպի պատմական շինություններ:	52. The study of historic areas should be included in education at all levels, especially in history teaching, so as to inculcate in young minds an understanding of and respect for the works of the past and to demonstrate the rôle of this heritage in modern life. Education of this kind should make wide use of audio-visual media and of visits to groups of historic buildings.
53. Ուսուցիչների և ուղեկցողների որակավորման դասընթացներն ու դասավանդողների վերապատրաստումը պետք է հեշտացվի՝ այսպիսով աջակցելով պատմական տարածքների մասին սովորել ցանկացող երիտասարդներին ու մեծահասակներին:	53. Refresher courses for teachers and guides and the training of instructors should be facilitated so as to aid groups of young people and adults wishing to learn about historic areas.
VI. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	VI. INTERNATIONAL CO-OPERATION
54. Անդամ պետությունները պետք է համագործակցեն պատմական տարածքների և դրանց շրջակայքի պահպանման հարցում՝ ցանկության դեպքում փնտրելով աջակցություն միջազգային, միջպետական և հասարակական կազմակերպություններում, մասնավորապես ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Թանգարանների միջազգային խորհուրդի, Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդի փաստաթղթային կենտրոնում: Այսպիսի բազմակողմանի կամ երկկողմանի համագործակցությունը պետք է կազմակերպվի զգուշորեն և պետք է իրականացնի միջոցառումները հետևյալ կերպ՝ (ա) ամբողջական տեղեկատվության և գիտական ու տեխնիկական հրապարակումների փոխանակում, (բ) հատուկ թեմաների վերաբերյալ	54. Member States should co-operate with regard to the safeguarding of historic areas and their surroundings, seeking aid, if it seems desirable, from international organizations, both intergovernmental and non-governmental, in particular that of the Unesco-ICOM-ICOMOS Documentation Centre. Such multilateral or bilateral co-operation should be carefully coordinated and should take the form of measures such as the following: (a) exchange of information in all forms and of scientific and technical publications; (b) organization of seminars and working

սեմինարների և աշխատանքային ուսումնասիրությունների կազմակերպում, (գ) ուսուցողական և ճամփորդական կրթաթոշակների տրամադրում, և գիտական, տեխնիկական և վարչական անձնակազմի ապահովում և սարքավորումների տրամադրում, (դ) ամեն տեսակի աղտոտվածության դեմ պայքարելու համատեղ գործունեություն, (ե) պատմական տարածքների մեծածավալ պահպանության, վերականգնողական ծրագրերի իրականացում և անհրաժեշտ փորձի հրապարակում: Սահմանամերձ տարածքներում, որտեղ պատմական տարածքների և դրանց շրջակայքի զարգացման և պահպանության առաջադրանքը բարձրացնում է անդամ պետությունների վրա ազդող խնդիրները սահմանի երկու կողմերում, պետք է կիրառել քաղաքականություններն ու գործողություններն այնպես, որ երաշխավորեն, որ մշակութային ժառանգությունն օգտագործվում և պահպանվում է հնարավորինս պատշաճ կերպով, (զ) փոխադարձ աջակցություն հարևան երկրների միջև տարածաշրջանի պատմական և մշակութային զարգացման ընդհանուր հետաքրքրության տարածքների պահպանության համար:	parties on particular subjects; (c) provision of study and travel fellowships, and the dispatch of scientific, technical and administrative staff, and equipment; (d) joint action to combat pollution of all kinds; (e) implementation of large- scale conservation, restoration and rehabilitation projects for historic areas and publication of the experience acquired, In frontier areas where the task of developing and safeguarding historic areas and their surroundings gives rise to problems jointly affecting Member States on either side of the frontier, they should co-ordinate their policies and activities to ensure that the cultural heritage is used and protected in the best possible way; (f) mutual assistance between neighbouring countries for the preservation of areas of common interest characteristic of the historic and cultural development of the region.
55. Սույն առաջարկության ոգուն և չափանիշերին համապատասխան անդամ պետությունը չպետք է ձեռնարկի որևէ գործողություն քանդելու կամ փոխելու այդ պետության տարածքում գտնվող պատմական արժեքները, քաղաքներն ու տեսարժան վայրերը:	55. In conformity with the spirit and the principles of this recommendation, a Member State should not take any action to demolish or change the character of the historic quarters, towns and sites, situated in territories occupied by that State.
*- Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների	

բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով՝ ուրբանլաբ Երևան ՀԿ-ի միջոցով:

Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակներին՝ ուրբանլաբ Երևան ՀԿ-ին և ծրագրում ներգրավված անձանց, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:

Հաշվետվությունում արտահայտված մտքերի ամբողջական կամ մասնակի օգտագործումը թույլատրվում է պատշաճ հղման դեպքում միայն: Այն պետք է ունենա հետևյալ բովանդակությունը.

“Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման, վերլուծության և առաջարկությունների մշակման ծրագրի հաշվետվություն, ուրբանլաբ Երևան, Երևան, 2012”:

<u>Հավելված 7</u> <u>Ոչ պաշտոնական թարգմանություն*</u>	
Գլխավոր խորհրդաժողովի արձանագրություններ 36-րդ նստաշրջան, Փարիզ, 25 հոկտեմբերի – 10 նոյեմբերի, 2011 թվական Գլուխ 1 Բանաձևեր Միավորված Ազգերի Կրթության, Գիտության և Մշակույթի Կազմակերպություն	Records of the General Conference 36th session Paris, 25 October – 10 November 2011 Volume 1 Resolutions United Nations Educational, Scientific and Cultural Organization
Առաջարկություն պատմական քաղաքային լանդշաֆտի վերաբերյալ՝ ներառյալ սահմանումների բառարան	Recommendation on the Historic Urban Landscape, including a glossary of definitions
Նախաբան	Preamble
Գլխավոր խորհրդաժողովը,	The General Conference,
Հաշվի առնելով, որ պատմական քաղաքային տարածքները մեր ընդհանուր մշակութային ժառանգության ամենահարուստ և բազմազանությամբ օժտված արտացոլումներն են, որոնք ստեղծվել են սերունդների կողմից և դարձել են մարդկության նախաձեռնությունների և ձգտումների կարևոր վկայություն ժամանակի և տարածության մեջ,	Considering that historic urban areas are among the most abundant and diverse manifestations of our common cultural heritage, shaped by generations and constituting a key testimony to humankind's endeavours and aspirations through space and time,
Նաև, հաշվի առնելով, որ քաղաքային ժառանգությունը մարդկության համար սոցիալական, մշակութային և տնտեսական հիմնական տարր է՝ սահմանված արժեքների պատմական շերտավորմամբ, որոնք ծագել են հաջողակ և գոյություն ունեցող մշակույթներից, ինչպես նաև սովորույթների ու փորձի կուտակումից՝ ճանաչված որպես	Also considering that urban heritage is for humanity a social, cultural and economic asset, defined by an historic layering of values that have been produced by successive and existing cultures and an accumulation of traditions and experiences, recognized as such in their diversity,

Recommendation on the Historic Urban Landscape, including a glossary of definitions

© ուրբանլաբ Երևան

այդպիսին այդ բազմազանության մեջ,	
Այնուհետև, հաշվի առնելով, որ ուրբանիզացիան առաջընթաց է ապրում մարդկության պատմության մեջ աննախադեպ ծավալներով, և որ ամբողջ աշխարհում այն տանում է սոցիալ-տնտեսական փոփոխության և աճի, որն իր ազդեցությունը կունենա տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում,	Further considering that urbanization is proceeding on an unprecedented scale in the history of humankind, and that throughout the world this is driving socio-economic change and growth, which should be harnessed at the local, national, regional and international levels,
Ընդունելով կենդանի քաղաքների շարժունության հատկանիշը,	Recognizing, the dynamic nature of living cities,
Նշելով, այնուամենայնիվ, որ սրընթաց և հաճախ չվերահսկվող զարգացումը փոփոխման է ենթարկում քաղաքային տարածքներն ու դրանց շրջակայքը, որը քաղաքային ժառանգությանը կարող է հասցնել մասնատման և վատթարացման վիճակի՝ ամբողջ աշխարհում համայնքային արժեքների վրա թողնելով խորը ազդեցություն,	Noting, however, that rapid and frequently uncontrolled development is transforming urban areas and their settings, which may cause fragmentation and deterioration to urban heritage with deep impacts on community values, throughout the world,
Հաշվի առնելով, հետևապես, որ բնական և մշակութային ժառանգությունը պահպանելու համար անհրաժեշտ է շեշտը դնել պատմական քաղաքային տարածքների պահպանման, տեղական զարգացման պրոցեսների և քաղաքային պլանավորման կառավարման և ռազմավարության ինտեգրման վրա, ինչպես օրինակ ժամանակակից ճարտարապետություն և ենթակառուցվածքների զարգացում, որի համար լանդշաֆտային մոտեցման կիրառումը կօգնե պահպանել քաղաքային առանձնահատկությունը,	Considering, therefore, that in order to support the protection of natural and cultural heritage, emphasis needs to be put on the integration of historic urban area conservation, management and planning strategies into local development processes and urban planning, such as, contemporary architecture and infrastructure development, for which the application of a landscape approach would help maintain urban identity,
Նաև, հաշվի առնելով, որ կայուն զարգացման սկզբունքը ապահովում է գոյություն ունեցող ռեսուրսների պահպանումը, քաղաքային ժառանգության ակտիվ պաշտպանությունը, և որ դրա կայուն կառավարումը զարգացման կարևորագույն պայման է,	Also considering that the principle of sustainable development provides for the preservation of existing resources, the active protection of urban heritage and its sustainable management is a condition sine qua non of development,

Հիշատակելով, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ստանդարտ փաստաթղթերի հավաքածուն՝ ներառյալ կոնվենցիաներ, առաջարկություններ և խարտիաներ², ներառված է պատմական տարածքների պահպանման հարցում, որոնք բոլորն էլ ուժի մեջ են,	Recalling that a corpus of UNESCO standard-setting documents, including conventions, recommendations and charters² exists on the subject of the conservation of historic areas, all of which remain valid,
² Մասնավորապես, համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանմանը վերաբերող 1972 թվականի կոնվենցիան, մշակութային արտադրանքների բազմազանության պահպանման և խթանման գործընթացի 2005 թվականի կոնվենցիան, լանդշաֆտների և տեսարժան վայրերի գեղեցկությունն ու առանձնահատկությունը պահպանելու մասին 1962 թվականի առաջարկությունը, հասարակական կամ մասնավոր աշխատանքների արդյունքում վտանգված մշակութային հարստության պահպանման վերաբերյալ 1968 թվականի առաջարկությունը, ազգային մակարդակով մշակութային և բնական ժառանգության պահպանման վերաբերյալ 1972 թվականի առաջարկությունը, պատմական տարածքների պահպանության և ժամանակակից դերի վերաբերյալ 1976 թվականի առաջարկությունը, 1964 թվականի հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման և վերականգնման վերաբերյալ միջազգային խարտիան (ICOMOS) (Վենեցիայի խարտիա), 1982 թվականի ICOMOS խարտիան պատմական պարտեզների վերաբերյալ (Ֆլորենցիայի խարտիան), և 1987 թվականի ICOMOS խարտիան պատմական քաղաքների և քաղաքային տարածքների պահպանման վերաբերյալ (Վաշինգտոնի խարտիան), 2005 թվականի ICOMOS խարտիայի Սիանի հռչակագիրը ժառանգության կառույցների, վայրերի և տարածքների պահպանման վերաբերյալ, ինչպես նաև 2005 թվականի Վիեննայի հուշագիրը համաշխարհային ժառանգության և ժամանակակից ճարտարապետության վերաբերյալ, պատմական քաղաքային լանդշաֆտի կառավարումը:	² In particular, the 1972 Convention concerning the Protection of the World Cultural and Natural Heritage, the 2005 Convention on the Protection and Promotion of the Diversity of Cultural Expressions, the 1962 Recommendation concerning the Safeguarding of the Beauty and Character of Landscapes and Sites, the 1968 Recommendation concerning the Preservation of Cultural Property Endangered by Public or Private Works, the 1972 Recommendation concerning the Protection, at National Level, of the Cultural and Natural Heritage, the 1976 Recommendation concerning the Safeguarding and Contemporary Role of Historic Areas, the 1964 ICOMOS International Charter for the Conservation and Restoration of Monuments and Sites (Venice Charter), the 1982 ICOMOS Historic Gardens (Florence Charter), and the 1987 ICOMOS Charter for the Conservation of Historic Towns and Urban Areas (Washington Charter), the 2005 ICOMOS Xi'an Declaration on the Conservation of the Setting of Heritage Structures, Sites and Areas, as well as the 2005 Vienna Memorandum on World Heritage and Contemporary Architecture – Managing the Historic Urban Landscape.
Նաև նշելով, այնուամենայնիվ, որ ժողովրդագրական փոփոխությունների, համաշխարհային շուկայական ազատականացման և ապակենտրոնացման, ինչպես նաև զանգվածային զբոսաշրջության, ժառանգության շուկայական շահագործման և կլիմայի փոփոխության գործընթացների ազդեցությամբ պայմանները փոփոխվել են և քաղաքները ենթակա են զարգացման ճնշումներին և մարտահրավերներին, որոնք առկա չէին 1976 թվականին պատմական տարածքների վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի վերջին առաջարկության ընդունման ժամանակ (առաջարկություն պատմական տարածքների պաշտպանման և	Also noting, however, that under processes of demographic shifts, global market liberalization and decentralization, as well as mass tourism, market exploitation of heritage, and climate change, conditions have changed and cities are subject to development pressures and challenges not present at the time of adoption of the most recent UNESCO recommendation on historic areas in 1976 (Recommendation concerning the Safeguarding and Contemporary Role of Historic Areas),

ժամանակակից դերի մասին),	
Այնուհետև, նշելով մշակույթի և ժառանգության գաղափարների և դրանց կառավարման մոտեցումների զարգացման մասին, որոնք իրականացվել են տեղական նախաձեռնությունների և միջազգային ժողովների ² համատեղ գործողությամբ և որոնք արդյունավետ են եղել ամբողջ աշխարհում քաղաքականություններին և գործընթացներին ուղղություն տալու համար,	Further noting the evolution of the concepts of culture and heritage and of the approaches to their management, through the combined action of local initiatives and international meetings ² , which have been useful in guiding policies and practices worldwide,
² Մասնավորապես, Մեխիկո քաղաքում կայացած մշակութային քաղաքականությունների վերաբերյալ 1982 թվականի համաշխարհային գագաթաժողովը, 1994 թվականի Նարայի ժողովը նույնականության վերաբերյալ, մշակույթի և զարգացման վերաբերյալ համաշխարհային հանձնախմբի 1995 թվականի համաժողովը, 1996 թվականի ՀԱԲԻԹԱԹ II համաժողովը Ստամբուլում օրակարգ 21-ի վավերացմամբ, զարգացման մշակութային ռազմավարությունների վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1998 թվականի միջկառավարական համաժողովը Ստոկհոլմում, 1998 թվականի համաշխարհային բանկի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի համատեղ համաժողովը կայուն զարգացման մշակույթի վերաբերյալ՝ ներդրումներ մշակութային և բնական ֆոնդերում, Համաշխարհային ժառանգության և ժամանակակից ճարտարապետության 2005 թվականի միջազգային համաժողովը Վիեննայում, 2005 թվականի Սիանի ICOMOS-ի ընդհանուր ժողովը հուշարձանների և վայրերի տեղակայման վերաբերյալ, և 2008 թվականի ICOMOS-ի Գլխավոր Ասամբլեան՝ վայրերի ոգու պահմանման մասին Քվեբեկում:	² In particular the 1982 World Conference on Cultural Policies in Mexico City, the 1994 Nara Meeting on Authenticity, the 1995 summit of the World Commission on Culture and Development, the 1996 HABITAT II Conference in Istanbul with ratification of Agenda 21, the 1998 UNESCO Intergovernmental Conference on Cultural Policies for Development in Stockholm, the 1998 joint World Bank-UNESCO Conference on Culture in Sustainable Development- Investing in Cultural and Natural Endowments, the 2005 International Conference on World Heritage and Contemporary Architecture in Vienna, the 2005 ICOMOS General Assembly on the Setting of Monuments and Sites in Xi'an, and the 2008 ICOMOS General Assembly on the Spirit of Place in Québec.
Ցանկանալով հավելել և ընդլայնել գոյություն ունեցող միջազգային փաստաթղթերում ներառված չափանիշների և սկզբունքների կիրառումը,	Desiring to supplement and extend the application of the standards and principles laid down in existing international instruments,
Մինչ այդ ունենալով առաջարկներ պատմական քաղաքային լանդշաֆտի վերաբերյալ՝ որպես քաղաքային ժառանգության պահպանման մոտեցում, որը ներառված է գլխավոր խորհրդաժողովի 36-րդ նստաշրջանի օրակարգում՝ 8.1 կետում,	Having before it proposals concerning the historic urban landscape as an approach to urban heritage conservation, which appear on the agenda of the 36th session of the General Conference as item 8.1,
35-րդ նստաշրջանի ժամանակ որոշելով, որ այս հարցը ուղղված է անդամ պետություններին առաջարկության տեսքով,	Having decided at its 35th session that this issue should be addressed by means of a recommendation to Member States,
1. Ընդունում է պատմական քաղաքային	1. Adopts, this 10th day of November 2011, the

լանդշաֆտի մասին առաջարկությունը 2011 թվականի նոյեմբերի 10-ին,	present Recommendation on the Historic Urban Landscape;
2. Խորհուրդ է տալիս անդամ պետություններին ընդունել համապատասխան օրենսդրական համակարգ և ձեռնարկել միջոցառումներ՝ կիրառելով սույն առաջարկության մեջ ընդգրկված սկզբունքներն ու չափանիշերը իրենց իրավասության տակ գտնվող տարածքներում,	2. Recommends that Member States adopt the appropriate legislative institutional framework and measures, with a view to applying the principles and norms set out in this Recommendation in the territories under their jurisdiction;
3. Նաև, խորհուրդ է տալիս անդամ պետություններին տեղական ինքնակառավարման, ազգային և տարածքային ինքնակառավարման իշխանությունների, ինչպես նաև պատմական քաղաքային տարածքների և դրանց ավելի ընդգրկուն աշխարհագրական շրջակայքի պաշտպանության, պահպանության և կառավարման հարցերով զբաղվող կառույցների, ծառայությունների կամ մարմինների և ասոցիացիաների ուշադրությունը հրավիրել սույն առաջարկությանը:	3. Also recommends that Member States bring this Recommendation to the attention of the local, national and regional authorities, and of institutions, services or bodies and associations concerned with the safeguarding, conservation and management of historic urban areas and their wider geographical settings.
Ներածություն	Introduction
1. Մեր ժամանակները վկան են պատմության մեջ ամենամեծ մարդկային գաղթին: Աշխարհի բնակչության կեսից ավելին այժմ բնակվում է քաղաքային տարածքներում: Քաղաքային տարածքները ավելի ու ավելի կարևոր դեր են խաղում որպես բարգավաճման խթանիչներ և նորարարությունների ու ստեղծագործությունների կենտրոն, դրանք հնարավորություններ են ապահովում զբաղվածության և կրթության համար և համապատասխանում են մարդկանց զարգացող պահանջներին և ձգտումներին:	1. Our time is witness to the largest human migration in history. More than half of the world's population now lives in urban areas. Urban areas are increasingly important as engines of growth and as centres of innovation and creativity; they provide opportunities for employment and education and respond to people's evolving needs and aspirations.
2. Սրընթաց և անվերհսկելի ուրբանիզացիան, այնուամենայնիվ, հաճախ կարող է տանել սոցիալական և տարածական մասնատման, և քաղաքային միջավայրում և դրան շրջապատող չկառուցապատված	2. Rapid and uncontrolled urbanization, however, may frequently result in social and spatial fragmentation and in a drastic deterioration of the quality of the urban environment and of the surrounding rural areas.

տարածքներում որակի կտրուկ անկման: Ակնհայտորեն, սրա պատճառ կարող է հանդիսանալ կառուցապատման չափազանց մեծ խտությունը, ստանդարտ և միապաղաղ շենքերը, հանրային տարածքների և հարմարությունների բացակայությունը, անհամարժեք ենթակառուցվածքները, ահագնացող չքավորությունը, սոցիալական մեկուսացումը և կլիմայական աղետների աճող վտանգը:	Notably, this may be due to excessive building density, standardized and monotonous buildings, loss of public space and amenities, inadequate infrastructure, debilitating poverty, social isolation, and an increasing risk of climate-related disasters.
3. Քաղաքային ժառանգությունը, ներառյալ դրա նյութական ու ոչ նյութական տարրերը, կարևոր միջոց է հանդիսանում քաղաքային տարածքներում կենսունակությունը բարձրացնելու համար, և ամրապնդում է տնտեսական զարգացումն ու սոցիալական համախմբվածությունը փոփոխվող համընդհանուր միջավայրում: Քանի որ մարդկության ապագան կախված է առկա պաշարների արդյունավետ ծրագրավորմամբ և կառավարմամբ, պահպանման սկզբունքը դարձել է ռազմավարություն քաղաքային զարգացման և կյանքի որակի միջև հավասարակշռության հասնելու համար:	3. Urban heritage, including its tangible and intangible components, constitutes a key resource in enhancing the liveability of urban areas, and fosters economic development and social cohesion in a changing global environment. As the future of humanity hinges on the effective planning and management of resources, conservation has become a strategy to achieve a balance between urban growth and quality of life on a sustainable basis.
4. Վերջին կես դարի ընթացքում քաղաքային ժառանգության պահպանումը դարձել է ամբողջ աշխարհում պետական քաղաքականության կարևոր մասը: Սա հետևանք է համընդհանուր արժեքների պահպանման և պատմությունից օգուտ քաղելու անհրաժեշտության կարևորությունից: Այնուամենայնիվ, ճարտարապետական հուշարձաններից շեշտը անցնում է դեպի քաղաքային արժեքների սոցիալական, մշակութային և տնտեսական գործընթացների կարևորության ավելի լայն ճանաչման վրա, որը պետք է համընկնի գոյություն ունեցող ռազմավարությանը և ստեղծի նոր միջոցներ այս տեսակետը հասցեագրելու համար:	4. In the course of the past half century, urban heritage conservation has emerged as an important sector of public policy worldwide. It is a response to the need to preserve shared values and to benefit from the legacy of history. However, the shift from an emphasis on architectural monuments primarily towards a broader recognition of the importance of the social, cultural and economic processes in the conservation of urban values, should be matched by a drive to adapt the existing policies and to create new tools to address this vision.
5. Սույն առաջարկությունը առաջացնում է անհրաժեշտություն քաղաքային ժառանգության պահպանման	5. This Recommendation addresses the need to better integrate and frame urban heritage conservation strategies within the larger goals of

առաջնությունն ավելի լայն ընդգրկելու համընդհանուր կայուն զարգացման նպատակների մեջ, որպեսզի աջակցի մարդկային միջավայրի որակի պահպանման և բարելավման նպատակով իրականացվող հանրային և մասնավոր գործողություններին: Այն առաջարկում է լանդշաֆտային մոտեցում պատմական տարածքները իրենց ավելի լայն քաղաքային համատեքստերում նույնականացնելու, պահպանելու և կառավարելու համար՝ հաշվի առնելով ֆիզիկական փոխհարաբերությունները, տարածական կազմակերպվածությունն ու կապվածությունը, բնական առանձնահատկություններն ու սահմանումները և սոցիալական, մշակութային և տնտեսական արժեքները:	overall sustainable development, in order to support public and private actions aimed at preserving and enhancing the quality of the human environment. It suggests a landscape approach for identifying, conserving and managing historic areas within their broader urban contexts, by considering the interrelationships of their physical forms, their spatial organization and connection, their natural features and settings, and their social, cultural and economic values.
6. Այս մոտեցումն ուղղված է քաղաքականությանը, կառավարող և վարչական շահագրգիռ կողմերին, և ընդգրկում է քաղաքային զարգացման գործընթացով զբաղվող տեղական, ազգային, տարածքային կառավարման, միջազգային, հասարակական և մասնավոր մարմիններին:	6. This approach addresses the policy, governance and management concerns involving a variety of stakeholders, including local, national, regional, international, public and private actors in the urban development process.
7. Սույն առաջարկությունը հիմնվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ժառանգության պահպանմանը վերաբերող նախորդ չորս առաջարկությունների վրա և հաշվի է առնում դրանց սկզբունքների և գաղափարների կարևորությունն ու հիմնավորվածությունը պահպանման պատմության և գործընթացի մեջ: Ի հավելումն, ժամանակակից պահպանության կոնվենցիաներն ու խարտիաները ներառում են մշակութային և բնական ժառանգության բազմաթիվ գաղափարներ և կազմում են սույն առաջարկության հիմքերը:	7. This Recommendation builds upon the four previous UNESCO recommendations concerning heritage preservation, and recognizes the importance and the validity of their concepts and principles in the history and practice of conservation. In addition, modern conservation conventions and charters address the many dimensions of cultural and natural heritage, and constitute the foundations of this Recommendation.
I. Սահմանում	I. Definition
8. Պատմական քաղաքային լանդշաֆտը քաղաքային տարածքն է՝ ընկալված որպես մշակութային ու բնական արժեքների և	8. The historic urban landscape is the urban area understood as the result of a historic layering of cultural and natural values and attributes,

տարրերի պատմական շերտավորում, որը ընդլայնվում է մինչև “պատմական կենտրոն” կամ “խումբ” հասկացությունները՝ ներառելով ավելի ընդգրկուն քաղաքային համատեքստ և աշխարհագրական միջավայր:	extending beyond the notion of “historic centre” or “ensemble” to include the broader urban context and its geographical setting.
9. Այս ընդգրկուն համատեքստը ակնհայտորեն ներառում է տեղանքագրությունը, երկրաբանությունը, ջրաբանությունը և բնական առանձնահատկությունները, մարդածին միջավայրը՝ պատմական ու ժամանակակից, վերգետնյա ու ստորգետնյա ենթակառուցվածքները, բաց տարածություններն ու պարտեզները, հողի օգտագործման կառուցվածքն ու տարածական կազմակերպվածությունը, ընկալումներն ու տեսողական հարաբերությունները, ինչպես նաև քաղաքային կառույցի այլ տարրերը: Այն ներառում է նաև ժառանգության սոցիալական և մշակութային գործընթացներն ու արժեքները, տնտեսական գործընթացները և ժառանգության ոչ նյութական մոտեցումը, հաշվի առնելով բազմազանությունն ու նույնականացումը:	9. This wider context includes notably the site’s topography, geomorphology, hydrology and natural features, its built environment, both historic and contemporary, its infrastructures above and below ground, its open spaces and gardens, its land use patterns and spatial organization, perceptions and visual relationships, as well as all other elements of the urban structure. It also includes social and cultural practices and values, economic processes and the intangible dimensions of heritage as related to diversity and identity.
10. Այս սահմանումը հիմք է հանդիսանում կայուն զարգացման շրջանակներում պատմական քաղաքային լանդշաֆտների նույնականացման, գնահատման, պահպանման և կառավարման համապարփակ ու միասնական մոտեցման համար:	10. This definition provides the basis for a comprehensive and integrated approach for the identification, assessment, conservation and management of historic urban landscapes within an overall sustainable development framework.
11. Պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցումը նպատակուղղված է մարդկային միջավայրի որակի պահպանմանը, որը բարձրացնում է քաղաքային տարածությունների արդյունավետ և կայուն օգտագործումը և միաժամանակ ընդունում է նրանց դինամիկ առանձնահատկությունը և խթանում սոցիալական ու գործառնական բազմազանությանը: Այն միավորում է քաղաքային ժառանգության պահպանության	11. The historic urban landscape approach is aimed at preserving the quality of the human environment, enhancing the productive and sustainable use of urban spaces, while recognizing their dynamic character, and promoting social and functional diversity. It integrates the goals of urban heritage conservation and those of social and economic development. It is rooted in a balanced and sustainable relationship between the urban and

սոցիալական ու տնտեսական զարգացման նպատակները: Այն արմատավորված է համահավասար և կայուն հարաբերակցությամբ քաղաքային ու բնական միջավայրերում, ներկա ու ապագա սերունդների պահանջներում և անցյալի ժառանգական հարստության մեջ:	natural environment, between the needs of present and future generations and the legacy from the past.
12. Պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցմամբ, մշակութային բազմազանությունն ու ստեղծագործությունը կարևոր միջոցներ են մարդկային, սոցիալական, տնտեսական զարգացման համար, և սահմանում է միջոցներ ֆիզիկական և սոցիալական փոփոխությունները կառավարելու համար և երաշխավորում է, որ ժամանակակից միջամտությունները ներդաշնակորեն ներառվեն պատմական միջավայրում ժառանգության հետ՝ հաշվի առնելով տարածաշրջանային ենթատեքստերը:	12. The historic urban landscape approach considers cultural diversity and creativity as key assets for human, social and economic development, and provides tools to manage physical and social transformations and to ensure that contemporary interventions are harmoniously integrated with heritage in a historic setting and take into account regional contexts.
13. Պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցումը ընդգրկում է տեղական համայնքների ավանդույթներն ու պատկերացումները՝ միևնույն ժամանակ հարգելով ազգային և միջազգային համայնքների արժեքները:	13. The historic urban landscape approach learns from the traditions and perceptions of local communities, while respecting the values of the national and international communities.
II. Մարտահրավերներ և հնարավորություններ պատմական քաղաքային լանդշաֆտի համար	II. Challenges and opportunities for the historic urban landscape
14. ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործող առաջարկությունները հաշվի են առնում պատմական տարածքների դերի կարևորությունը ժամանակակից հասարակություններում: Այս առաջարկությունները նաև նշում են մի շարք վտանգներ, որոնք կարող են ազդել պատմական քաղաքային տարածքների վրա, և ապահովում են ընդհանուր դրույթներ, ռազմավարություններ և ուղեցույցներ այսպիսի մարտահրավերների դեմ	14. The existing UNESCO recommendations recognize the important role of historic areas in modern societies. These recommendations also identify a number of specific threats to the conservation of historic urban areas, and provide general principles, policies and guidelines to meet such challenges.

պայքարելու համար:	
15. Պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցումը արտացոլում է այն փաստը, որ քաղաքային ժառանգության պահպանության կարգն ու գործելակերպը վերջին տասնամյակներում զարգացում է ապրել՝ հնարավորություն ընձեռելով քաղաքականություն մշակողներին և կառավարողներին ավելի արդյունավետ գործելու նոր մարտահրավերներով և հնարավորություններով: Պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցումը աջակցում է համայնքներին զարգացման և հարմարեցման հարցում՝ միևնույն ժամանակ պահպանելով պատմության, հավաքական հիշողության և շրջակա միջավայրի հետ կապված առանձնահատկություններն ու արժեքները:	15. The historic urban landscape approach reflects the fact that both the discipline and practice of urban heritage conservation have evolved significantly in recent decades, enabling policy-makers and managers to deal more effectively with new challenges and opportunities. The historic urban landscape approach supports communities in their quest for development and adaptation, while retaining the characteristics and values linked to their history and collective memory, and to the environment.
16. Վերջին տասնամյակների ընթացքում համաշխարհային քաղաքային բնակչության կտրուկ աճի, զարգացման ծավալների ու արագության և փոփոխվող տնտեսության պատճառով քաղաքային բնակավայրերն ու դրանց պատմական տարածքները վերածվել են տնտեսության աճի կենտրոնների և շարժիչ ուժերի, և նոր դեր են ստանձնել մշակութային և հասարակական կյանքում: Արդյունքում, հայտնվել են մի ամբողջ նոր ճնշումների տակ, ներառյալ՝	16. In the past decades, owing to the sharp increase in the world's urban population, the scale and speed of development, and the changing economy, urban settlements and their historic areas have become centres and drivers of economic growth in many regions of the world, and have taken on a new role in cultural and social life. As a result, they have also come under a large array of new pressures, including:
Ուրբանիզացիա և միջազգայնացում	Urbanization and globalization
17. Քաղաքային զարգացումը փոխում է բազմաթիվ պատմական քաղաքային տարածքների կերպարը: Համաշխարհային գործընթացները խորապես ազդում են այն արժեքների վրա, որոնք վերագրվում են հանրության կողմից քաղաքային տարածքներին և դրանց շրջակայքին, ինչպես նաև բնակիչների և սպառողների ընկալմանը և իրականությանը: Մի կողմից, ուրբանիզացիան ապահովում է տնտեսական,	17. Urban growth is transforming the essence of many historic urban areas. Global processes have a deep impact on the values attributed by communities to urban areas and their settings, and on the perceptions and realities of their inhabitants and users. On the one hand, urbanization provides economic, social and cultural opportunities that can enhance the quality of life and traditional character of urban areas; on the other hand, the unmanaged

սոցիալական և մշակութային հնարավորություններ, որոնք կարող են բարձրացնել քաղաքային տարածքների կենսակերպի որակն ու ավանդական հատկանիշները, մյուս կողմից քաղաքային խտության և աճի անկառավարելի փոփոխությունները կարող են քայքայել տեղի ընկալումը, քաղաքային հյուսավածքի ամբողջականությունն ու համայնքների ինքնությունը: Որոշ պատմական քաղաքային տարածքներ կորցնում են իրենց գործառույթը, ավանդական դերն ու բնակչությունը: Պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցումը կարող է նպաստել այսպիսի ազդեցությունների կառավարմանն ու մեղմացմանը:	changes in urban density and growth can undermine the sense of place, the integrity of the urban fabric, and the identity of communities. Some historic urban areas are losing their functionality, traditional role and populations. The historic urban landscape approach may assist in managing and mitigating such impacts.
Զարգացում	Development
18. Բազմաթիվ տնտեսական ընթացակարգեր առաջարկում են տարբեր եղանակներ և միջոցներ քաղաքային չքավորության մակարդակը մեղմացնելու, սոցիալական ու մարդկային զարգացմանը նպաստելու համար: Նորարարությունների հսկայական հնարավորությունների հասանելիությունը, ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաները և կայուն ծրագրավորումը, նախագծային և շինարարական գործունեությունները, կարող են կատարելագործել քաղաքային տարածքների վիճակը՝ այսպիսով բարձրացնելով կենսամակարդակը: Պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցման պատշաճ կառավարմամբ նոր գործառույթները, ինչպիսիք են ծառայություններն ու զբոսաշրջությունը, կարևոր տնտեսական նախաձեռնություններ են, որոնք կարող են նպաստել համայնքների բարօրությանն ու պատմական քաղաքային տարածքների և դրանց մշակութային ժառանգության պահպանմանը՝ միևնույն ժամանակ ապահովելով տնտեսական և սոցիալական բազմազանությունը և բնակեցման	18. Many economic processes offer ways and means to alleviate urban poverty and to promote social and human development. The greater availability of innovations, such as information technology and sustainable planning, design and building practices, can improve urban areas, thus enhancing the quality of life. When properly managed through the historic urban landscape approach, new functions, such as services and tourism, are important economic initiatives that can contribute to the well-being of the communities and to the conservation of historic urban areas and their cultural heritage while ensuring economic and social diversity and the residential function. Failing to capture these opportunities leads to unsustainable and unviable cities, just as implementing them in an inadequate and inappropriate manner results in the destruction of heritage assets and irreplaceable losses for future generations.

գործառույթը: Այս հնարավորությունների բացթողումը տանում է անկայուն և անհուսալի քաղաքների, և դրանց ոչ պատշաճ ու անհամապատասխան կերպով կիրառումը կարող է առաջացնել ժառանգության ոչնչացում և տանել անփոխարինելի կորուստների ապագա սերունդների համար:	
Շրջակա միջավայր	Environment
19. Մարդկային բնակավայրերը մշտապես համապատասխանեցվել են կլիմայի և շրջակա միջավայրի՝ ներառյալ աղետներից առաջացած փոփոխություններին: Այնուամենայնիվ, ընթացիկ փոփոխությունների ուժգնությունն ու արագությունը փորձարկման են ենթարկում մեր ընդհանուր քաղաքային միջավայրը: Շրջակա միջավայրի, հատկապես ջրի և էլեկտրաէներգիայի սպառման նկատմամբ մտահոգությունները առաջացնում են քաղաքային կենսակերպի համար նոր մոտեցումների և նոր մոդելների պահանջ՝ էկոլոգիապես զգայուն քաղաքականության և գործունեության հիման վրա, որոնք նպատակաուղղված են քաղաքային կենսակերպի կայունությունն ու որակը ամրապնդելու համար: Այս նախաձեռնություններից շատերը, այնուամենայնիվ, պետք է ընդգրկեն բնական և մշակութային ժառանգություն՝ որպես կայուն զարգացման պաշարներ:	19. Human settlements have constantly adapted to climatic and environmental changes, including those resulting from disasters. However, the intensity and speed of present changes are challenging our complex urban environments. Concern for the environment, in particular for water and energy consumption, calls for approaches and new models for urban living, based on ecologically sensitive policies and practices aimed at strengthening sustainability and the quality of urban life. Many of these initiatives, however, should integrate natural and cultural heritage as resources for sustainable development.
20. Պատմական քաղաքային տարածքների փոփոխությունները կարող են առաջանալ նաև անսպասելի աղետներից և զինված հակամարտություններից: Սրանք կարող են կարճաժամկետ լինել, սակայն կարող են շոշափելի ազդեցություններ թողնել: Պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցումը կարող է նպաստել այսպիսի ազդեցությունների կառավարման և նվազեցման գործին:	20. Changes to historic urban areas can also result from sudden disasters and armed conflicts. These may be short lived but can have lasting effects. The historic urban landscape approach may assist in managing and mitigating such impacts.

III. Քաղաքականություններ	III. Policies
21. Ժամանակակից քաղաքային պահպանության քաղաքականությունները՝ ընդգրկված գործող միջազգային առաջարկություններում և խարտիաներում, հարթակ են ստեղծել պատմական քաղաքային տարածքների պահպանման համար: Այնուամենայնիվ, ներկա և ապագա մարտահրավերները պահանջում են հանրային քաղաքականությունների նոր համակարգի սահմանում և կիրառում, որոնք պաշտպանում են մշակութային և բնական արժեքների պատմական շերտավորումն ու հավասարակշռությունը քաղաքային միջավայրերում:	21. Modern urban conservation policies, as reflected in existing international recommendations and charters, have set the stage for the preservation of historic urban areas. However, present and future challenges require the definition and implementation of a new generation of public policies identifying and protecting the historic layering and balance of cultural and natural values in urban environments.
22. Քաղաքային ժառանգության պահպանությունը պետք է ընդգրկվի ընդհանուր քաղաքականության և ավելի լայն քաղաքային համատեքստերի պլանավորման և գործողությունների մեջ: Քաղաքականությունները պետք է ապահովեն պահպանության և կայունության համաչափ մեթոդներ կարճաժամկետ և երկարաժամկետ պայմաններում: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել պատմական քաղաքային կառուցվածքում ժամանակակից միջամտությունների ներդաշնակ ինտեգրմանը: Մասնավորապես, տարբեր շահագրգիռ կողմերի պարտականությունները հետևյալն են՝	22. Conservation of the urban heritage should be integrated into general policy planning and practices and those related to the broader urban context. Policies should provide mechanisms for balancing conservation and sustainability in the short and long terms. Special emphasis should be placed on the harmonious integration of contemporary interventions into the historic urban fabric. In particular, the responsibilities of the different stakeholders are the following:
(ա) անդամ պետությունները պետք է ընդգրկեն քաղաքային ժառանգության պահպանման ռազմավարությունները ազգային զարգացման քաղաքականությունների և օրակարգերի մեջ՝ համաձայն պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցման: Այս շրջանակում տեղական մարմինները պետք է կազմեն քաղաքային զարգացման ծրագրեր՝ հաշվի առնելով տարածքի արժեքները՝ ներառյալ լանդշաֆտն ու այլ ժառանգության արժեքներ	(a) Member States should integrate urban heritage conservation strategies into national development policies and agendas according to the historic urban landscape approach. Within this framework, local authorities should prepare urban development plans taking into account the area's values, including the landscape and other heritage values, and features associated therewith;

և դրա հետ կապված հատկանիշներ,	
(բ) հասարակական և մասնավոր շահագրգիռ կողմերը պետք է համագործակցեն, մասնավորապես, ընկերությունների միջոցով ապահովելու պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցման հաջող կիրառումը,	(b) Public and private stakeholders should cooperate, inter alia, through partnerships to ensure the successful application of the historic urban landscape approach;
(գ) կայուն զարգացման գործընթացներով զբաղվող միջազգային կազմակերպությունները պետք է ներգրավեն պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցումը իրենց ռազմավարությունների, ծրագրերի և գործողությունների ցանկում,	(c) International organizations dealing with sustainable development processes should integrate the historic urban landscape approach into their strategies, plans and operations;
(դ) Ազգային և միջազգային հասարակական կազմակերպությունները պետք է մասնակցեն մեթոդների և լավագույն գործողությունների մշակման և տարածման գործում կիրառելու համար պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցումը:	(d) National and international non-governmental organizations should participate in developing and disseminating tools and best practices for the implementation of the historic urban landscape approach.
23. Կառավարության բոլոր մակարդակները՝ տեղական, տարածքային, ազգային/դաշնային, որոնք քաջատեղյակ են իրենց պարտականությունների մասին, պետք է նպաստեն պատմական ժառանգության պահպանման քաղաքականությունների սահմանման, մշակման, կիրառման ու գնահատման գործընթացին: Այս քաղաքականությունները պետք է հիմնված լինեն բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցության վրա և պետք է համաձայնեցվեն հիմնական և ոլորտային տեսակետների հիման վրա:	23. All levels of government – local, regional, national/federal, – aware of their responsibility – should contribute to the definition, elaboration, implementation and assessment of urban heritage conservation policies. These policies should be based on a participatory approach by all stakeholders and coordinated from both the institutional and sectorial viewpoints.
IV. Մեթոդներ	IV. Tools
24. Պատմական քաղաքային լանդշաֆտի վրա հիմնված մոտեցումը ենթադրում է տեղական հանգամանքներին համապատասխանեցված մի շարք ավանդական և նորարարական մեթոդների կիրառում: Այս մեթոդներից մի քանիսը, որոնք պետք է մշակվեն որպես	24. The approach based on the historic urban landscape implies the application of a range of traditional and innovative tools adapted to local contexts. Some of these tools, which need to be developed as part of the process involving the different stakeholders, might include:

գործընթացի մի մասը՝ ներառելով տարբեր կազմակերպությունների, կարող են պարունակել հետևյալը՝	
(ա) Հասարակական ներգրավվածության մեթոդներ, որոնք պետք է ընդգրկեն տարբեր շահագրգիռ կողմերի և պետք է օգնեն նրանց ճանաչելու իրենց քաղաքային տարածքների կարևոր արժեքները, մշակելու բազմազանությունն արտացոլող տեսակետներ, նպատակներ դնելու և համաձայնելու ժառանգությունը պահպանելու գործողությունների հետ, ինչպես նաև նպաստելու կայուն զարգացմանը: Այս մեթոդները, որոնք կազմում են քաղաքային կառավարման գործունեության անբաժանելի մասը, պետք է հեշտացնեն միջմշակութային երկխոսությունը՝ սովորելով հանրությանից իրենց պատմության, ավանդույթների, արժեքների, կարիքների և իղձերի մասին, և դյուրինացնելով հակասող շահեր ունեցող խմբերի միջև միջնորդությունն ու բանակցությունները:	(a) Civic engagement tools should involve a diverse cross-section of stakeholders, and empower them to identify key values in their urban areas, develop visions that reflect their diversity, set goals, and agree on actions to safeguard their heritage and promote sustainable development. These tools, which constitute an integral part of urban governance dynamics, should facilitate intercultural dialogue by learning from communities about their histories, traditions, values, needs and aspirations, and by facilitating mediation and negotiation between groups with conflicting interests.
(բ) Գիտելիքների և պլանավորման մեթոդները պետք է օգնեն պահպանելու քաղաքային ժառանգության հատկանիշների ամբողջականությունն ու տեղային յուրահատկությունը: Նրանք պետք է նաև ընդունեն բազմազանությանը մշակութային կարևորությունը և ապահովեն միջոցներ փոփոխությունների վերահսկման և կառավարման համար՝ բարելավելով կենսամակարդակն ու քաղաքային տարածությունը: Այս մեթոդները պետք է ներառեն մշակութային և բնական հատկանիշների վավերագրում և քարտեզագրում: Ժառանգության, սոցիալական և բնապահպանական ազդեցության գնահատումները պետք է օգտագործվեն օժանդակելու և հեշտացնելու որոշում կայացնելու գործընթացները կայուն զարգացման շրջանակներում:	(b) Knowledge and planning tools should help protect the integrity and authenticity of the attributes of urban heritage. They should also allow for the recognition of cultural significance and diversity, and provide for the monitoring and management of change to improve the quality of life and of urban space. These tools would include documentation and mapping of cultural and natural characteristics. Heritage, social and environmental impact assessments should be used to support and facilitate decision-making processes within a framework of sustainable development.

(գ) Կարգավորիչ համակարգերը պետք է անդրադառնան տեղական պայմաններին և կարող են ներառել օրենսդրական և կարգավորող միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են քաղաքային ժառանգության նյութական ու ոչ նյութական արժեքների պահպանմանն ու կառավարմանը՝ ներառյալ սոցիալական, բնապահպանական և մշակութային արժեքները: Ավանդական համակարգերը պետք է ընդունվեն և ամրապնդվեն ըստ անհրաժեշտության:	(c) Regulatory systems should reflect local conditions, and may include legislative and regulatory measures aimed at the conservation and management of the tangible and intangible attributes of the urban heritage, including their social, environmental and cultural values. Traditional and customary systems should be recognized and reinforced as necessary.
(դ) Ֆինանսական միջոցները պետք է նպատակաուղղված լինեն հնարավորությունների ձեռքբերմանն ու նպաստեն նորարարական մեթոդներով եկամտաստեղծ զարգացմանը: Ի հավելումն կառավարական և միջազգային կազմակերպությունների համընդհանուր հիմնադրամներին, ֆինանսական միջոցները պետք է օգտագործվեն արդյունավետ կերպով մասնավոր ներդրումները տեղական մակարդակով ամրապնդելու համար: Տեղական ձեռնարկություններին աջակցություն ցուցաբերելու համար փոքր վարկերն ու այլ ճկուն համակարգով ֆինանսավորումը նույնպես կարևոր դեր են խաղում պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցումը ֆինանսապես կայուն դարձնելու գործում:	(d) Financial tools should be aimed at building capacities and supporting innovative income-generating development, rooted in tradition. In addition to government and global funds from international agencies, financial tools should be effectively employed to foster private investment at the local level. Micro-credit and other flexible financing to support local enterprise, as well as a variety of models of partnerships, are also central to making the historic urban landscape approach financially sustainable.
V. Կարողությունների ստեղծում, հետազոտություն, տեղեկատվություն և հաղորդակցություն	V. Capacity-building, research, information and communication
25. Կարողությունների ստեղծումը պետք է ներառի հիմնական շահագրգիռ կողմերին՝ համայնքներին, որոշում կայացնողներին, մասնագետներին և կառավարիչներին, որպեսզի ամրապնդի պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցման և դրա իրականացման գաղափարը: Արդյունավետ կարողությունների զորացումը կախված է հիմնական շահագրգիռ կողմերի ակտիվ	25. Capacity-building should involve the main stakeholders: communities, decision-makers, and professionals and managers, in order to foster understanding of the historic urban landscape approach and its implementation. Effective capacity-building hinges on an active collaboration of these main stakeholders, aimed at adapting the implementation of this Recommendation to regional contexts in order to

համագործակցությունից, որը նպատակաուղղված է սույն առաջարկությունը տարածքային միջավայրին համապատասխանեցնելուն՝ սահմանելու և պահպանելու համար տեղական ռազմավարություններն ու նպատակները, գործողությունների շրջանակները և պաշարների կենտրոնացման սխեմաները:	define and refine the local strategies and objectives, action frameworks and resource mobilization schemes.
26. Հետազոտությունը պետք է ուղղված լինի քաղաքային բնակավայրերի տարբեր շերտերին՝ արժեքները սահմանելու, համայնքների համար դրանց իմաստը ընկալելի դարձնելու և ընդգրկուն կերպով այցելուներին ներկայացնելու համար: Անհրաժեշտ է խրախուսել ակադեմիական և համալսարանական կառույցներին և հետազոտության այլ կենտրոններին իրականացնելու գիտական հետազոտություն պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցման տեսակետների վերաբերյալ, և համագործակցել տեղական, ազգային, տարածքային և միջազգային մակարդակներում: Անհրաժեշտ է հիմնավորել քաղաքային տարածքների իրավիճակն ու դրանց զարգացումը, հեշտացնել փոփոխության առաջարկությունների գնահատումը և բարելավել պահպանման և կառավարման հմտություններն ու գործընթացները:	26. Research should target the complex layering of urban settlements, in order to identify values, understand their meaning for the communities, and present them to visitors in a comprehensive manner. Academic and university institutions and other centres of research should be encouraged to develop scientific research on aspects of the historic urban landscape approach, and cooperate at the local, national, regional and international level. It is essential to document the state of urban areas and their evolution, to facilitate the evaluation of proposals for change, and to improve protective and managerial skills and procedures.
27. Խրախուսել տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիայի կիրառումը՝ հիմնավորելու, ընկալելու և ներկայացնելու համար քաղաքային տարածքների և դրանց բաղկացուցիչ մասերի շերտավորումը: Այս տվյալների հավաքումն ու վերլուծումը կազմում են քաղաքային տարածքների գիտելիքի կարևոր մասը: Հասարակության բոլոր շերտերի հետ հաղորդակցվելու գործում հատկապես կարևոր է հասանելի լինել երիտասարդությանը և պասիվ խմբերին վերջիններիս մասնակցությունը խրախուսելու համար:	27. Encourage the use of information and communication technology to document, understand and present the complex layering of urban areas and their constituent components. The collection and analysis of this data is an essential part of the knowledge of urban areas. To communicate with all sectors of society, it is particularly important to reach out to youth and all under-represented groups in order to encourage their participation.

VI. Միջազգային համագործակցություն	VI. International cooperation
28. Անդամ պետություններն ու միջազգային կառավարական և հասարակական կազմակերպությունները պետք է դյուրինացնեն հանրային ըմբռնումն ու ներգրավվածությունը պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցման իրականացման գործում՝ տարածելով աշխարհի տարբեր երկրներում ձեռք բերած լավագույն փորձն ու դասընթացները և ամրապնդելով գիտելիքի ուսուցանումն ու կարողությունների զորացումը:	28. Member States and international governmental and non-governmental organizations should facilitate public understanding and involvement in the implementation of the historic urban landscape approach, by disseminating best practices and lessons learned from different parts of the world, in order to strengthen the network of knowledge-sharing and capacity-building.
29. Անդամ պետությունները պետք է խրախուսեն բազմազգ համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների միջև:	29. Member States should promote multinational cooperation between local authorities.
30. Պետք է խրախուսել անդամ պետությունների միջազգային զարգացման և համագործակցության կազմակերպություններին, հասարակական կազմակերպություններին ու հիմնադրամներին մշակելու մեթոդներ, որոնք հաշվի են առնում պատմական քաղաքային լանդշաֆտային մոտեցումը, և դրանք համապատասխանեցնեն քաղաքային տարածքներին վերաբերող օժանդակ ծրագրերին և նախագծերին:	30. International development and cooperation agencies of Member States, non-governmental organizations and foundations should be encouraged to develop methodologies which take into account the historic urban landscape approach and to harmonize them with their assistance programmes and projects pertaining to urban areas.
ՀԱՎԵԼՎԱԾ	APPENDIX
Սահմանումների բառարան	Glossary of definitions
Պատմական տարածք/քաղաք (1976 թվականի առաջարկությունից) “Պատմական և ճարտարապետական (ներառյալ ազգային) տարածքները” պետք է ընկալել որպես շենքերի, շինությունների և բաց տարածությունների որևէ խումբ՝	Historic area/city (from the 1976 Recommendation) “Historic and architectural (including vernacular) areas” shall be taken to mean any groups of buildings, structures and open spaces including archaeological and palaeontological sites, constituting human settlements in an urban or

ներառյալ հնագիտական և հնէաբանական վայրեր, որոնք բաղկացած են քաղաքային կամ գյուղական տարածքներում մարդկության բնակավայրերից, և որոնց կապակցվածությունն ու արժեքը հնագիտական, ճարտարապետական, նախապատմական, պատմական, գեղագիտական կամ սոցիալ-մշակութային տեսակետից ճանաչված են: Այս “տարածքների” մեջ, որոնք իրենց հատկանիշներով շատ են տարբերվում, հնարավոր է զանազանել հատկապես հետևյալը՝ նախապատմական վայրեր, պատմական քաղաքներ, հին քաղաքային կացարաններ, գյուղեր և գյուղակներ, ինչպես նաև միատարր հուշարձանային համալիրներ, բնականաբար հաշվի առնելով, որ վերջինս պետք է զգուշորեն պահպանվի առանց փոփոխության ենթարկվելու:	rural environment, the cohesion and value of which, from the archaeological, architectural, prehistoric, historic, aesthetic or sociocultural point of view are recognized. Among these “areas”, which are very varied in nature, it is possible to distinguish the following “in particular: prehistoric sites, historic towns, old urban quarters, villages and hamlets as well as homogeneous monumental groups, it being understood that the latter should as a rule be carefully preserved unchanged.
Պատմական քաղաքային տարածք (ICOMOS-ի Վաշինգտոնի խարտիայից) Պատմական քաղաքային տարածքները՝ մեծ և փոքր, ներառում են քաղաքներ և պատմական կենտրոններ կամ կացարաններ, իրենց բնական և մարդու ձեռքով ստեղծված շրջակա միջավայրի հետ միասին: Բացի պատմական կարևորություն ունենալուց, այս տարածքները ներառում են ավանդական քաղաքային մշակույթների արժեքները:	Historic urban area (from the ICOMOS Washington Charter) Historic urban areas, large and small, include cities, towns and historic centres or quarters, together with their natural and man-made environments. Beyond their role as historical documents, these areas embody the values of traditional urban cultures.
Քաղաքային ժառանգությունը (Եվրամիության հետազոտությունից՝ զեկույց No16 (2004 թվական), քաղաքային պատմական տարածքների կայուն զարգացում և ակտիվ ինտեգրում քաղաքներում - SUIT) Քաղաքային ժառանգությունը բաղկացած է երեք հիմնական խմբերից՝ ▪ բացառիկ մշակութային արժեքի հուշարձանային ժառանգություն,	Urban heritage (from European Union research report N° 16 (2004), Sustainable development of Urban historical areas through and active Integration within Towns – SUIT) Urban heritage comprises three main categories: ▪ Monumental heritage of exceptional cultural value;

▪ ոչ բացառիկ ժառանգության տարրեր, որոնք կապակցված են և գոյություն ունեն հարաբերական բաշխմամբ: ▪ նոր քաղաքային տարրեր, որոնք պետք է հաշվի առնել (օրինակ)՝ ▪ քաղաքային կառուցապատման ձևը, ▪ բաց տարածությունը՝ փողոցներ, հասարակական բաց տարածություններ, ▪ քաղաքային ենթակառուցվածքներ՝ նյութական ցանցեր և սարքավորումներ:	▪ Non-exceptional heritage elements but present in a coherent way with a relative abundance; ▪ New urban elements to be considered (for instance): ▪ The urban built form; ▪ The open space: streets, public open spaces; ▪ Urban infrastructures: material networks and equipments.
Քաղաքային պահպանություն Քաղաքային պահպանությունը չի սահմանափակվում եզակի շինությունների պահպանմամբ: Այն ճարտարապետությանը դիտում է որպես քաղաքային միջավայրի ամբողջական տարր՝ դարձնելով այն ընդհանուր և բազմակողմանի ճյուղ: Ըստ սահմանման՝ քաղաքային պահպանությունը ընկած է քաղաքային պլանավորման սրտում:	Urban conservation Urban conservation is not limited to the preservation of single buildings. It views architecture as but one element of the overall urban setting, making it a complex and multifaceted discipline. By definition, then, urban conservation lies at the very heart of urban planning.
Կառուցապատված միջավայր Կառուցապատված միջավայրը վերաբերում է մարդկության կողմից ստեղծված (ի հակառակ բնականի) պաշարներին և ենթակառուցվածքներին, որոնք նախատեսված են աջակցելու մարդկության գործողություններին, ինչպիսիք են շինությունները, ճանապարհները, այգիները և այլ հարմարությունները:	Built environment The built environment refers to human-made (versus natural) resources and infrastructure designed to support human activity, such as buildings, roads, parks, and other amenities.
Լանդշաֆտային մոտեցում (Բնության պահպանության միջազգային միությունից՝ IUCN, և Համաշխարհային կենդանական աշխարհի հիմնադրամից՝ WWF) Լանդշաֆտային մոտեցումը մի համակարգ է, որտեղ կայացվում է լանդշաֆտի մակարդակով պահպանությանը վերաբերող	Landscape approach (from the International Union for Conservation of Nature – IUCN, and the World Wildlife Fund – WWF) The landscape approach is a framework for making landscape-level conservation decisions. The landscape approach helps to reach decisions about the advisability of particular interventions

որոշումներ: Լանդշաֆտային մոտեցումը նպաստում է որոշումներ կայացնելուն հատուկ միջամտությունների նպատակահարմարության մասին (ինչպիսիք են նոր ճանապարհ կամ տնկապատում), և հեշտացնելու ողջ լանդշաֆտի գործողությունների պլանավորումը, բանակցությունները և կիրառումը:	(such as a new road or plantation), and to facilitate the planning, negotiation and implementation of activities across a whole landscape.
Պատմական քաղաքային լանդշաֆտ (տես առաջարկության 9-րդ պարբերության սահմանումը)	Historic urban landscape (see definition in paragraph 9 of the Recommendation)
Միջավայր (ICOMOS-ի Սիան քաղաքում ընդունված հռչակագրից) Միջավայրը դա ժառանգության՝ կառույց, վայր կամ տարածք է և սահմանվում է որպես մոտակա և հեռու գտնվող տարածություն, որը կազմում է կարևոր և տարբերվող հատկանիշի մաս կամ նպաստում է ճանաչելիությանը:	Setting (from the ICOMOS Xi'an Declaration) The setting of a heritage structure, site or area is defined as the immediate and extended environment that is part of, or contributes to, its significance and distinctive character.
Մշակութային կարևորություն (ICOMOS-ի Ավստրիալիայի Բուռա խարտիայից) Մշակութային կարևորությունը նշանակում է գեղագիտական, պատմական, գիտական, սոցիալական կամ հոգևոր արժեք անցյալի, ներկայի կամ ապագայի սերունդների համար: Մշակութային կարևորությունը մարմնավորվում է հենց տեղանքում՝ իր կառուցվածքով, միջավայրով, կիրառմամբ, նշանակությամբ, գրառումներով, դրա հետ կապված վայրերով և առարկաներով: Վայրերը կարող են ունենալ մի շարք արժեքներ տարբեր անհատների և խմբերի համար:	Cultural significance (from the ICOMOS Australia Burra Charter) Cultural significance means aesthetic, historic, scientific, social or spiritual value for past, present or future generations. Cultural significance is embodied in the place itself, its fabric, setting, use, associations, meanings, records, related places and related objects. Places may have a range of values for different individuals or groups.
*- Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների	

բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով՝ ուրբանլաբ Երևան ՀԿ-ի միջոցով:

Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակներին՝ ուրբանլաբ Երևան ՀԿ-ին և ծրագրում ներգրավված անձանց, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:

Հաշվետվությունում արտահայտված մտքերի ամբողջական կամ մասնակի օգտագործումը թույլատրվում է պատշաճ հղման դեպքում միայն: Այն պետք է ունենա հետևյալ բովանդակությունը.

“Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման, վերլուծության և առաջարկությունների մշակման ծրագրի հաշվետվություն, ուրբանլաբ Երևան, Երևան, 2012”:

Հավելված 8	
Ոչ պաշտոնական թարգմանություն*	
Գլխավոր խորհրդաժողովի արձանագրություններ	Records of the General Conference
Քսաներորդ նստաշրջան Փարիզ, 24 հոկտեմբերի – 28 նոյեմբերի, 1978թ.	Twentieth Session Paris, 24 October to 28 November 1978
Գլուխ I	Volume I
Միավորված Ազգերի Կրթության, Գիտության և Մշակույթի Կազմակերպություն	United Nations Educational, Scientific and Cultural Organization
Ճարտարապետական և քաղաքաշինական միջազգային մրցույթների վերաբերյալ ստանդարտ կանոնակարգ	Standard regulations for international competitions in architecture and town planning
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	INTRODUCTION
Ընդունված կանոնակարգի նպատակն է սահմանել չափանիշեր, որոնց վրա հիմնված են միջազգային մրցույթները և որոնցով պետք է առաջնորդվեն կազմակերպիչները որևէ մրցույթ կազմակերպելու համար: Այդ չափանիշերը կազմվել են կազմակերպիչների և մասնակիցների շահերից ելնելով:	The purpose of these Standard Regulations is to state the principles upon which international competitions are based and by which promoters should be guided in organizing a competition. They have been drawn up in the interests of both promoters and competitors.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ	GENERAL PROVISIONS
Հոդված 1 “Միջազգային” անվանումը պետք է կիրառելի լինի ցանկացած մրցույթի համար, որտեղ մասնակցությունը բաց է տարբեր ազգությունների և տարբեր երկրներում բնակվող ճարտարապետների, քաղաքաշինարարների կամ ճարտարապետի, քաղաքաշինարարի կողմից ղեկավարվող մասնագետների խմբերի համար, ինչպես նաև տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների համար, ովքեր որևէ կապ ունեն նրանց հետ: Բոլոր ճարտարապետների,	Article 1 The designation “international” shall apply to any competition in which participation is open to architects, town planners or teams of specialists led by an architect or town planner who are of different nationalities and reside in different countries, as well as to members of other professions working in association with them. Competitions which are open to all architects, town planners and professionals working in association with them are termed “open”. These Regulations cover both open

Standard regulations for international competitions in architecture and town planning

քաղաքաշինարարների կամ նրանց հետ համագործակցող մասնագետների համար հասանելի մրցույթները կոչվում են “բաց”: Սույն կանոնակարգը վերաբերում է բաց և փակ (որտեղ որոշակի սահմանափակում է ներառված) մրցույթներին և երբեմն հատուկ մրցույթներին:	competitions and restricted competitions (where some form of restriction is imposed) and sometimes special competitions.
Հոդված 2 Միջազգային մրցույթները կարող են դասակարգվել որպես “նախագծային” կամ “գաղափարների” մրցույթներ:	Article 2 International competitions may be classified into “Project” or “Ideas” competitions.
Հոդված 3 Միջազգային մրցույթները կարող են կազմակերպվել մեկ կամ երկու փուլերով:	Article 3 International competitions may be organized in one or two stages.
Հոդված 4 Միջազգային մրցույթի կանոններն ու պայմանները պետք է լինեն նույնը մրցույթի բոլոր մասնակիցների համար:	Article 4 The regulations and conditions for an international competition shall be identical for all competitors.
Հոդված 5 Ցանկացած մրցույթի պայմանների ամբողջական փաթեթն ու կանոնակարգի պատճենը պետք է կազմել Ճարտարապետների միջազգային միության հետ համատեղ, (այսուհետ՝ ՃՄՄ, անգլերեն՝ UIA), և միաժամանակ անվճար հիմունքներով ուղարկել ՃՄՄ-ի բոլոր շահագրգիռ ազգային սեկցիաներին: Մրցույթի մասնակիցների հարցերի պատասխանները նույնպես պետք է ուղարկվեն ՃՄՄ-ին և ՃՄՄ-ի բոլոր ազգային սեկցիաներին:	Article 5 A copy of the regulations and full set of conditions for any competition shall be filed with the International Union of Architects, hereinafter referred to as the UIA, and sent free of charge at the same time to all the UIA National Sections concerned. The answers to competitors’ questions shall also be sent to the UIA and to all UIA National Sections.
Հոդված 6 Պայմանների ցանկացած փաթեթ, որը հրապարակված չէ Ճարտարապետների միջազգային միության պաշտոնական լեզուներից որևէ մեկով (անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն), պետք է ունենա թարգմանություն տվյալ լեզուներից գոնե մեկով: Նմանօրինակ թարգմանությունները պետք է հրապարակվեն բնագիր լեզվի տարբերակի հետ միաժամանակ: Մրցույթի մասնակիցներից չի պահանջվում ներկայացնել նյութը մեկից ավել ՃՄՄ-ի լեզվով:	Article 6 Any set of conditions which is not published in one of the official languages of the International Union of Architects (English, French, Russian and Spanish) shall be accompanied by a translation into at least one of these languages. Such translations shall be issued at the same time as the original language version. Competitors shall not be required to submit material in more than one UIA language.

Հոդված 7 Մրցույթի բոլոր մասնակիցների նախագծերը պետք է ներկայացվեն և քննարկվեն անանուն:	Article 7 All competitors' designs shall be submitted and judged anonymously.
Հոդված 8 Միջազգային մրցույթի մասին տեղեկությունը պետք է տարածվի կազմակերպչի և/կամ ՃՄՄ-ի գլխավոր քարտուղարության կողմից ազգային բոլոր սեկցիաների տեխնիկական ամսագրերում կամ տրամադրության տակ գտնվող այլ մամուլում հրապարակելու համար, հնարավորին չափ միաժամանակ, որպեսզի ցանկացողներին ժամանակին հնարավորություն տրվի դիմելու կանոնակարգի և պայմանների փաթեթի ձեռքբերման համար: Սույն հայտարարությունը պետք է սահմանի, թե որտեղ և ինչպես կարելի է ձեռք բերել պայմանների պատճենները և պետք է նշի, որ պայմանները արժանացել են ՃՄՄ-ի հավանությանը (տես՝ հոդված 15-ը):	Article 8 Notice of an international competition shall be issued by the promoter and/or the UIA Secretariat-General to all National Sections with a request for publication in technical journals or through other media at their disposal, as far as possible simultaneously, to enable those interested to apply for the regulations and full set of conditions in due time. This announcement shall state where and how copies of the conditions may be obtained and specify that the conditions have received UIA approval (see Article 15).
ՄԱՍՆԱԳԻՏԱՅՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ	PROFESSIONAL ADVISER
Հոդված 9 Կազմակերպիչը պետք է նշանակի մասնագիտացված խորհրդատու, նախընտրելի է ճարտարապետ (ով կարող է լինել քաղաքաշինարար քաղաքաշինական մրցույթի դեպքում) պայմանները սահմանելու և մրցույթի ընթացքը վերահսկելու համար:	Article 9 The promoter shall appoint a Professional Adviser, preferably an architect (but who could be a town planner in the case of a town-planning competition), to prepare the conditions and supervise the conduct of the competition.
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	DRAWING UP OF THE CONDITIONS
Հոդված 10 Միջազգային մրցույթների պայմանները, լինեն դրանք մեկ կամ երկու փուլից բաղկացած, բաց կամ փակ, պետք է պարզորոշ նշեն՝ (ա) մրցույթի նպատակը և կազմակերպչի նպատակները, (բ) լուծում պահանջող խնդրի առանձնահատկությունը, (գ) բոլոր պահանջները, որոնց պետք է համապատասխանեն մրցույթի մասնակիցները:	Article 10 The conditions for international competitions, whether single or two-stage, open or restricted, shall state clearly: (a) the purpose of the competition and the intentions of the promoter; (b) the nature of the problem to be solved; (c) all the practical requirements to be met by competitors.
Հոդված 11 Պայմանների մեջ անհրաժեշտ է հստակ	Article 11 A clear distinction shall be made in the

տարբերակել կարևորություն ունեցող պարտադիր պահանջները և մասնակցի ազատ արտահայտման իրավունքի պահանջները, որոնք պետք է լինեն հնարավորինս լայն: Մրցույթի բոլոր դիմումները պետք է ներկայացվեն կանոնակարգի համաձայն:	conditions between mandatory requirements of an essential nature and those which permit the competitor freedom of interpretation, which should be as wide as possible. All competition entries shall be submitted in conformity with the regulations.
Հոդված 12 Մասնակիցներին տրամադրված անհրաժեշտ հիմնական տեղեկատվությունը (սոցիալական, տնտեսական, տեխնիկական, աշխարհագրական, տեղագրական և այլն) պետք է լինի բնորոշ և թյուրըմբռնման տեղիք չտա: Ժյուրիի կողմից հաստատված հավելյալ տեղեկատվություն և ցուցումներ կարող են տրվել մրցույթի այն մասնակիցներին, ովքեր ընտրվել են շարունակելու երկու փուլից բաղկացած մրցույթի երկրորդ փուլը:	Article 12 The necessary background information supplied to competitors (social, economic, technical, geographical, topographical, etc.) must be specific and not open to misinterpretation. Supplementary information and instructions approved by the jury may be issued by the promoter to all competitors selected to proceed to the second stage of a two-stage competition.
Հոդված 13 Կանոնակարգը պետք է սահմանի փաստաթղթերի քանակը, տեսակը, մասշտաբը և չափերը, պահանջված գծագրերն ու մոդելները և սույն փաստաթղթերի, գծագրերի կամ մոդելների ընդունման կարգը: Արժեքի գնահատում պահանջելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել այն կանոնակարգի մեջ նշված չափորոշված ձևով:	Article 13 The regulations shall state the number, nature, scale and dimensions of the documents, plans or models required and the terms of acceptance of such documents, plans or models. Where an estimate of cost is required, this must be presented in standard form as set out in the regulations.
Հոդված 14 Որպես կանոն, միջազգային մրցույթի կազմակերպիչը պետք է կիրառի մետրիկ չափման համակարգը: Դրա բացակայության դեպքում մետրիկ չափմանը հավասարազոր համակարգը պետք է կցվի պայմաններին:	Article 14 As a general rule, the promoter of an international competition shall use the metric scale. Where this is not done the metric equivalent shall be annexed to the conditions.
ՃՄՄ-ի ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ	UIA APPROVAL,
Հոդված 15 Կազմակերպիչ կողմը պետք է ձեռք բերի ՃՄՄ-ի գրավոր համաձայնությունը մրցույթի պահանջների վերաբերյալ՝ ներառյալ ժամանակացույցը, գրանցման վճարը և ժյուրիի անդամագրությունը՝ նախքան մրցույթը ՃՄՄ-ի հովանու ներքո կազմակերպելու մասին	Article 15 The promoter must obtain the UIA's written approval of the requirements for a competition - including the timetable, registration fee and membership of the jury - before announcing that it is being held under UIA auspices.

հայտարարելը:	
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ	REGISTRATION OF COMPETITORS
Հոդված 16 Մրցույթի վերաբերյալ մանրամասն տվյալներ ստանալուն պես մրցույթի մասնակիցները պետք է գրանցվեն կազմակերպչի մոտ: Գրանցումը ենթադրում է մրցույթի համար սահմանված կանոնակարգի ընդունում:	Article 16 As soon as they have received details of the competition, competitors shall register with the promoter. Registration implies acceptance of the regulations for the competition.
Հոդված 17 Կազմակերպիչ կողմը պետք է տրամադրի մասնակիցներին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը նախագծերը պատրաստելու համար: Եթե այս փաստաթղթերի տրամադրումը պայմանական է՝ կախված երաշխիքային վճարից, եթե այլ կերպ սահմանված չէ, այս երաշխիքային գումարը պետք է վերադարձվի մասնակիցներին, ովքեր ներկայացնում են ամբողջական նախագիծ:	Article 17 The promoter shall issue to competitors all the necessary documentation for preparing their designs. Where the furnishing of such documentation is conditional on payment of a deposit, unless otherwise stated this deposit shall be returned to competitors who submit a bona fide design.
Հոդված 18 Երկու փուլից բաղկացած մրցույթում երկրորդ փուլ անցած մասնակիցների անունները պետք է հրապարակվեն միայն հատուկ պայմանների համաձայն, որոնք պետք է համաձայնեցվեն ժյուրիի կողմից նախքան մրցույթի հայտարարումը:	Article 18 The names of those competitors selected to proceed to the second stage of a two-stage competition shall be made public only under exceptional conditions to be agreed on by the jury before the launching of the competition.
ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ, ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԵՎ ՀՈՆՈՐԱՐ	PRIZE -MONEY, COMPENSATION AND HONORARIA
Հոդված 19 Ցանկացած մրցույթի կանոնակարգի մեջ պետք է սահմանված լինի մրցանակների քանակը և դրամական պարգևատրումների չափը: Այն պետք է կապված լինի նախագծի չափի, մասնակիցների համար ներառված աշխատանքի չափի և նրանց կողմից առաջացած ծախսերի հետ:	Article 19 The regulations for any competition must state the number of prizes and the amount of prize-money. This must be related to the size of the project, the amount of work involved for competitors and the resulting expenses incurred by them.
Հոդված 20 Քաղաքաշինական մրցույթները առանձնանում են որպես գաղափարային մրցույթներ, քանի որ աշխատանքը հիմնականում իրականացվում է	Article 20 Town-planning competitions are, by their nature, ideas competitions, since the work is generally carried out by official bodies,

պաշտոնական մարմինների կողմից՝ հաճախ երկարաժամկետ հիմունքներով: Այդ պատճառով հատկապես կարևոր է, որ կազմակերպիչ կողմը շնորհի համապատասխան դրամական պարգևատրում փոխհատուցելու մրցույթի մասնակիցներին իրենց գաղափարների և կատարած աշխատանքի համար:	frequently on a long-term basis. It is therefore particularly important for the promoter to allot adequate prize-money to recompense competitors for their ideas and the work they have done.
Հոդված 21 Կազմակերպիչ կողմը պարտավորվում է ընդունել ժյուրիի որոշումները և վճարել դրամական պարգևատրումը մրցույթի արդյունքների հրապարակումից մեկ ամսվա ընթացքում:	Article 21 The promoter undertakes to accept the decisions of the jury and to pay the prize-money within one month of the announcement of the competition results.
Հոդված 22 Մրցույթին հրավիրված յուրաքանչյուր մասնակից պետք է ստանա որևէ հոնորար շնորհված պարգևատրումների հետ միասին:	Article 22 Each participant in a competition by invitation shall receive an honorarium in addition to the prizes awarded.
Հոդված 23 Երկու փուլից բաղկացած մրցույթների ժամանակ երկրորդ փուլ անցած մասնակիցները պետք է ստանան համապատասխան հոնորար: Երկրորդ փուլում իրականացված լրացուցիչ աշխատանքի համար փոխհատուցման գումարը պետք է նշվի մրցույթի կանոնակարգի մեջ և պետք է լինի ի հավելումն շնորհված պարգևատրումների:	Article 23 In two-stage competitions, a reasonable honorarium shall be paid to each of the competitors selected to take part in the second stage. This sum, which is intended to reimburse them for the additional work carried out in the second stage, shall be stated in the regulations for the competition and shall be in addition to the prizes awarded.
Հոդված 24 Կանոնակարգի մեջ պետք է հստակորեն նշվի, թե կազմակերպիչը որտեղ է կիրառելու մրցույթում հաղթող նախագիծը: Նախագծերը չեն կարող օգտագործվել այլ նպատակների համար կամ փոփոխության ենթարկվել, բացառությամբ հեղինակի համաձայնության առկայության դեպքում:	Article 24 The regulations shall state the exact use to which the promoter will put the winning design. Designs may not be put to any other use or altered in any way except by agreement with the author.
Հոդված 25 Նախագծային մրցույթներում առաջին մրցանակի պարգևատրումը պարտավորեցնում է կազմակերպիչ կողմին վստահելու նախագծի հեղինակին: Եթե հաղթողը չի կարողանում բավարարել ժյուրիին՝ աշխատանքն	Article 25 In project competitions the award of first prize to a design places the promoter under the obligation to entrust the author of the design with the commission for the project. If the winner is unable to satisfy the jury of his

իրականացնելու իր կարողությամբ, ժյուրին կարող է պահանջել նրան համագործակցելու իր ընտրությամբ որևէ ճարտարապետի կամ քաղաքաշինարարի հետ՝ ժյուրիի և կազմակերպիչ կողմի հավանությամբ:	ability to carry out the work, the jury may require him to collaborate with another architect or town planner of his choice approved by the jury and the promoter.
Հոդված 26 Նախագծային մրցույթներում կանոնակարգի մեջ պետք է սահմանել դրույթ առ այն, որ առաջին տեղի մրցանակակիրը պետք է ստանա հետագա փոխհատուցում առաջին տեղի գումարի չափով, եթե ժյուրիի պարզևատրման հրապարակումից հետո քսանչորս ամիսների ընթացքում չի կնքվել ոչ մի պայմանագիր: Փոխհատուցելով առաջին մրցանակակիրին՝ կազմակերպիչ կողմը չի ստանում իրավունք իրականացնելու նախագիծը, բացառությամբ հեղինակի համագործակցությամբ:	Article 26 In project competitions provision shall be made in the regulations for the competition for the first prize winner to receive as compensation a further sum equal to the amount of the first prize if no contract for carrying out the project has been signed within twenty-four months of the announcement of the jury's award. In so compensating the first prize winner the promoter does not acquire the right to carry out the project except with the collaboration of its author.
Հոդված 27 Գաղափարական մրցույթներում կազմակերպիչ կողմը, եթե մտադիր է կիրառելու հաղթող կամ մեկ այլ նախագիծ ամբողջությամբ կամ մասնակի, հնարավորության դեպքում պետք է հաշվի առնի տվյալ նախագծի հեղինակի հետ որևէ կերպ համագործակցելը: Համագործակցության պայմանները պետք է ընդունվեն հեղինակի կողմից:	Article 27 In ideas competitions the promoter, if he intends to make use of all or part of the winning or any other scheme, shall, wherever possible, consider some form of collaboration with its author. The terms of collaboration must be acceptable to the latter.
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	INSURANCE
Հոդված 28 Կազմակերպիչ կողմը պետք է ապահովագրի մրցույթի մասնակցի նախագծերը սկսած այն պահից, երբ նա ստանձնում է պատասխանատվություն: Այս ապահովագրության գումարը պետք է նշվի կանոնակարգում:	Article 28 The promoter shall insure competitors' designs from the time when he assumes responsibility for them and for the duration of his responsibility. The amount of such insurance will be stated in the regulations.
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	COPYRIGHT AND RIGHT OF OWNERSHIP
Հոդված 29 Նախագծի հեղինակը պետք է պահպանի իր աշխատանքի հեղինակային իրավունքը, ոչ մի	Article 29 The author of any design shall retain the copyright of his work; no alterations may be

փոփոխություն չի կարող իրականացվել առանց նրա պաշտոնական համաձայնության:	made without his formal consent.
Հոդված 30 Առաջին մրցանակի արժանացած նախագիծը կարող է օգտագործվել միայն կազմակերպչի կողմից սկսած այն պահից, երբ կազմակերպիչը հանձնարարում է հեղինակին իրականացնել նախագիծը: Որևէ այլ նախագիծ, անկախ նրանից, թե շնորհվել է առաջին մրցանակ կամ ոչ, կազմակերպչի կողմից չի կարող օգտագործվել ամբողջությամբ կամ մասնակի, բացառությամբ հեղինակի համաձայնության առակայության դեպքում:	Article 30 The design awarded first prize can only be used by the promoter upon his commissioning the author to carry out the project. No other design, whether it has been awarded a prize or not, may be used wholly or in part by the promoter except by agreement with the author.
Հոդված 31 Որպես կանոն, կազմակերպիչ կողմի՝ նախագծի նկատմամբ սեփականության իրավունքը ընդգրկում է միայն մեկ գործողություն: Այնուամենայնիվ, մրցույթի կանոնակարգը կարող է նախատեսել դրույթ կրկնվող աշխատանքի համար և նշել պայմանները:	Article 31 As a general rule, the promoter's right of ownership on a design covers one execution only. However, the regulations for the competition may provide for repetitive work and specify the terms thereof.
Հոդված 32 Ամեն դեպքում, եթե այլ կերպ նախատեսված չէ կանոնակարգով, նախագծի հեղինակը պետք է պաշտպանի վերարտադրման իրավունքը:	Article 32 In all cases, unless otherwise stated in the regulations, the author of any design shall retain the right of reproduction.
ԺՅՈՒՐԻ	THE JURY
Հոդված 33 Ժյուրիի կազմը պետք է նշանակվի նախքան մրցույթը սկսելը: Ժյուրիի անդամների և պահեստային անդամների անունները պետք է ընդգրկվեն մրցույթի կանոնակարգում:	Article 33 The jury shall be set up before the opening of the competition. The names of members and reserve members of the jury shall be listed in the regulations for the competition.
Հոդված 34 Որպես կանոն, ժյուրիի անդամները նշանակվում են կազմակերպչի կողմից ՃՄՄ-ի հավանությամբ: ՃՄՄ-ն պետք է աջակցի կազմակերպիչներին ժյուրիի անդամների ընտրության հարցում:	Article 34 As a general rule the members of the jury are appointed by the promoter after approval by the UIA. The UIA shall assist promoters in the selection of jury members.
Հոդված 35 Ժյուրին պետք է կազմված լինի տարբեր	Article 35 The jury shall be composed of the smallest

ազգություններ ունեցող նվազագույն անհրաժեշտ քանակությամբ անձանցից, և ցանկացած իրադարձության համար ժյուրիի կազմը պետք է բաղկացած լինի կենտ թվով անձանցից ու չպետք է գերազանցի յոթը: Նրանց մեծամասնությունը պետք է լինեն անկախ ճարտարապետներ, քաղաքաշինարարներ կամ, հատուկ դեպքերում, նրանց հետ համագործակցող այլ մասնագետներ:	reasonable number of persons of different nationalities, and in any event should be an odd number and should not exceed seven. The majority of them shall be independent architects, town planners or, in special circumstances, other professionals working in association with them.
Հոդված 36 Նվազագույնը ժյուրիի մեկ անդամ պետք է նշանակվի ՃՄՄ-ի կողմից և պետք է նշվի մրցույթի կանոնակարգի մեջ:	Article 36 At least, one member of the jury shall be appointed by the UIA and this should be stated in the regulations for the competition.
Հոդված 31 Կարևոր է, որ ժյուրիի բոլոր ամբողջական անդամները՝ այսինքն՝ քվեարկող, և պահեստային անդամները՝ այսինքն՝ չքվեարկող, ներկա լինեն ժյուրիի բոլոր հանդիպումների ժամանակ:	Article 31 It is essential that all full - i.e. voting - and reserve - i.e. non-voting - members of the jury be present throughout all meetings of the jury.
Հոդված 36 Եթե ժյուրիի քվեարկող անդամը բաց է թողնում առաջին հանդիպումը, չքվեարկող անդամը պետք է ստանա քվեի իրավունք որոշում կայացնելու համար: Եթե, որևէ պատճառով, ժյուրիի քվեարկող անդամը ստիպված է բացակայել կարճ ժամանակով, չքվեարկող անդամը պետք է ստանա քվեի իրավունք այդ ժամանակահատվածի համար և որևէ կայացված որոշում պետք է լինի պարտավորեցնող: Եթե ժյուրիի քվեարկող անդամը բացակայում է երկար ժամանակով կամ հեռանում է նախքան որոշում կայացնելը, չքվեարկող անդամը պետք է ստանձնի նրա որոշում կայացնելու քվեն մնացած ժամանակահատվածի ընթացքում:	Article 36 If a voting jury member misses the first meeting, a non-voting member shall acquire his vote for the whole period of adjudication. If, for any reason, a voting jury member has to absent himself for a brief period of time, a non-voting member shall acquire his vote for that period and any decision taken shall be binding. If a voting jury member is absent for a prolonged period or leaves before the conclusion of the adjudication, his vote shall be acquired by a nonvoting member for the remainder of the period of adjudication.
Հոդված 39 Ժյուրիի յուրաքանչյուր անդամ պետք է հաստատի մրցույթի կանոնակարգն ու պայմանները նախքան դրանք մասնակիցներին տրամադրելը:	Article 39 Each member of the jury shall approve the regulations and conditions for the competition before they are made available to competitors.
Հոդված 40	Article 40

Մրցույթի ժյուրիի ոչ մի անդամ չպետք է ունենա ուղղակի կամ անուղղակի մասնակցություն տվյալ մրցույթին, կամ չպետք է կրի ուղղակի կամ անուղղակի պատասխանատվություն մրցույթի նյութի իրականացման հետ կապված:	No member of the jury for a competition shall take part, either directly or indirectly, in that competition, or be entrusted either directly or indirectly with a commission connected with the carrying out of the object of the competition.
Հոդված 41 Կազմակերպիչ կողմի ոչ մի անդամ, օգնական կամ աշխատակից, կամ որևէ անձ, ով որևէ կերպ կապ է ունեցել մրցույթի կազմակերպման հետ, չունի իրավունք մասնակցելու մրցույթին կամ աջակցելու որևէ մասնակցի:	Article 41 No member of the promoting body, nor any associate or employee, nor any person who has been concerned with the preparation or organization of the competition, shall be eligible to compete or assist a competitor.
Հոդված 42 Ժյուրիի որոշումները պետք է կայացվեն մեծամասնության քվեարկությամբ՝ յուրաքանչյուր ներկայացված նախագծի համար առանձին քվեով: Հավասար ձայների դեպքում հանձնաժողովի նախագահը պետք է ունենա վճռական ձայնի իրավունք: Մրցանակների ցուցակը, ինչպես նաև կազմակերպիչ կողմին ուղղված ժյուրիի հաշվետվությունը, պետք է ստորագրվի ժյուրիի բոլոր անդամների կողմից նախքան դրանց տարածումը և սույն փաստաթղթի մեկ օրինակը պետք է ուղարկվի ՀՄՄ-ին:	Article 42 The decisions of the jury shall be taken by a majority vote, with a separate vote on each design submitted. In the event of a tied vote, the Chairman shall have the casting vote. The list of awards, as well as the jury's report to the promoter, shall be signed by all members of the jury before they disperse and one copy of this document shall be sent to the UIA.
Հոդված 43 Երկու փուլից բաղկացած մրցույթներում նույն ժյուրին պետք է դատի մրցույթի երկու փուլերը: Մեկ փուլից բաղկացած մրցույթը՝ հաստատված ՀՄՄ-ի կողմից, ոչ մի դեպքում չի կարող անցնել երկրորդ փուլի իրականացմանը, բացառությամբ այն դեպքում, եթե ՀՄՄ-ն հաստատում է ընդգրկված մասնակիցներին հոնորար վճարելու պայմաններն ու միջոցները ի հավելումն առաջին մրցույթի համար նախատեսված դրամական պարգևատրմանը: Նմանատիպ լրացուցիչ մրցույթի իրականացման դեպքում առաջին մրցույթին նշանակված ժյուրին պետք է վերանշանակվի կազմակերպչի կողմից:	Article 43 In two-stage competitions, the same jury should judge both stages of the competition. In no case may a competition which has received UIA approval as a single-stage competition proceed to a second stage except with UIA approval of the conditions and the arrangements for payment of honoraria to the competitors involved, over and above the prize-money provided for in the original competition. In the event of such a secondary competition taking place, the jury appointed for the original competition must be reappointed by the promoter.
Հոդված 44 Կանոնակարգով չպահանջվող որևէ գծագիր,	Article 44 Any drawings, photographs, models or other

նկար, նմուշ կամ այլ փաստաթուղթ պետք է բացառվի ժյուրիի կողմից նախքան մասնակցի գրանցումը:	documents not required under the regulations shall be excluded by the jury before it examines a competitor's entry.
Հոդված 45 Ժյուրին պետք է որակագրկի ցանկացած նախագիծ, որը չի համապատասխանում մրցույթի պարտադիր պահանջներին, ցուցումներին կամ կանոնակարգին:	Article 45 The jury shall disqualify any design which does not conform to the mandatory requirements, instructions or regulations for the competition.
Հոդված 46 Ժյուրին պետք է սահմանի մրցանակներ: Մրցանակները պետք է լինեն վերջնական և պետք է հրապարակվեն ՃՄՄ-ի հետ համաձայնեցված ամսաթվին և պետք է ներկայացվեն մրցույթի պայմաններում: Մրցանակները բաշխելու ժամանակ ժյուրին պետք է ամբողջությամբ օգտագործի մրցույթի պայմաններում ընդգրկված մրցանակների համար նախատեսված գումարը:	Article 46 The jury must make awards. The awards shall be final and shall be made public by a date agreed on with UIA and stated in the conditions. The jury, when distributing the awards, shall make full use of the amount set aside for prizes in the competition conditions. In an ideas competition, a first prize shall be awarded.
Հոդված 47 Կազմակերպիչ կողմը պետք է ստանձնի ժյուրիի անդամների վարձատրության, ճանապարհորդական և գործուղման ծախսերի պատասխանատվությունը:	Article 47 The fees and travel and subsistence expenses of jury members shall be paid by the promoter.
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ	EXHIBITION OF ENTRIES
Հոդված 48 Բոլոր նախագծերը, ներառյալ ժյուրիի կողմից որակագրկվածները, որպես կանոն, պետք է ցուցադրվեն նվազագույնը երկու շաբաթ ժյուրիի կողմից ստորագրված զեկուցագրի օրինակի հետ միասին: Ցուցադրությունը պետք է լինի բաց և անվճար հանրության համար:	Article 48 All designs, including those disqualified by the jury, shall be exhibited, as a general rule, for at least two weeks, together with a copy of the signed report of the jury. The exhibition shall be open to the public free of charge.
Հոդված 49 Կազմակերպիչ կողմը պետք է տեղեկացնի մրցույթի մասնակիցներին հանրային ցուցադրության ամսաթվի, վայրի և մրցույթի արդյունքների մասին և պետք է ուղարկի նրանց ժյուրիի զեկուցագրի պատճենը: Նա նաև պետք է տեղեկացնի այդ մասին ՃՄՄ-ին և բոլոր ազգային սեկցիաներին: Մրցանակակիր	Article 49 The promoter shall notify registered competitors in good time of the date and place of the public exhibition and of the results of the competition, and send them a copy of the jury's report. He shall similarly inform the UIA and all National Sections. Photographs of the prize-winning designs

նախագծերի նկարները պետք է ուղարկվեն ՃՄՄ-ին հրապարակման հնարավոր ձևաչափով:	shall be sent to the UIA with a view to possible publication.
Հոդված 50 Երկու փուլից բաղկացած մրցույթներում առաջին փուլի ժամանակ ներկայացված նախագծերը պետք է գաղտնի պահվեն մինչև վերջնական արդյունքների հայտարարումը:	Article 50 In two-stage competitions, designs submitted in the first stage shall be kept secret until the final results are announced.
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ	RETURN OF DESIGNS
Հոդված 51 Բոլոր նախագծերն ու գծագրերը, բացի նրանցից, որոնք արժանացել են մրցանակների կամ գնվել և պահպանվել են կազմակերպչի կողմից, պետք է ոչնչացվեն հանրային ցուցադրության ավարտից հետո, բացառությամբ եթե մրցույթի կանոնակարգի մեջ հակառակ դրույթ է սահմանվել: Նմուշների անհրաժեշտության դեպքում դրանք կվերադարձվեն հեղինակին կազմակերպչի միջոցներով հանրային ցուցադրման ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում:	Article 51 All drawings and plans, other than those which have received prizes or been purchased and are retained by the promoter, shall be destroyed at the end of the public exhibition, unless provision is made to the contrary in the regulations for the competition. Where models are required, these will be returned to their author at the expense of the promoter within one month of the close of the public exhibition.
*- Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով՝ ուրբանլաբ Երևան ՀԿ-ի միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակներին՝ ուրբանլաբ Երևան ՀԿ-ին և ծրագրում ներգրավված անձանց, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ: Հաշվետվությունում արտահայտված մտքերի ամբողջական կամ մասնակի օգտագործումը թույլատրվում է պատշաճ հղման դեպքում միայն: Այն պետք է ունենա հետևյալ բովանդակությունը. “Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանն առնչվող օրենսդրական հենքի ուսումնասիրման, վերլուծության և առաջարկությունների մշակման ծրագրի հաշվետվություն, ուրբանլաբ Երևան, Երևան, 2012”:	